

ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՄԱՆԱՍՅԱՆ ՀԱՅԿ ՄԱՔՍԻՄԻ

ՀՀ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՄԻԳՐԱՑԻԱՅԻ
ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ

ԻԴ.03.01 «Աշխարհագրություն» մասնագիտությամբ աշխարհագրական
գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման

Գիտական ղեկավար՝
աշխ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր՝ Ա.Ռ. ԱՎԱԳՅԱՆ

ԵՐԵՎԱՆ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ	4
ԳԼՈՒԽ 1. ՀՀ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՄԻԳՐԱՑԻԱՅԻ ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՏԵՍԱԿԱՆ ԵՎ ՄԵԹՈԴԱԲԱՆԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԸ	10
1.1 Բնակչության միգրացիայի հետազոտության տեսական և մեթոդաբանական հարցերը	10
1.2 ՀՀ բնակչության միգրացիայի աշխարհագրական ուսումնասիրության հիմնահարցերը	16
ԳԼՈՒԽ 2. ՀՀ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԱՐՏԱՔԻՆ ՄԻԳՐԱՑԻԱՅԻ ՄԱՍՇՏԱԲՆԵՐԸ, ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ՊԱՏՃԱՌՆԵՐԸ	27
2.1 Միգրացիայի դերը Հայաստանի բնակչության թվի ձևավորման գործում	27
2.2 ՀՀ բնակչության միգրացիոն հոսքերի ձևավորման սոցիալ-տնտեսական պայմանների վերլուծությունը	32
2.3 ՀՀ բնակչության արտաքին միգրացիայի մասշտաբները.....	39
2.4 ՀՀ բնակչության միգրացիոն տրամադրվածությունների ձևավորման սոցիալ-աշխարհագրական վերլուծությունը.....	50
ԳԼՈՒԽ 3. ՀՀ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՄԻԳՐԱՑԻՈՆ ՏԵՂԱՇԱՐԺԵՐԻ ՏԱՐԱԾԱԺԱՄԱՆԱԿԱՅԻՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ	63
3.1 Բնակչության ներքին միգրացիոն տեղաշարժերը խորհրդային և հետխորհրդային անցումային տարիներին.....	63
3.2 ՀՀ բնակչության արդի միգրացիոն տեղաշարժերի աշխարհագրական առանձնահատկությունները.....	76
3.2.1 ՀՀ քաղաքային և գյուղական բնակչության միգրացիաների արդի միտումները.....	76
3.2.2. Երևան քաղաքի և նրա հարակից գոտու քաղաքային և գյուղական բնակչության միգրացիայի տարածաժամանակային վերլուծությունը	82
3.2.3 ՀՀ ծայրամասային գոտու քաղաքային և գյուղական բնակչության միգրացիայի տարածաժամանակային վերլուծությունը.....	88

3.3 ՀՀ բնակչության միգրացիոն տրամադրվածությունները ձևավորող տեղական գործոններն ու հիմնախնդիրները	99
ԳԼՈՒԽ 4. ՀՀ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՄԻԳՐԱՑԻԱՅԻ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ-ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԸ, ԿԱՆԽԱՏԵՍՄԱՆ ԵՎ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՀԻՄՆԱԶԱՐՑԵՐԸ	106
4.1 ՀՀ բնակչության միգրացիայի և տարաբնակեցման փոխադարձ կապերի վերլուծությունը	106
4.2 ՀՀ բնակչության միգրացիայի սոցիալ-տնտեսաաշխարհագրական հետևանքները	114
4.3 ՀՀ բնակչության միգրացիայի ժողովրդագրաաշխարհագրական հետևանքները	119
4.4 ՀՀ բնակչության միգրացիայի քաղաքաաշխարհագրական, Էթնո-աշխարհագրական և մշակութաաշխարհագրական հետևանքները	125
4,5 ՀՀ բնակչության միգրացիայի կանխատեսման և կարգավորման հիմնահարցերը.....	13
2	
ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ	144
ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ	148
ՀԱՎԵԼՎԱԾ	

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Թեմայի արդիականությունը: Արդի դարաշրջանում բնակչության միգրացիաները զանգվածային բնույթ են կրում և պատճառահետևանքային բազմակողմանի փոխադարձ կապերի մեջ են գտնվում հասարակական կյանքի տարբեր ոլորտներում տեղի ունեցող տնտեսական, սոցիալ-ժողովրդագրական, քաղաքական և էթնո-մշակութային գործընթացների հետ: Դրանով է բացատրվում, որ բնակչության միգրացիայի առանձին կողմերի ուսումնասիրությամբ զբաղվում են բազմաթիվ գիտություններ, որոնց համակարգում առանձնահատուկ տեղ է գրավում աշխարհագրությունը՝ մասնավորապես հասարակական աշխարհագրությունը: Դա բացատրվում է հետևյալ երկու հանգամանքներով. **ա)** բնակչության միգրացիան սոցիալ-տարածական երևույթ է և զգալի ազդեցություն է թողնում հասարակության տարածքային կազմակերպման վրա, **բ)** բնակչության միգրացիան համալիրային երևույթ է, և, նկատի ունենալով աշխարհագրական հետազոտության ինտեգրալ ներուժն ու համակարգային բնույթը, աշխարհագրությունն այլ գիտությունների համեմատ ավելի պատրաստ է իրականացնելու միգրացիայի բազմակողմանի և փոխկապակցված տարածաժամանակային և համալիրային ուսումնասիրություններ:

Բնակչության միգրացիայի մասշտաբներն ավելի մեծ են լինում և դրանց ազդեցությունն ու հետևանքներն առավել ցայտուն են դրսևորվում այն երկրներում ու տարածաշրջաններում, որտեղ վերջին երկու-երեք տասնամյակներին հասարակական կյանքի տարբեր ոլորտներում տեղի են ունեցել համակարգային և արմատական փոփոխություններ: Այդպիսի երկրների թվին է պատկանում նաև Հայաստանի Հանրապետությունը (ՀՀ), որտեղ անկախացումից հետո տեղի ունեցած քաղաքական, տնտեսական և սոցիալ-ժողովրդագրական տեղաշարժերն առաջացրել են բնակչության արտագաղթի մեծ ալիքներ: Այդ ամենի արդյունքում երկրից արտագաղթում է տարեկան միջին հաշվով բնակչության 1,5-2%-ը:

Ներկայումս հրատապ են դարձել ՀՀ բնակչության միգրացիայի աշխարհագրական ուսումնասիրությունները, որը պայմանավորված է այն հանգամանքով, որ բնակչության արտաքին և ներքին միգրացիոն տեղաշարժերը պատճառահետևանքային կապերի մեջ են գտնվում հասարակական կյանքի տարբեր ոլորտներում տեղի ունեցող գործընթացների

հետ և շարունակում են զգալի ազդեցություն թողնել տնտեսության զարգացման և տարածքային կազմակերպման վրա: ՀՀ բնակչության միգրացիայի առաջացրած սոցիալ-տնտեսաաշխարհագրական բազմաբնույթ հիմնախնդիրները ՀՀ ռազմավարական անվտանգային շահերի տեսանկյունից էապես մեծացնում են մարզերի և համայնքների բնակչության արդի միգրացիոն տեղաշարժերի տարածաժամանակային և համալիրային բազմակողմանի ուսումնասիրությունների իրականացման անհրաժեշտությունն ու հրատապությունը:

Հետազոտության նպատակը:

Հետազոտության նպատակն է կատարել ՀՀ բնակչության միգրացիայի համալիրային և տարածաժամանակային աշխարհագրական վերլուծություն, բացահայտել և գնահատել միգրացիոն տեղաշարժերի արդի վիճակը, պատճառահետևանքային կապերը և ազդեցությունը հասարակական կյանքի տարբեր ոլորտների զարգացման և տարածքային կազմակերպման վրա:

Հետազոտության նպատակին հասնելու համար մեր առջև դրել ենք հետևյալ հետազոտական խնդիրները:

1. Վերլուծել և ընդհանրացնել բնակչության միգրացիայի աշխարհագրական հետազոտության արդի տեսական գաղափարներն ու մեթոդաբանական մոտեցումները, փորձել դրանց օգտագործմամբ մշակել ՀՀ բնակչության միգրացիայի աշխարհագրական հետազոտությունների հիմնական ուղղությունները, մակարդակները, մեթոդներն ու մոտեցումները:

2. Բացահայտել ՀՀ բնակչության արդի միգրացիոն հոսքերի ձևավորման քաղաքական, տնտեսական, սոցիալ-ժողովրդագրական և էթնո-մշակութային գործոններն ու պայմանները, պարզել դրանց կապը միգրացիայի տարածաժամանակային փոփոխությունների հետ:

3. Վեր հանել միգրացիայի տարածաշրջանային առանձնահատկությունները, պարզել տարբեր տիպի և մեծության բնակավայրերի բնակչության միգրացիոն տրամադրվածությունները, դրանք առաջացնող համապետական և համայնքային գործոններն ու հիմնախնդիրները:

4. Բացահայտել բնակչության միգրացիայի և տարաբնակեցման փոխադարձ կապերը, առանձնացնել միգրացիոն առումով առավել խոցելի տարաբնակեցման կենտրոններն ու բնակավայրերի տիպերը:

5. Վերլուծել միգրացիայի տնտեսական, սոցիալ-ժողովրդագրական, քաղաքական և էթնո-մշակութային տարածաշրջանային հետևանքներն ու հիմնախնդիրները, կանխատեսումներ անել միգրացիայի հնարավոր մասշտաբների և ուղղությունների վերաբերյալ:

6. Գիտականորեն հիմնավորված առաջարկություններ անել ՀՀ բնակչության միգրացիայի կարգավորմանն ուղղված պետական քաղաքականության մշակման և իրականացման ժամանակ աշխարհագրական գործոնների հաշվառման ուղղությամբ:

Հետազոտության օբյեկտն ու առարկան: Հետազոտության օբյեկտը ՀՀ բնակչության ժամանակակից արտաքին և ներքին միգրացիոն տեղաշարժերն են, իսկ հետազոտության առարկան՝ ՀՀ բնակչության միգրացիաների տարածաժամանակային փոփոխություններն ու առանձնահատկությունները, հասարակական կյանքի տարբեր ոլորտների տարածքային կազմակերպման հետ ունեցած փոխադարձ կապերը:

Հետազոտության տեսական և մեթոդաբանական հիմքը: Ատենախոսության համար տեսական և մեթոդաբանական հիմք են հանդիսացել բնակչության միգրացիայի վերաբերյալ առկա տեսական գաղափարներն ու մեթոդաբանական մոտեցումները, հայ և արտասահմանյան գիտնականների աշխատանքները:

Որպես տեղեկատվական հիմք են ծառայել ՀՀ Ազգային վիճակագրական ծառայության, ՀՀ Միգրացիայի պետական ծառայության, ՀՀ Կենտրոնական բանկի, միջազգային և տեղական կազմակերպությունների կողմից իրականացված մշակումներն ու հետազոտությունները, պաշտոնական տեղեկատվությունները, ինչպես նաև մեր կողմից կատարված սոցիալ-աշխարհագրական դաշտային հետազոտության արդյունքները:

Հետազոտության ընթացքում կիրառվել են վերլուծության և համադրման, համեմատաաշխարհագրական, արտարկման, մաթեմատիկական, վիճակագրական, սոցիոլոգիական, քարտեզագրական մեթոդներ և համալիրային, տիպաբանական, տարածական, տարածաժամանակային, հիմնախնդիրային մոտեցումներ:

Հետազոտության գիտական նորույթը:

1. Առաջին անգամ համադրելով տարածաժամանակային և համալիրային մոտեցումները՝ իրականացվել է ՀՀ բնակչության ժամանակակից միգրացիայի համակողմանի հասարակական-աշխարհագրական ուսումնասիրություն:

2. Բացահայտվել են բնակչության արտաքին միգրացիայի փուլերը, արդի միտումներն ու տարածաշրջանային առանձնահատկությունները, դրանց կապերը քաղաքական, տնտեսական և սոցիալ-ժողովրդագրական գործընթացների հետ:

3. Անկախության բոլոր տարիների համար մեր կողմից հաշվարկված ՀՀ մարզերի, բոլոր քաղաքների և նախկին վարչական շրջանների (ՆՎՇ) գյուղական բնակչության միգրացիայի սալոյի (ՄՍ) ցուցանիշներով առանձնացրել ենք դրանց խմբերն ու տարածաշրջանային տիպերը:

4. Բացահայտվել են ՀՀ մարզերի, տարբեր մեծության և տեղադիրք ունեցող բնակավայրերի բնակչության միգրացիոն տրամադրվածությունները, դրանց ձևավորման տեղական-համայնքային և համապետական գործոններն ու հիմնախնդիրները, միգրացիոն հնարավոր տեղաշարժերի աշխարհագրական նախապատվությունները:

5. Բացահայտվել են ՀՀ բնակչության միգրացիայի տարածաշրջանային քաղաքական, տնտեսական և սոցիալ-ժողովրդագրական հետևանքներն ու հիմնախնդիրները, առանձնացվել են միգրացիոն տեսանկյունից առավել խոցելի քաղաքներն ու տարաբնակեցման կենտրոնները:

6. Կանխատեսումներ են արվել ՀՀ և նրա մարզերի միգրացիոն գործընթացների սպասվող միտումների վերաբերյալ, առաջարկություններ են արվել միգրացիայի պետական կարգավորման ուղիների ու առաջնահերթությունների որոշման դեպքում տարածաշրջանային առանձնահատկությունների և պայմանների հաշվառման վերաբերյալ:

Պաշտպանվող հիմնադրույթները:

1. Հաստատվել է միգրացիայի տարածաժամանակային օրինաչափությունների կապը տնտեսական, քաղաքական և սոցիալ-ժողովրդագրական տարբեր գործընթացների հետ:

2. Հիմնավորվել է անկախության տարիներին տարածության և ժամանակի մեջ Հայաստանի բնակչության արտաքին միգրացիայի բացասական սալոյոյի համընդհանուր և համատարած բնույթը:

3. Սոցիալ-աշխարհագրական հետազոտություններով հիմնավորվել են ՀՀ մարզերի, տարբեր տեղադիրքի և մեծության քաղաքային և գյուղական բնակավայրերի բնակչության միգրացիոն բարձր տրամադրվածությունները, դրանց ձևավորման պայմանների և միգրացիոն նախապատվությունների տարածքային տարբերությունները:

4. Հիմնավորվել է, որ ՀՀ տարաբնակեցման համակարգի կառուցվածքային և տարածական տեղաշարժերն ավելի շատ պայմանավորված են արտաքին, քան թե ներքին միգրացիոն տեղաշարժերով:

5. Հաստատվել են խորհրդային տարիների համեմատությամբ անկախության տարիներին բնակչության ներքին միգրացիաների ոչ մեծ մասշտաբները, դրանց միակենտրոն բնույթն ու աննշան դերը ուրբանիզացման գործընթացներում:

Կիրառական նշանակությունը: Ստացված փաստական նյութերը, մեթոդաբանական մոտեցումները և հետազոտության արդյունքները կարող են գիտական հիմք հանդիսանալ ՀՀ Միգրացիայի պետական ծառայության համար՝ ՀՀ բնակչության միգրացիայի արդի իրավիճակը գնահատելու և կարգավորման արդյունավետ քաղաքականություն մշակելու գործում, ինչպես նաև կարող են օգտագործվել ՀՀ տարածքային կառավարման նախարարության կողմից ՀՀ տարածքային զարգացման հայեցակարգերի մշակման, մարզերի և քաղաքների սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրերի իրականացման աշխատանքներում:

Հետազոտության արդյունքները, փաստական նյութերը և մեթոդական մշակումները կարելի է օգտագործել նաև բուհական ուսումնական գործընթացներում:

Աշխատանքի փորձաքննությունը և հրապարակումները: Հետազոտության հիմնադրույթները և արդյունքները զեկուցվել և տպագրվել են միջազգային և հանրապետական նշանակության գիտաժողովներում.

- «Modern problems of geography and anthropology» Proceedings of International Conference, Tbilisi, 2015

- «Հայաստանի Հանրապետության տնտեսության զարգացման և տեղաբաշխման ժամանակակից հիմնախնդիրները» հանրապետական գիտաժողով, ԵՊՀ, Երևան, 2015

- «Հայկական լեռնաշխարհ» հանրապետական գիտաժողովում, ՅՊՄՅ, Երևան, 2015

Աշխատանքի տեսական ընդհանրացումները և եզրակացությունները զեկուցվել և քննարկվել են ԵՊՀ Աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետի սոցիալ-տնտեսական աշխարհագրության ամբիոնի սեմինարներում:

Ատենախոսության հիմնական արդյունքները հրապարակվել են գիտական իննը հոդվածներում:

Ատենախոսության կառուցվածքը: Աշխատանքը բաղկացած է ներածությունից, 4 գլխից, եզրակացություններից և առաջարկություններից, գրականության ցանկից և հավելվածից: Աշխատանքը շարադրված է 155 էջերի վրա: Ընդգրկում է 5 քարտեզ, 38 նկար (դիագրամ և սխեմա), 6 աղյուսակ և հավելվածը:

ՉԼՈՒԽ 1. ՀՀ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՄԻԳՐԱՑԻԱՅԻ ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՏԵՍԱԿԱՆ ԵՎ ՄԵԹՈԴԱԲԱՆԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԸ

1.1 Բնակչության միգրացիայի հետազոտության տեսական և մեթոդաբանական հարցերը

Բնակչության միգրացիաները սոցիալ-տնտեսական տարածական բարդ և համալիրային երևույթներ են և գտնվում են տարբեր հասարակական գիտությունների (տնտեսագիտություն, սոցիոլոգիա, ժողովրդագրություն, աշխարհագրություն) հետաքրքրության կենտրոնում, քանի որ դրանք կապված են հասարակական կյանքի բոլոր ոլորտների հետ և զգալի ազդեցություն են թողնում սոցիալ-ժողովրդագրական և տնտեսական-քաղաքական տարբեր գործընթացների վրա: Այսպես, բնակչության միգրացիայի և տնտեսության փոխադարձ կապերի համակողմանի վերլուծությամբ զբաղվում է տնտեսագիտությունը, բնակչության միգրացիայի և բնակչության վերարտադրության ու կազմի փոխադարձ կապերի վերլուծությամբ՝ ժողովրդագրությունը, իսկ բնակչության միգրացիայի շարժառիթների և սոցիալական գործընթացների հետ փոխադարձ կապերի վերլուծությամբ՝ սոցիոլոգիան: Բնակչության միգրացիան, լինելով տարածական երևույթ, որն ըստ երևույթին իրենից ներկայացնում է մարդկանց կողմից բնակչության վայրի փոփոխության գործընթաց, իր բնույթով նախ և առաջ աշխարհագրական երևույթ է: Միգրացիան որոշակի առումով արտահայտում է տարբեր տարածքների և բնակավայրերի փոխհարաբերությունների բնույթը: Դրանով է բացատրվում աշխարհագրության առանձնահատուկ հետաքրքրությունը միգրացիոն գործընթացների նկատմամբ: Սակայն աշխարհագրությունը չպետք է սահմանափակվի միայն միգրացիայի տարածական կողմերը ուսումնասիրելով: Միգրացիան, լինելով բարդ սոցիալ-տարածական երևույթ և մարդկանց վրա բազմաթիվ և բազմապիսի գործոնների ազդեցության հետևանք, պահանջում է ոչ միայն տնտեսական, քաղաքական, սոցիալական, ժողովրդագրական կամ տարածական կողմերի առանձին վերլուծություններ, այլ նաև տարածաժամանակային ու համալիրային ուսումնասիրություններ, որտեղ միգրացիա երևույթը, հասարակական կյանքի բոլոր ոլորտների հետ ունեցած իր տարաբնույթ փոխադարձ կապերով, պետք է դիտվի մեկ

ամբողջական համակարգի մեջ: Իսկ աշխարհագրության տեսական և մեթոդաբանական հնարավորությունները թույլ են տալիս հասարակական աշխարհագրությանն իր վրա վերցնելու այդ պատասխանատվությունը, քանի որ, ինչպես կարող են վկայել նախկինում կատարված բազմաթիվ հետազոտությունները, միգրացիայի առանձին կողմերի ուսումնասիրությամբ հնարավոր չէ ամբողջական գնահատական տալ և լիարժեք բացատրել միգրացիա երևույթի պատճառահետևանքային կապերը [62]: Աշխարհագրությունը պետք է փորձի պարզել, թե ինչպես են տարբեր երկրների, տարածաշրջանների և բնակավայրերի տնտեսական, սոցիալական և ժողովրդագրական առանձնահատկություններն ազդում միգրացիայի ուղղությունների, մասշտաբների, ինտենսիվության և այլ ցուցանիշների վրա, ինչպես նաև՝ թե միգրացիայի արդյունքում ինչպիսի փոփոխությունների են ենթարկվում տարաբնակեցման համակարգերը, առանձին բնակավայրերի, շրջանների և երկրների տնտեսական, սոցիալական, ժողովրդագրական և քաղաքական կառուցվածքները:

Բնակչության միգրացիայի ուսումնասիրության գործում առաջին նշանակալից ավանդն ունեցել է 19-րդ դարի աշխարհագետ Էրնեստ Գևորգ Ռավենշտեյնը, ով հակադրվելով հայտնի վիճակագիր ու ժողովրդագիր Ուիլյամ Ֆարրի այն մտքին, որ միգրացիայի զարգացումը տեղի չի ունենում որոշակի օրենքներով, այլ այն ավելի շատ նման է քառասյին բրոունյան շարժման, 1880-ական թթ.-ին ստեղծեց բնակչության միգրացիայի տեսությունը, որը մինչ այժմ հիմք է հանդիսանում միգրացիայի ժամանակակից շատ տեսությունների համար [86, 87]: Նա իր երկու հոդվածներով (1885 և 1889թթ.) ձևակերպեց իր «միգրացիայի օրենքները»: Նա միգրացիան համարում էր մարդկային զարգացման անբաժանելի մաս և պնդում էր, որ միգրացիայի հիմնական պատճառները տնտեսական են: Ըստ Ռավենշտեյնի՝ մարդիկ տեղափոխվում են ցածր եկամուտների շրջանից դեպի բարձր եկամուտների շրջաններ, ինչպես նաև խիտ բնակեցված շրջաններից դեպի նոսր բնակեցված շրջաններ, որն ընդհանուր առմամբ նշանակում է, որ միգրացիոն տեղաշարժերը միտված են դեպի որոշակի տարածատնտեսական հավասարակշռության: Այս տեսակետը հետագայում ընդունվել է մի շարք աշխարհագետների, ժողովրդագիրների և տնտեսագետների կողմից, և անգամ որոշ հեղինակների կողմից արդիական է համարվում անգամ ներկայումս, ինչպես նաև հիմք է հանդիսացել «վանող-ձգող» տեսությունների համար [75]:

Միգրացիայի ուսումնասիրություններում իր հսկայական ավանդն է ունեցել Էվերետ Լիին, ով 1966թ.-ին լույս տեսած իր «միգրացիայի տեսությունը» աշխատությունում վերանայեց և խոր վերլուծության ենթարկեց Ռավենշտեյնի «միգրացիայի օրենքները» և առաջարկեց միգրացիայի ուսումնասիրման նոր վերլուծական մոտեցում [79]: Նա առաջիններից էր, ով առանձնացրեց և մանրամասն վերլուծեց գործոններ, որոնք ազդում են միգրացիոն գործընթացների վրա: Չնայած Լիին ըստ երևույթին չի հնարել կամ օգտագործել այս տերմինը, բայց նրա միգրացիայի վերլուծական (անալիտիկ) մոդելը հիմնականում ներկայացվում է որպես «վանող-ձգող» մոդել [83]: Վանող են համարվում այն գործոնները, որոնք պատճառ են հանդիսանում միգրանտի համար լքելու իր ընթացիկ բնակավայրը, իսկ ձգող են համարվում այն գործոնները, որոնք գրավիչ են դարձնում որևէ այլ բնակավայր: Էվերետ Լիին առանձնացրել է վանող և ձգող հետևյալ գործոնները.

1) Վանող գործոններ`

•աշխատատեղերի ոչ բավարար քանակ •հնարավորությունների սակավություն
•անբավարար պայմաններ •անապատացում •սով կամ երաշտ •քաղաքական վախ կամ հալածանք
•ստրկություն կամ հարկադիր աշխատանք •վատ բժշկական խնամք
•հարստության կորուստ •բնական աղետներ •մահվան սպառնալիքներ •քաղաքական և կրոնական ազատությունների սահմանափակություն
•բնական միջավայրի աղտոտվածություն
•վատ բնակարանային պայմաններ •վարձակալելու և վարձով տալու հետ կապված խնդիրներ
•ահաբեկված լինելը •խտրականություն
•ամուսնանալու ցածր հնարավորություններ
•բանտային խնդիրներ
•պատերազմական իրավիճակ

2) Ձգող գործոններ`

•աշխատանքի հնարավորություններ •ավելի լավ կյանքի պայմաններ •ավելի մեծ քաղաքական և կրոնական ազատության զգացում
•հանգիստը կազմակերպելու հնարավորություններ
•կրթություն
•ավելի լավ առողջապահական համակարգ
•գրավիչ կլիմա
•անվտանգություն
•բարեկամական, ընտանեկան կապեր
•արդյունաբերություն
•ամուսնանալու ավելի մեծ հավանականություն

Այս մոդելը վաստակեց շատ մեծ հեղինակություն միգրացիայի գրականության մեջ և դարձավ բարձրագույն կրթության մեջ միգրացիայի հիմնական մոդելը: Առաջին հայացքից «վանող-ձգող» մոդելը գրավիչ է թվում, քանի որ այն ի վիճակի է միավորելու և ներառելու բոլոր այն գործոնները, որոնք դեր են խաղում միգրացիոն որոշումներ կայացնելիս: Նաև

այլ տեսական գաղափարներ ինտեգրելու հնարավորության շնորհիվ այս մոդելը առաջարկվեց անգամ որպես աշխատուժի միգրացիայի ուսումնասիրման հիմնական մոտեցում [88, 89, 90]:

Այնուամենայնիվ, «վանող-ձգող» մոդելը ավելի շատ վերլուծական մոդել է և կարծում ենք, որ այն շատ լավ բացատրում է միգրացիայի գործընթացը, սակայն անտեսում է այն հանգամանքը, որ միգրացիայի որոշումը մեծապես կախված է մարդ-անհատի ձգտումներից, իսկ այդ ձգտումները հաստատուն չեն: «Վանող-ձգող» մոդելների օգտագործումը խնդիրներ է առաջացնում տարբեր մասշտաբի վերլուծություններ կատարելու ժամանակ (անհատական և գլոբալ): Դրանք ցույց չեն տալիս նաև, թե այդ գործոնները որքանով են ազդում միգրացիոն որոշումներ կայացնելիս, չեն արտահայտում կոնկրետ որոշումներում այդ գործոնների դերն ու նշանակությունը:

Այս մոդելների թերությունը նաև կայանում է նրանում, որ չեն կարողանում միգրացիան դիտել որպես սոցիալական գործընթաց: Ի վերջո, մարդը առաջին հերթին փոխում է իր բնակավայրը ոչ թե նրա համար, որ ցանկանում է գտնել կոնկրետ ավելի լավ «շրջակա միջավայր», այլ նրա համար, որ ակնկալում է, որ նոր բնակավայրում կկարողանա ստեղծել կյանքի այնպիսի պայմաններ, որում իրեն բավարարված կզգա բոլոր առումներով [77]:

Թեև միգրացիայի վերաբերյալ հարցերը առանձնահատուկ ուշադրության չեն արժանացել ռեգիոնալ տնտեսագիտական հիմնական տեսություններում, այնուամենայնիվ, միգրացիայի վերաբերյալ գիտական գաղափարներում և պատկերացումներում գերակշռում են տնտեսագիտական բացատրությունները [76, 81, 82, 94]: Նեոդասական միգրացիոն տեսությունը (M. Friedman, Paul Samuelson) ի սկզբանե ստեղծվել է բացատրելու աշխատուժի միգրացիայի դերը տնտեսական զարգացման գործում: Ըստ այս տեսության՝ միգրացիան հանդիսանում է աշխատանքի առաջարկի և պահանջարկի աշխարհագրական տարբերությունների արդյունք: Այն նկարագրում է բնակչության միգրացիան երկու՝ մակրո և միկրո մակարդակներում: Մակրոմակարդակում միգրացիան բացատրվում է աշխատուժի պահանջարկի և առաջարկի աշխարհագրական տարբերություններով: Իսկ միկրոմակարդակում միգրանտները հանդես են գալիս որպես անհատներ, որոնք ինքնուրույն, իրենց սուբյեկտիվ ընկալմամբ փոխում են բնակության վայրը՝ ցանկանալով գտնել ավելի լավ

կյանքի պայմաններ [74]: Սակայն պետք է նշել, որ միգրացիայի նեոդասական տեսությունը հիմնականում չկարողացավ բացատրել, թե ինչու՞ են նույն տարածքի որոշ մարդիկ արտագաղթում, իսկ որոշները ոչ, և ինչու՞ են մարդիկ որոշակի տարածքների միջև կատարում միգրացիա ոչ թե պատահական, այլ խմբված, կենտրոնացած ձևով: Դրանց բացատրությունը կարելի է գտնել միգրացիայի տարածական մոդելներում, որոնք հիմնականում ներկայացվել են աշխարհագետների և ժողովրդագիրների կողմից [56, 68, 91, 92]:

Չաշվի առնելով միգրացիայի նեոդասական տնտեսագիտական տեսության թերությունները՝ ստեղծվեցին միգրացիայի մի շարք այլ տնտեսագիտական մոդելներ և տեսություններ, որոնցից հատկապես արժեքավոր ենք համարում հետևյալ երկուսը՝ «Երկակի աշխատանքային շուկայի» և «աշխարհ-համակարգերի» տեսությունները:

«Երկակի աշխատանքային շուկայի» տեսությունը զարգացրել է պրոֆեսոր Մ. Պիորեն, ով միգրացիան դիտում էր որպես ավելի զարգացած պետություններում առկա «ձգող» գործոնների արդյունք: Նա զարգացած երկրների աշխատանքային շուկայում առանձնացնում է երկու հատված՝ առաջնային, որտեղ պահանջվում է բարձր որակավորում ունեցող աշխատուժ, և երկրորդային, որը պահանջում է ցածր որակավորում ունեցող աշխատուժ: Ըստ այս տեսության, հենց երկրորդ հատվածի աշխատուժի պահանջարկն է զարգացած երկրների համար հանդես գալիս որպես «ձգող» գործոն, քանի որ տեղի աշխատուժը չի ցանկանում կատարել այդ աշխատատար և քիչ վարձատրվող աշխատանքը [84]:

«Աշխարհ-համակարգերի տեսությունը» ստեղծվել է 1970-ական թվականներին ամերիկացի հայտնի սոցիոլոգ, աշխարհ-համակարգային վերլուծաբան Էմանուել Վալերշտեյնի կողմից, ով նաև համարվում է աշխարհ-համակարգային մոտեցման հեղինակը: Այս տեսությունը միգրացիան դիտում է գլոբալ, աշխարհ-համակարգային տեսանկյունից [78]: Ըստ Վալերշտեյնի, համաշխարհային ազատ առևտուրը կարող է նվազեցնել միգրացիոն շարժերը զարգացող և զարգացած երկրների միջև: Այս տեսությունը կարող է օգտագործվել բացատրելու համար այնպիսի երկրների միջև միգրացիոն շարժերը, որոնք աշխարհագրականորեն իրարից հեռու են գտնվում:

Բնակչության միգրացիայի աշխարհագրական ուսումնասիրության տեսանկյունից առավել հետաքրքիր և արժեքավոր ենք համարում հետևյալ երկուսը՝ Չեխոսլովակո մոդելը և միգրացիայի գրավիտացիոն մոդելը:

Աշխարհագրության պրոֆեսոր Ուիլբեր Չեխոսլովակոս հանդիսանում է միգրացիայի անցումային մոդելի հեղինակը, որն առավել հայտնի է որպես Չեխոսլովակո մոդել [95]: Ըստ այս մոդելի՝ երկրի բնակչության միգրացիան կախված է այդ երկրի զարգացվածության մակարդակից և բնակչության սոցիալական կազմից: Այս մոդելի ստեղծման համար հիմք է հանդիսանում ժողովրդագրական անցումային մոդելում (DIM) ներառված փուլերը:

Միգրացիայի գրավիտացիոն մոդելը բնակավայրերի տարածական փոխազդեցության մոդել է, որի հիմքը վերցված է Նյուտոնի գրավիտացիոն մոդելից [92]: Միգրացիայի գրավիտացիոն մոդելի հիմնական գաղափարն այն է, որ բնակավայրերից մեկի կամ երկուսի նշանակության մեծացումը մեծացնում է նաև դրանց միջև տեղի ունեցող բնակչության միգրացիայի ծավալը, իսկ դրանց միջև եղած հեռավորությունը՝ ընդհակառակը, համապատասխանաբար թուլացնում է բնակավայրերի միջև միգրացիոն կապերը: Այս մոդելը շատ հարմար է կիրառել երկու շրջանների միջև բնակչության միգրացիայի ուսումնասիրությունների ժամանակ: Սակայն կարծում ենք, որ միգրացիայի գրավիտացիոն մոդելը էմպիրիկ բնույթ է կրում և տեսականորեն թույլ է հիմնավորված: Բնակչության միգրացիայի վերլուծության արդի մեթոդներին ու տեսական հարցերին բավականին մեծ ուշադրություն է դարձրել նաև լեհ հայտնի աշխարհագետ Ա.Յագելսկին [73]:

Միգրացիայի աշխարհագրական ուսումնասիրության տեսական և մեթոդաբանական հարցերին անդրադարձել են նաև խորհրդային ժամանակաշրջանի գիտնականները, մասնավորապես՝ Վ.Պերեվեդենցևը, Բ.Խորևը, Վ.Չապեկը, Վ. Պոկչիշևսկին, Ռիբակովսկին և այլոք [60, 63, 65, 67, 72]: Նրանք առավել մեծ ուշադրություն են դարձրել բնակչության միգրացիայի ուսումնասիրությունների սոցիալ-տնտեսաաշխարհագրական կողմերին: Մինչդեռ բնակչության միգրացիայի ուսումնասիրության էթնո-մշակութային աշխարհագրական և քաղաքական-աշխարհագրական կողմերը լուսաբանված էին ոչ բավարար մակարդակով: Նշված աշխատանքներում միգրացիայի աշխարհագրական ուսումնասիրությունը կատարվում էր առավելապես տարածական, համալիրային և տիպաբանական մոտեցումներով, մինչդեռ հետազոտության տարածաժամանակային,

հիմնախնդրային և աշխարհաքաղաքական մոտեցումները կամ բացակայում էին, կամ էլ թույլ էին ներկայացված: Միգրացիայի ուսումնասիրությունն առավել լայն ներկայացված էր տարածաշրջանային և համապետական (ազգային) մակարդակներով, մինչդեռ թույլ էին լուսաբանված բնակավայրային և համամոլորակային մակարդակները:

Վերջին երկու-երեք տասնամյակներին միգրացիան դարձել է համամոլորակային երևույթ, վերածվել է աշխարհաքաղաքական կարևոր գործոնի և կարևոր դեր է կատարում միջքաղաքակրթական հարաբերություններում: Դրա հետ կապված միգրացիայի ուսումնասիրության ներկա փուլում կարևոր նշանակություն են ստանում քաղաքաաշխարհագրական և մշակութաաշխարհագրական ուսումնասիրությունները, որոնք առավելապես իրականացվում են համամոլորակային և ազգային-պետական մակարդակներում: Այս երկու մակարդակներում բնակչության միգրացիայի աշխարհագրական ուսումնասիրություններն ավելի համալիրային բնույթ են ստանում և ամբողջական են դառնում, երբ ազգերը (դրանց թվին են պատկանում նաև հայերը) ներկայացված են թե՛ ազգային պետությունով, և թե՛ հզոր սփյուռքով: Այդ ժամանակ ոչ միայն մեծանում է բնակչության միգրացիոն շարժունակությունը, այլ նաև սոցիալ-տնտեսականի հետ մեկտեղ կարևոր նշանակություն են ստանում միգրացիայի էթնո-մշակութային և աշխարհաքաղաքական գործոններն ու նշանակությունները:

1.2 ՀՀ բնակչության միգրացիայի աշխարհագրական ուսումնասիրության հիմնահարցերը

Խորհրդային տարիներին բնակչության միգրացիան մեծ դեր է խաղացել Հայաստանի բնակչության թվի ձևավորման գործում և բնական է, որ այն արժանացել է գիտության տարբեր ճյուղերի՝ աշխարհագետների, ժողովրդագիրների, տնտեսագետների և սոցիոլոգների ուշադրությանը: Հայտնի աշխարհագետ Գ.Ե. Ավագյանը մասնավորապես կենտրոնացել է այդ ժամանակաշրջանի բնակչության միգրացիայի պատճառների, ուղղությունների և մասշտաբների վրա: Նա փաստական հարուստ նյութի հիման վրա վերլուծել է Խորհրդային Հայաստանի արտաքին և ներքին միգրացիաների հիմնական ուղղություններն ու մասշտաբները, անդրադարձել է նաև սեզոնային և ճոճանակային միգրացիայի հիմնահարցերին [3]:

Խորհրդային Չայաստանի բնակչության միգրացիայի ուսումնասիրություններով զբաղվել է աշխարհագետ Խ.Ա. Ավետիսյանը, ով հարուստ փաստական նյութի հիման վրա ներկայացրել է բնակչության միգրացիայի ուղղությունները, վերլուծել դրանց պատճառները, ազդեցությունն ուրբանիզացման և բնակչության տեղաբաշխման վրա [4]: Գ.Ավագյանն ու Խ.Ավետիսյանը իրենց աշխատանքներում միջպետական և միջհանրապետական միգրացիաների վերլուծության ժամանակ մեծ ուշադրություն են դարձրել հայրենադարձության դերի, մասշտաբների և ուղղությունների հիմնահարցերին: Ներհանրապետական կամ ներքին միգրացիաների վերլուծության ժամանակ կարևոր տեղ են հատկացրել բնակչության և արտադրության տեղաբաշխման գործում միգրացիայի դերի գնահատմանը:

Խորհրդային Չայաստանի և հետխորհրդային առաջին տարիների բնակչության միգրացիայի ժողովրդագրական բնույթի ուսումնասիրություն է կատարել Է.Կադ. Վ.Ե. Խոջաբեկյանը: Նա իր աշխատանքում ներկայացրել է հսկայական փաստական վիճակագրական նյութ, որով ցույց է տվել բնակչության ժողովրդագրական իրավիճակը Չայաստանի խորհրդայնացումից առաջ, խորհրդային ժամանակաշրջանում, բնակչության միջպետական, միջհանրապետական և ներհանրապետական միգրացիաները, դրանց ուղղությունները, մասշտաբները, սոցիալ-ժողովրդագրական պատճառներն ու հետևանքները [13]: Խորհրդային Չայաստանի բնակչության միգրացիայի և ուրբանիզացման փոխազդեցության վերլուծությունը տրված է Վ. Խոջաբեկյանի և Բ. Ասատրյանի համատեղ աշխատանքում: Հեղինակների տվյալներով, ընդհանուր առմամբ, 1920-1988 թթ.-ին քաղաքային բնակչության թվի ավելացման մոտ 50%-ը (շուրջ 1 մլն մարդ) բաժին է ընկնել միգրացիաներին [71]:

Խորհրդային տարիների բնակչության միգրացիայի և ժողովրդագրական գործընթացների փոխազդեցության հարցերով զբաղվել են ժողովրդագիրներ Ս. Կարապետյանը և Ռ. Հովսեփյանը [58]: Նրանք աշխատանքում վերլուծել են 1959-1984 թթ.-ին Խորհրդային Չայաստանի բնակչության միգրացիայի արդյունքում տեղի ունեցած փոփոխությունները ժողովրդագրական կառուցվածքում և ուրբանիզացման գործընթացներում: Սակայն աշխատանքում հստակ առանձնացված և ներկայացված չէ արտաքին և ներքին միգրացիաների դերն ու ազդեցությունը տարաբնակեցման և ուրբանիզացման փոփոխությունների վրա:

Հայաստանի քաղաքների բնակչության ձևավորման էթնոսոցիալական գործընթացներում միգրացիայի դերի ուսումնասիրությամբ զբաղվել է Ռ.Կարապետյանը [59]:

Խորհրդային Հայաստանի և ՀՀ առաջին տասնամյակի բնակչության միգրացիայի ժողովրդագրական հիմնահարցերի ուսումնասիրությամբ զբաղվել է ժողովրդագիր Մ.Վ. Ֆահրադյանը [53, 70]: Նա անդրադարձել է խորհրդային ժամանակաշրջանում հայ բնակչության միգրացիոն տեղաշարժերին, դրանց ժողովրդագրական հետևանքներին: Նա հատկապես խոր վերլուծության է ենթարկել 1989 և 2001թթ.-ին տեղի ունեցած մարդահամարների տվյալները, ցույց տվել դրանց անհամապատասխանությունը ընթացիկ հաշվառման տվյալների հետ, համադրելով տարբեր հեղինակների հաշվարկները, սոցիոլոգիական տարբեր հետազոտությունների արդյունքները և հետադարձ հաշվարկի մեթոդաբանությամբ իր կողմից կատարած վերլուծությունները՝ փորձել է ճշգրիտ ձևով ներկայացնել ՀՀ բնակչության միգրացիայի իրական մասշտաբները Հայաստանի անկախության առաջին տասնամյակում, քանի որ պաշտոնական վիճակագրական տվյալները չեն արտահայտում իրականությունը:

Խորհրդային և հետխորհրդային Հայաստանի բնակչության միգրացիայի և տարաբնակեցման փոխադարձ կապերի վերլուծությամբ զբաղվել է աշխարհագետ Մ.Մանասյանը [41]: Նա իր աշխատություններում անդրադարձել է ՀՀ բնակչության միգրացիայի ազդեցությամբ ՀՀ տարաբնակեցման համակարգում և ուրբանիզացման գործընթացներում տեղի ունեցած և ներկայումս կատարվող տեղաշարժերին և փոփոխություններին, դրանց պատճառներին, հետևանքներին և սպասվող միտումներին:

Բնակչության միգրացիայի սոցիոլոգիական հիմնահարցերի ուսումնասիրությամբ զբաղվել է սոցիոլոգ Գ. Պողոսյանը [47, 85]: Նա իր աշխատանքներում անդրադարձել է խորհրդային և հետխորհրդային Հայաստանի բնակչության միգրացիաներին, սոցիոլոգիական հետազոտությունների արդյունքների հիման վրա առանձնացրել է միգրացիայի հիմնական պատճառները, դրանց վրա ազդող գործոնները:

ՀՀ անկախության առաջին տասնամյակում բնակչության էմիգրացիայի և ռեէմիգրացիայի, միգրացիայի մասնակիցների կազմի և միգրացիայի պատճառներին են անդրադարձել ժողովրդագիրներ Ռ.Եզանյանը և Կ.Կույումջյանը: Նրանք փորձել են

պարզել միգրացիայի դերն ու ազդեցությունը ՀՀ ժողովրդագրական կառուցվածքի փոփոխություններում [7, 8, 57]:

ՀՀ բնակչության արտագաղթի դրդապատճառների և հիմնական միտումների հետազոտությամբ զբաղվել են Հ. Սարգսյանը և ուրիշներ [50]: Նրանք սոցիոլոգիական լայնածավալ հետազոտությունների արդյունքում առանձնացրել են արտագաղթի հիմնական դրդապատճառները, ցույց տվել հասարակության տարբեր շերտերի՝ արտագաղթին մասնակցելու հավանականությունը, և այն նախապայմանները, որի դեպքում հնարավոր է ավելացնել ներգաղթի և նվազեցնել արտագաղթի ցուցանիշները:

ՀՀ Շիրակի մարզի բնակչության միգրացիայի աշխարհագրական վերլուծությամբ զբաղվել է Ն.Ռ. Գաբրիելյանը [5]: Նրա հետազոտությունը նվիրված է Շիրակի մարզում բնակչության թվաքանակի փոփոխության, տեղաբաշխման, քաղաքային և գյուղական տարաբնակեցման գործընթացներում միգրացիայի ազդեցությանը, արտաքին և ներքին միգրացիաների պատճառներին, ուղղություններին և մասշտաբներին:

Միգրացիայի սոցիոլոգիական և տնտեսագիտական ասպեկտների ուսումնասիրությամբ են զբաղվել Հ. Մարգարյանը, Ս. Աստվածատուրովը և Ռ. Մարկոսյանը [80]: Հեղինակները մարդկային կապիտալի տեսության վերլուծության հիման վրա ներկայացրել են ՀՀ-ում բնակչության միգրացիայի և մարդկային կապիտալի վերարտադրության փոխառանջությունները՝ կարևորելով միգրացիոն ռիսկերը:


ՀՀ բնակչության միգրացիայի (հիմնականում արտագաղթի) տարբեր կողմերի ուսումնասիրությամբ զբաղվել են նաև այլ մասնագետներ (Մելքումյան, Պոտոսյան, Ղարիբյան, Մինասյան և այլն), որոնք անդրադարձել են հետխորհրդային տարիներին արտագաղթի պատճառներին, մասշտաբներին, սոցիալ-ժողովրդագրական և տնտեսական հետևանքներին և այլ հիմնահարցերին [32, 43, 49, 52, 64, 66, 93]:

Ընդհանուր առմամբ, եթե ՀՀ բնակչության միգրացիայի սոցիոլոգիական և ժողովրդագրական հիմնահարցերը բավականաչափ ուսումնասիրված են տարբեր հեղինակների կողմից, ապա նույնը չի կարելի ասել բնակչության միգրացիայի աշխարհագրական հիմնահարցերի ուսումնասիրությանը: Կարծում ենք, որ վերոնշյալ գրեթե բոլոր աշխատանքներում և հետազոտություններում բացակայում են ՀՀ բնակչության միգրացիայի ուսումնասիրության համակարգային (համալիրային), տարածական և տարածաժամանակային մոտեցումները, երբ միգրացիան դիտվում է

սոցիալ-տարածական համալիրային երևույթ, որը պատճառահետևանքային կապերով կապված է և փոխազդեցության մեջ է գտնվում հասարակական կյանքի բոլոր ոլորտների հետ: Այդ բացը լրացնելու համար, ինչպես նաև նպատակ ունենալով ճիշտ գնահատել ՀՀ բնակչության միգրացիոն իրավիճակը և գտնել դրա կարգավորման ուղիները, փորձել ենք հստակ ձևակերպել ՀՀ բնակչության միգրացիայի հասարակական-աշխարհագրական ուսումնասիրության հիմնական ուղղությունները, մակարդակները, մեթոդներն ու մոտեցումները (նկար 1): [34]

Բնակչության միգրացիայի աշխարհագրական վերլուծության համար անհրաժեշտ փաստական նյութերը համայնքների և մարզերի մակարդակներով խիստ անբավարար են աշխարհագրական խոր և բազմակողմանի հետազոտության համար, քանի որ դրանք չեն պատասխանում այն հարցերին, թե որքա՞ն են կազմում բնակավայրեր եկածների և մեկնածների թվաքանակները, որո՞նք են ՀՀ բնակչության միգրացիայի հիմնական ուղղությունները, պատճառները, միգրանտների սոցիալական կազմը: Այս տվյալների սակավությունը հնարավորություն է չի տալիս վերլուծելու միգրացիայի միջբնակավայրային և միջմարզային կապերը, բացահայտելու միգրացիայի դերը տարաբնակեցման կառուցվածքային և տարածական տեղաշարժերում:

Մարզերի և համայնքների բնակչության արտաքին միգրացիաների մասին որոշակի պատկերացում կարող ենք ունենալ մշտական և առկա բնակչության վերաբերյալ մարդահամարների և ընթացիկ հաշվառման տվյալներից: Պետական հաշվառման մարմինների կողմից ներկայացված մշտական և առկա բնակչության թվերի տարբերությունները պատկերացում են տալիս ժամանակավոր միգրանտների թվաքանակի մասին: ՀՀ մասշտաբով ժամանակավոր բացակաները կազմում են բնակչության շուրջ 6%-ը կամ մոտ 180 հազ.մարդ, որոնց շուրջ 90%-ը Ռուսաստան մեկնած աշխատանքային միգրանտներն են: Սակայն դրանց մի մասը, շարունակելով մնալ ՀՀ քաղաքացիներ՝ մշտական բնակություն են հաստատել արտերկրում [17]:



Նկար 1. *ՀՀ բնակչության միգրացիայի հասարակական աշխարհագրական ուսումնասիրության սխեման*

ՀՀ արտաքին միգրացիայի վերաբերյալ որոշակի պատկերացում կարելի է կազմել նաև ՀՀ արտաքին ուղևորափոխադրումների, այսինքն՝ տարվա ընթացքում տրանսպորտի տարբեր տեսակներով ՀՀ եկածների և մեկնածների տվյալների հիման վրա: Սակայն այս տվյալները լիարժեք կերպով չեն կարող արտահայտել ՀՀ բնակչության միգրացիոն տեղաշարժերի, մասնավորապես արտագաղթի, ներգաղթի և միգրացիայի մասշտաբի իրական չափերն ու պատկերը, դրանցով կարելի է հաշվել միայն տարվա ընթացքում եկածների և մեկնածների տարբերությունը: Ազգային վիճակագրական ծառայությունը տալիս է միայն ընդհանուր տեղեկություններ եկածների և մեկնածների վերաբերյալ՝ հիմք

ընդունելով տևալին տնտեսություններում կատարվող հետազոտության արդյունքները: Առանձին տարիների կտրվածքով ՀՀ, նրա մարզերի և համայնքների բնակչության մեխանիկական շարժերի վերաբերյալ տեղեկություններ կարելի է ստանալ բնակչության թվի տարեկան հավելածի և բնական հավելածի տվյալների համադրման միջոցով: Բայց այդ դեպքում մենք կարող ենք պարզել միայն բնակչության մեխանիկական աճի, այսինքն բնակչության միգրացիայի մնացորդի (սալդոյի) տվյալները, սակայն հնարավոր չէ առանձնացնել մեկնածների և եկածների ցուցանիշները: Իսկ երբ ուսումնասիրության առարկա են դառնում տարածքի բոլոր բնակավայրերը, այսինքն՝ տարաբնակեցման համակարգի բոլոր բաղադրիչները, ապա համադրելով և գնահատելով տարբեր տարածքներում գտնվող և տարբեր կարգ և մեծություն ունեցող քաղաքների բնակչության թվի հավելածի և բնական աճի ցուցանիշները, հնարավոր է դառնում պարզել ներհանրապետական միգրացիայի հիմնական ուղղություններն ու ծավալները:

Վիճակագրական փաստական նյութերի անբավարար լինելու պայմաններում աշխարհագրական հետազոտությունների համար անհրաժեշտ նյութերը միգրացիայի պատճառների և ուղղությունների տարածական ասպեկտների վերաբերյալ կարելի է ստանալ խոշորամասշտաբ դաշտային սոցիալ-աշխարհագրական հետազոտությունների միջոցով: Սոցիալ-աշխարհագրական դաշտային հետազոտությունների ընթացքում կարելի է տեղեկություններ ստանալ ոչ միայն միգրացիայի պատճառների և ուղղությունների, այլև միգրացիայի կազմի վերաբերյալ:

Միգրացիայի աշխարհագրական ուսումնասիրության կարևոր ուղղություններից է տարածական տարբեր մակարդակներում (տեղական, տարածաշրջանային, համապետական) առկա գործոնների ազդեցությամբ ձևավորվող միգրացիոն հոսքերի վերլուծությունը: Այսպես, ՀՀ բնակչության միգրացիոն հոսքերի ձևավորման վրա ազդում են տեղական (բնակավայրային), տարածաշրջանային (մարզային) և համապետական (ազգային) տնտեսական, սոցիալական, ժողովրդագրական, էկոլոգիական և քաղաքական բնույթի գործոններն ու պայմանները:

ՀՀ բնակչության միգրացիայի տնտեսաաշխարհագրական ուսումնասիրության նպատակն է բացահայտել միգրացիայի և տնտեսության փոխադարձ կապերը տարբեր համայնքներում և մարզերում: Անհրաժեշտ է պարզել, թե ինչպես են ազդում միգրացիաները տնտեսության կառուցվածքի և տարածքային կազմակերպման վրա:

Միգրացիան կարող է ինչպես խորացնել, այնպես էլ կրճատել տնտեսության տարածքային տարբերությունները, նպաստել տարածաշրջանների տնտեսության առանձին ճյուղերի ձևավորմանը և զարգացմանը: Միգրացիայի տնտեսաաշխարհագրական վերլուծության ժամանակ կարևոր է պարզել, թե բնակչության միգրացիոն հոսքերի ձևավորման վրա ինչ ազդեցություն են թողնում տնտեսության տարածքային տարբերությունները, տարածաշրջանների տնտեսության ճյուղային կառուցվածքի առանձնահատկությունները:

Տնտեսությունը առանձնապես մեծ ազդեցություն է թողնում բնակչության աշխատանքային միգրացիայի հոսքերի ձևավորման և ուղղությունների վրա: Տնտեսաաշխարհագրական մոտեցմամբ միգրանտները նախ և առաջ դիտվում են որպես աշխատուժ, որոնք որոշակի ազդեցություն են թողնում տարածաշրջանների և քաղաքների աշխատանքային ռեսուրսների ձևավորման գործում: Ակնհայտ է, որ բնակչության աշխատանքային միգրացիոն ակտիվությամբ առանձնապես աչքի է ընկնում աշխատունակ տարիքի և կրթական բարձր մակարդակ ունեցող բնակչությունը:

Սոցիալ-աշխարհագրական ուսումնասիրություններում միգրացիան դիտվում է որպես սոցիալ-տարածական երևույթ, վերլուծության հիմնական խնդիրն է դառնում տարբեր տարածաշրջաններում և համայնքներում բնակչության միգրացիայի և սոցիալական գործընթացների և երևույթների փոխադարձ կապերի վերլուծությունը: Անհրաժեշտ է պարզել, թե բնակչության միգրացիոն հոսքերի ձևավորման, դրանց ինտենսիվության և ուղղությունների վրա ինչպիսի դեր են կատարում սոցիալական գործոնները: ՀՀ մարզերի և համայնքների բնակչության սոցիալական կազմը, բնակչության կենսամակարդակն ու կյանքի որակը, աղքատության մակարդակը բնակչության միգրացիաների կարևոր գործոնների թվին են պատկանում: Իրենց հերթին բնակչության միգրացիաները զգալի ազդեցություն են թողնում համայնքների բնակչության սոցիալական կազմի, դրանցում տեղի ունեցող սոցիալական գործընթացների և երևույթների վրա:

Միգրացիայի աշխարհագրական ուսումնասիրության մյուս կարևոր ուղղությունը ժողովրդագրաաշխարհագրական է, որի գլխավոր խնդիրը բնակչության միգրացիայի և ժողովրդագրական գործընթացների փոխադարձ կապերի, դրանց տարածաշրջանային առանձնահատկությունների վերլուծությունն է: Դրա հետ կապված անհրաժեշտ է պարզել միգրացիայի ազդեցության բնույթը բնակչության տեղաբաշխման, տարաբնակեցման և ուրբանիզացման, ժողովրդագրական տարբեր գործընթացների և կառուցվածքների վրա:

Ընդ որում, եթե հետազոտվող տարածքի բնակչության թվի փոփոխության, բնակչության վերարտադրության և սեռատարիքային կառուցվածքի վրա ավելի մեծ ազդեցություն են թողնում բնակչության արտաքին միգրացիաները, ապա բնակչության տեղաբաշխման և ուրբանիզացման, ինչպես նաև տարաբնակեցման կառուցվածքային տեղաշարժերի վրա ավելի մեծ է ներքին միգրացիաների ազդեցությունը: ՀՀ բնակչության ժողովրդագրա-աշխարհագրական ուսումնասիրության ժամանակ անհրաժեշտ է պարզել, թե ինչպես են ազդում մարզերի բնակչության սեռատարիքային կառուցվածքը և զբաղվածության բնույթը միգրացիոն հոսքերի ձևավորման վրա: Այս նպատակների համար օգտագործում են միգրացիայի լարվածության, արդյունավետության և ինտենսիվության ցուցանիշները:

Բնակչության միգրացիայի աշխարհագրական ուսումնասիրության կարևոր ուղղություններից է բնակչության միգրացիայի և տարաբնակեցման փոխազդեցության վերլուծությունը [35]: Հարկավոր է պարզել, թե ինչպիսի ազդեցություն է թողնում տարաբնակեցման համակարգի գործառնության-ենթակարգային կառուցվածքը միգրացիայի ուղղությունների և ինտենսիվության վրա, ինչպես է դրսևորվում միջբնակավայրային միգրացիաների հիերարխիկ բնույթը:

Բնակչության միգրացիայի համալիրային հասարակական-աշխարհագրական հետազոտության հիմնական նպատակն է բացահայտել բնակչության միգրացիայի և հասարակության տարածքային կազմակերպման փոխազդեցության հիմնական ուղղությունները, ձևերը ու պատճառահետևանքային կապերը: Այսինքն՝ նախ անհրաժեշտ է պարզել, թե ինչպես է միգրացիան ազդում հասարակության տարբեր ոլորտների տարածքային կազմակերպման վրա: Նույնքան կարևոր է նաև պարզել, թե առկա միգրացիոն տեղաշարժերի մասշտաբներն ու ուղղություններն ինչքանով են արդարացված տնտեսական, սոցիալ-ժողովրդագրական, և վերջապես հասարակության տարածքային կազմակերպման տեսանկյունից: Այդ գնահատականներն անհրաժեշտ են ներքին միգրացիայի կարգավորման և ընդհանրապես միգրացիոն քաղաքականության սկզբունքների մշակման համար: Ներքին միգրացիան արդարացված է, եթե նպաստում է հասարակության տարածքային կազմակերպման արդյունավետության բարձրացմանը, գործազրկության և աղքատության կրճատմանը և սոցիալ-տնտեսական զարգացման տարածքային տարբերությունների համահարթեցմանը:

Միգրացիոն հոսքերի գլոբալացումը, միջմայրցամաքային և միջերկրային ուղղություններով միգրացիոն հոսքերի ինտենսիվացումն արդիական են դարձնում միգրացիայի քաղաքաաշխարհագրական և էթնոմշակութաաշխարհագրական ուսումնասիրությունները: Բնակչության միգրացիաները աշխարհի որոշ տարածաշրջաններում և երկրներում դարձել են աշխարհաքաղաքական կարևոր գործոններ: Այդպիսի տարածաշրջաններից մեկում էլ ՀՀ-ն է, որը գտնվում է նաև տարբեր քաղաքակրթությունների շփման գոտում: ՀՀ արտաքին միգրացիայի աշխարհաքաղաքական և քաղաքակրթական-աշխարհագրական հետևանքների վերլուծությունը ուսումնասիրության հեռանկարային ուղղություններից է: Միգրացիաները, ինչպես հայտնի է, փոխում են երկրների բնակչության ազգային և կրոնական կազմերը: Մեր երկրի պարագայում միգրացիայի շնորհիվ բնակչության ազգային կազմը դարձավ ավելի միատարր: Իսկ մշակույթային-աշխարհագրական տեսանկյունից՝ աշխարհի տարբեր երկրներում ապրող հայերը, ապրելով տարբեր մշակույթ ունեցող տարածաշրջաններում և երկրներում, վերադառնալով հայրենիք՝ իրենց հետ բերեցին մշակույթի նոր տարրեր ու ձևեր:

Աշխարհագրության համար հատկապես կարևոր են միգրացիայի հետևանքների տարածական կողմերի ուսումնասիրությունը, այսինքն՝ թե ինչ փոփոխություններ են դրանք առաջացնում հասարակության տարածքային կազմակերպման մեջ, ինչ ազդեցություն են թողնում ՀՀ մարզերի և տարբեր տիպի և մեծության բնակավայրերի սոցիալ-տնտեսական զարգացման վրա:

Բնակչության միգրացիայի աշխարհագրական հետազոտության ժամանակ, տարածական և համալիրային մոտեցումներից բացի, հարկավոր է նաև օգտագործել տարածաժամանակային մոտեցումը: Շատ կարևոր է միգրացիայի ինտենսիվության փուլերի համադրումը երկրի տնտեսական զարգացման և բնակչության եկամուտների աճի ցուցանիշների հետ:

Այսպիսով, հասարակական կյանքի տարբեր ոլորտների տարածքային կազմակերպման և բնակչության միգրացիոն հոսքերի փոխկապակցված վերլուծությունը հնարավորություն է տալիս գիտականորեն հիմնավորված առաջարկություններ անել բնակչության միգրացիայի կարգավորման և հասարակության տարածքային կազմակերպման արդյունավետության բարձրացման ուղղությամբ: Դրանք պետք է հաշվի

առևվեն պետության կողմից միգրացիոն քաղաքականության իրականացման և ՀՀ տարածաշրջանների սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրերի մշակման ժամանակ:

ԳԼՈՒԽ 2. ՀՀ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԱՐՏԱՔԻՆ ՄԻԳՐԱՑԻԱՅԻ ՄԱՍՇՏԱԲՆԵՐԸ, ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ՊԱՏՃԱՌՆԵՐԸ

2.1 Միգրացիայի դերը Հայաստանի բնակչության թվի ճնշվածության գործում

Հայերը, լինելով աշխարհի հնագույն ժողովուրդներից, պատմականորեն աչքի են ընկել բնակչության միգրացիոն մեծ շարժունակությամբ: ՀՀ ներկայիս տարածքը միշտ եղել է հայաբնակ, սակայն պատմական տարբեր ժամանակաշրջաններում բնակչության թվի ավելացումն ու նվազումը հաջորդել են միմյանց՝ կախված ոչ միայն բնակչության բնական վերարտադրությունից, այլ նաև միգրացիոն տեղաշարժերի բնույթից: Եթե բնակչության բարձր բնական աճը սովորաբար նպաստել է բնակչության թվի ավելացմանը, ապա բնակչության միգրացիոն տեղաշարժերը, ընդհակառակը, հանգեցրել են բնակչության թվի նվազմանը:

Արևելյան Հայաստանը Ռուսաստանին միակցելու (1828թ.) ժամանակ բնակչությունը կազմում էր ընդամենը 97 հազար մարդ, որում զգալի թիվ էին կազմում նաև մահմեդական ժողովուրդները [69]: 1828թ.-ին Ռուսաստանի և Պարսկաստանի միջև Թուրքմենչայում կնքված պայմանագրին անմիջապես հաջորդեց Պարսկաստանում ապրող հայերի ներգաղթը դեպի Ռուսական կայսրության մեջ մտած Արևելյան Հայաստան: Միայն 1828-1829թթ.-ին նրանց թիվը կազմեց մոտ 45 հազար: 1929թ.-ին Ադրիանապոլսում հաշտության պայմանագիր է կնքվում նաև Ռուսաստանի և Թուրքիայի միջև, որի շնորհիվ սկսվում է հայերի ներգաղթը Թուրքիայի տիրապետության տակ գտնվող Արևմտյան Հայաստանից դեպի Արևելյան Հայաստան: 1830թ.-ից սկսած կարճ ժամանակամիջոցում Արևելյան Հայաստան գաղթեցին մոտավորապես 90-100 հազար հայեր: Չնայած Թուրքիայից հայերի ներգաղթը շարունակվեց մինչև առաջին համաշխարհային պատերազմը և ազգամիջյան կռիվները, սակայն 1831-1873 թթ.-ին ներգաղթի հոսքերը դարձան համեմատաբար քիչ զանգվածային և Արևելյան Հայաստանի բնակչության թիվն աճում էր մեծապես բնական աճով պայմանավորված [13]:

Արևմտյան Հայաստանից հայերի ներգաղթի միջոցով Արևելյան Հայաստանի բնակչությունը հատկապես շեշտակի աճեց 1877-1878թթ.-ին ռուս-թուրքական

պատերազմից հետո և 1894-1896թթ.-ին Աբդուլ Չամիդ II-ի սկսած հայկական ջարդերի տարիներին, երբ Արևելյան Չայաստան ներգաղթեցին հարյուր հազարավոր հայեր: Այս ամենի արդյունքում 1831-1913թթ.-ին ՉՉ այժմյան տարածքի բնակչությունը ավելացավ մոտ 6.2 անգամ՝ 160 հազարից դառնալով շուրջ 1 միլիոն: Արևմտյան Չայաստանից հայերի ներգաղթը դեպի Արևելյան Չայաստան նոր թափ ստացավ մեծ եղեռնի և առաջին համաշխարհային պատերազմի տարիներին [11]: Ըստ Պ. Աբելյանի՝ այդ տարիներին Արևմտյան Չայաստանից ՉՉ այժմյան տարածք են ներգաղթել շուրջ 116 հազար մարդ, իսկ 1918-1920թթ.-ին՝ 185.6 հազար մարդ [1]: Սակայն հետաքրքիրն այն է, որ դա չի հանգեցրել բնակչության թվի ավելացմանը: Եթե 1913թ.-ին բնակչության թվաքանակը մոտ 1 միլիոն մարդ էր, ապա 1920թ.-ի վերջին այն կազմեց ընդամենը մոտ 720 հազար մարդ: Դա պայմանավորված էր հիմնականում բնական ցածր աճով, պատերազմներում տված մեծ թվով զոհերով և համաճարակային հիվանդությունների հետևանքով մարդկային մեծ կորուստներով [4]:

Այսպիսով՝ 1828-1920թթ.-ին ՉՉ այժմյան տարածքում բնակչության թվաքանակը, բացառությամբ վերջին մի քանի տարիների, անընդհատ աճել է, իսկ այս տարածքում բնակչության ձևավորումը միգրացիոն տեսանկյունից հիմնականում կարելի է բնութագրել 1828-1830թթ.-ին Պարսկաստանում բնակվող հայերի և 1829-1920թթ.-ին Արևմտյան Չայաստանում բնակվող հայերի ներգաղթով: Այդ ներգաղթի հոսքերը հետագա տարիներին հատկապես մասշտաբային են եղել 1828-1831, 1877-1878, 1894-1896 և 1913-1920 թվականներին: Իսկ նշված տարիների միջակայքում ընկած տարիներին բնակչության թվի աճը պայմանավորված է եղել հիմնականում բնական աճով:

Չայաստանի բնակչության թվաքանակը նորից սկսել է արագ աճել խորհրդային տարիներին: Բավական նշել, որ խորհրդային Չայաստանի բնակչության թիվը 1920-1991թթ.-ին ավելացել է գրեթե հինգ անգամ: Ընդ որում բնակչության թիվը ավելացել է ոչ միայն բնակչության բարձր բնական աճի, այլև նաև զգալի մասշտաբներ ընդունած ներգաղթի հաշվին: Չայաստանում սովետական կարգերի հաստատմամբ փոխվեց հայ բնակչության միգրացիայի բնույթը: Եթե մինչ այդ հայերի ներգաղթը տեղի էր ունենում Թուրքիայի տիրապետության տակ գտնվող հայաբնակ տարածքներից դեպի Արևելյան Չայաստան՝ պայմանավորված հիմնականում ֆիզիկական բնաջնջման վտանգից խուսափելու հանգամանքով, ապա արդեն խորհրդային ժամանակաշրջանում Չայկական


ՍՍՀ էին ներգաղթում ավելի բարեկեցիկ և արժանավայել կյանք ունենալու նպատակով: Ընդ որում միգրացիայի այս ուղղությունն ընդգրկում էր և՛ խորհրդային այլ հանրապետություններում, և՛ արտասահմանյան երկրներում բնակվող հայ բնակչությանը: 1920-1940-ական թթ.-ին խորհրդային այլ հանրապետությունների հետ Հայաստանի բնակչության միգրացիայի դրական մնացորդը կազմեց մոտ 50 հազար մարդ: Ներգաղթողների ավելի քան 40%-ը բաժին էր ընկնում Ռուսաստանին, 23%-ը՝ Ադրբեջանին և 17%-ը՝ Վրաստանին: 1920-30-ական թթ.-ին սկսվեց նաև հայերի ներգաղթը արտասահմանյան մի շարք երկրներից դեպի խորհրդային Հայաստան [11]: Միայն 1922-1929թթ.-ին արտասահմանից հայրենիք վերադարձան 20.3 հազար հայ: Ներգաղթի այս միտումները շարունակվեցին նաև 1930-ական թթ.-ին [14]: Մասնավորապես, նշված միգրացիոն տեղաշարժերով և խորհրդային Հայաստանում բնակչության բնական աճի բարձր ցուցանիշներով է պայմանավորված, որ 1939թ.-ին անցկացված մարդահամարի տվյալներով Հայաստանի բնակչությունը կազմեց 1282.3 հազար մարդ, այսինքն՝ 1920թ.-ի հետ համեմատած մոտ 560 հազարով ավելի:

Չնայած Հայրենական մեծ պատերազմի հասցրած ծանր վնասներին և մարդկային մեծ կորուստներին, 1945թ. ԽՍՀՄ կառավարությունը որոշում է կայացնում սփյուռքահայության ներգաղթը պետականորեն կազմակերպելու մասին: Դրանով սկիզբ է դրվում դեպի խորհրդային Հայաստան հայրենադարձության երկրորդ փուլին: 1946-1948թթ.-ին Մերձավոր և Միջին Արևելքի երկրներից, Ֆրանսիայից, Հունաստանից, Բուլղարիայից, Ռումինիայից և այլ երկրներից հայրենիք վերադարձան մոտ 100 հազար մարդ: 1950-ական թթ.-ին արտասահմանյան երկրներից հայերի ներգաղթի ծավալները նվազեցին: Դրան հակառակ 1950-1959թթ.-ին մեծացան միջհանրապետական միգրացիայի ծավալները՝ կապված հանրապետության տնտեսության բուռն զարգացման և աշխատուժի պահանջարկի մեծացման հետ: Այս տարիներին Հայաստանում բնակչության միգրացիայի տարեկան միջին ծավալը (1 տարվա ընթացքում եկածների և մեկնածների հանրագումարը) կազմել է 60.7 հազար մարդ [4]: Ընդ որում միգրացիոն կապերը առավել ակտիվ էին Անդրկովկասի հանրապետությունների և խորհրդային Ռուսաստանի հետ:

Հայրենադարձության հետպատերազմյան երկրորդ փուլը սկսվում է 1960-ական թթ.-ից: 1962-1978թթ.-ին արտասահմանյան 28 երկրներից խորհրդային Հայաստան են եկել

31 հազար հայ: Ներգաղթածների 92.2%-ը եղել են Իրանից և Սիրիայից, իսկ 7.8%-ը՝ մնացած 26 երկրներից: Ընդհանուր առմամբ ներգաղթյալների մեջ գերակշռում էին երիտասարդ, աշխատունակ բնակչությունը, որոնք մի կողմից նպաստում էին տնտեսության զարգացմանը, մյուս կողմից՝ բնակչության բնական աճի ցուցանիշների բարձրացմանը:

Ունենալով 1959-1991թթ.-ին Հայաստանի բնակչության թվի և բնական աճի տվյալները՝ նույն ժամանակաշրջանի բոլոր տարիների համար հաշվարկել ենք բնակչության միգրացիայի սալոն (մնացորդը), որը ներկայացնում ենք հետևյալ նկարով (նկ. 2):



Նկար 2. Խորհրդային Հայաստանի բնակչության միգրացիայի սալոն 1959-1991թթ.-ին (‰)

Բնակչության ներգաղթի դերը Խորհրդային Հայաստանի բնակչության թվի ավելացման գործում 1960-1970թթ.-ին թեև նվազել է, սակայն այն շարունակում է մեծ մասշտաբներ ունենալ: Այսպես, մեր հաշվումները ցույց են տվել, որ 1959-1963թթ.-ին արտաքին միգրացիայի սալոն կազմել է 39,4 հազ.մարդ (տարեկան՝ 7,8 հազ.) կամ նշված ժամանակահատվածում Հայաստանի բնակչության թվի աճի 11,8%-ը: Բնակչության միգրացիայի դրական սալոն ավելի մեծ ցուցանիշներ է ունեցել 1964-1968 և 1969-1973թթ.-ին՝ համապատասխանաբար կազմելով 91,2 հազ. (տարեկան 18,2 հազ.) և 70,8 հազ. (տարեկան՝ 14,2 հազ.): Ընդ որում վերը նշված երկու ժամանակահատվածներում ՀԽՍՀ-ի բնակչության թվի աճի ցուցանիշում միգրացիայի բաժինը նույնն էր՝ 24%: Թեև միգրացիայի բաժինը հանրապետության բնակչության թվի ընդհանուր աճի գործընթացում 1974-1978թթ.-ին մի փոքր նվազել է (19,1%), սակայն բացարձակ թվով

միգրացիայի դրական սալդոյի ցուցանիշը եղել է բավականին բարձր՝ 57,6 հազ. կամ տարեկան միջինը 11,5 հազ. մարդ:

1980-ական թթ.-ին Խորհրդային Հայաստանի սոցիալ-տնտեսական զարգացման տեմպերը նվազեցին: Աշխատուժի վերարտադրության բարձր տեմպերի պայմաններում տնտեսությունը չէր կարողանում կլանել արագ աճող աշխատուժը: Արտագաղթողների և ներգաղթողների թվակազմը որոշ չափով հավասարակշռվում է, սակայն աստիճանաբար արտագաղթողների թվաքանակը սկսում է գերազանցել ներգաղթողների թվաքանակին ընդհուպ մինչև 1988թ.-ը, երբ սկսվեց հայ-ադրբեջանական հակամարտությունը: Բավական է նշել որ, 1979-1988թթ.-ին հանրապետությունում միգրացիայի բացասական մնացորդը տարեկան կազմում էր միջինը 13 հազ. մարդ: Սակայն, բնակչության բարձր բնական աճի պայմաններում դա չէր հանգեցնում բնակչության թվի նվազմանը: Մեծ չափերի էր հասնում նաև բնակչության սեզոնային աշխատանքային միգրացիան դեպի Ռուսաստան և այլ հանրապետություններ:

Բնակչության միգրացիայի մասշտաբներն ու ուղղությունները էապես փոխվեցին Խորհրդային վերջին տարիներին: 1988-1991թթ.-ը միգրացիոն հոսքերի տեսանկյունից հաճախ անվանում են ապակայունացման փուլ: Այս փուլում վճռորոշ դերակատարումներ ունեցան քաղաքական-հասարակական ու բնական աղետների գործոնները (ամբողջատիրության կործանում, ԽՍՀՄ փլուզում, ազգամիջյան հակամարտություններ և անվստահություն, սոցիալական լարվածություն, աղետալի երկրաշարժ և այլն): Ընդհանուր առմամբ 1988-1991թթ.-ին արտաքին միգրացիայի մնացորդի ցուցանիշը դրական էր: Այս ժամանակամիջոցում մոտ 420 հազ. հայ փախստականներ (շուրջ 360 հազ.-ը Ադրբեջանից, իսկ մնացածը՝ նախկին ԽՍՀՄ այլ տարածքներից) ներգաղթեցին Հայաստան: Դրան հակառակ, գրեթե 170 հազար հայաստաբնակ ադրբեջանցիներ արտագաղթեցին Հայաստանից: Արդյունքում երկրի բնակչության թիվն աճեց մոտ 250 հազարով կամ գրեթե 7%-ով: Դժբախտաբար, 1990-ական թվականների ծանր իրողությունների ճնշման տակ փախստականների զգալի մասը այնուհետ արտագաղթեց: Արտագաղթի այս ալիքը որոշ չափով ընդգրկեց նաև Հայաստանի մշտական բնակչությանը [13]: 1988թ.-ի Սպիտակի երկրաշարժի արդյունքում ԽՍՀՄ այլ հանրապետություններ տարհանվեց մոտ 200 հազ. մարդ (հիմնականում կանայք և երեխաներ), որոնց շուրջ 50 հազարը այլևս չվերադարձավ հայրենիք: Սակայն ավելի

սարսափելի է դրա այն հետևանքը, որ վերջիններս դեպի իրենց ձգելով իրենց ընտանիքների անդամներին և մերձավորներին, նպաստեցին երկրից բնակչության արտահոսքի այլքի ձևավորմանը և հետագա տարիների ընթացքում դրա զանգվածային երևույթի վերածմանը: Աշխատանքային կամ սեզոնային միգրացիան այս տարիներին գրեթե կանգ առավ, որովհետև պոտենցիալ աշխատանքային միգրանտների համարյա ամբողջ խումբը ներգրավվեց երկրաշարժի գոտու վերականգնման աշխատանքներում: ԽՍՀՄ-ի փլուզման հետևանքով դադարեցվեցին վերականգնողական աշխատանքները, որի հետևանքով նաև նորից աշխուժացավ աշխատանքային միգրացիան:

Այսպիսով, ՀՀ տարածքի բնակչության ձևավորման գործում միգրացիայի դերը, կախված երկրի սոցիալ-տնտեսական պայմաններից և տարածաշրջանի աշխարհաքաղաքական իրադրությունից, զգալի փոփոխություններ է կրել և ունեցել է միգրացիոն տեղաշարժերի ինտենսիվ և պասիվ փուլեր: Սակայն, ընդհանուր առմամբ, վերլուծվող ժամանակահատվածում միգրացիայի մնացորդը բնութագրվում է դրական ցուցանիշներով, որը և նպաստել է բնակչության թվի արագ աճին:

2.2 ՀՀ բնակչության միգրացիոն հոսքերի ձևավորման սոցիալ-տնտեսական պայմանների վերլուծությունը

Հայաստանի միգրացիոն իրավիճակը կտրուկ փոփոխությունների ենթարկվեց 1980-ական թթ.-ի վերջերից սկսած՝ պայմանավորված 1988թ.-ի Սպիտակի երկրաշարժով, ԽՍՀՄ փլուզման հետևանքով քաղաքական և սոցիալ-տնտեսական համակարգերի վերափոխումներով ու Արցախյան պատերազմի ծանր հետևանքներով: ՀՀ տնտեսության ամենամեծ անկումը եղել է անկախության առաջին տարիներին, մասնավորապես՝ 1992-1994թթ.-ին, երբ ՀՆԱ-ն կրճատվեց 55.9%-ով, իսկ ամենամեծ անկումը գրանցվեց 1992թ.-ին՝ 41.8%, որը ԱՊՀ երկրների միջինացված նույն ցուցանիշը գերազանցել է ավելի քան 6 անգամ [2]: Եթե այս տվյալները համադրենք ՀՀ բնակչության միգրացիայի տվյալների հետ, ապա կտեսնենք, որ այս ցուցանիշների միջև գոյություն ունի ուղիղ կապ, մասնավորապես՝ 1992-1994թթ.-ը հայտնի են որպես բնակչության զանգվածային արտագաղթի տարիներ և ՀՀ բնակչության միգրացիայի բացասական սալդոն ամենամեծն է եղել հենց այդ տարիներին և հատկապես՝ 1992թ.-ին (աղ. 1):

ՀՆԱ աճը և միգրացիայի սալդոյի գործակիցները 1992-2015թթ-ին


Տարիներ	ՀՆԱ աճը նախորդ տարվա նկատմամբ (%)	Միգրացիայի սալդոյի գործակից (‰)
1992թ.	58,2	-59
1993թ.	91,2	-40
1994թ.	105,4	-35,5
1995թ.	106,9	-10,9
1996թ.	105,9	-8
1997թ.	103,3	-8,5
1998թ.	107,2	-6,9
1999թ.	103,3	-5,5
2000թ.	105,9	-6,8
2001թ.	109,6	-4,7
2002թ.	113,2	-7,4
2003թ.	114	-8,5
2004թ.	110,5	-9,3
2005թ.	113,9	-9,6
2006թ.	113,2	-9,5
2007թ.	113,7	-10,7
2008թ.	106,9	-11,1
2009թ.	85,9	-12,5
2010թ.	102,2	-12,3
2011թ.	104,7	-9,4
2012թ.	107,2	-3,1
2013թ.	103,3	-8,1
2014թ.	103,6	-7,2
2015թ.	103	-8,6

Ընդ որում, ՀՆԱ անկումը մեծապես պայմանավորված էր արդյունաբերության ծավալների կտրուկ անկման հետ, քանի որ, եթե արդյունաբերական արտադրանքի ծավալները այդ երեք տարիներին կրճատվեցին ընդհանուր 48.7%-ով, ապա գյուղատնտեսության համախառն արտադրանքի ծավալները մնացին գրեթե նույնը: Դրանով է պայմանավորված նաև, որ անկախության առաջին տարիներին 1000 մարդու հաշվով ավելի մեծ թիվ էին կազմում քաղաքային բնակավայրերից արտագաղթողները: 1991-1994թթ.-ին ՀՆԱ անկումն ուղեկցվել է նաև գների անսախադեպ աճով: Եթե 1991թ.-ին սպառողական գների ինդեքսը կազմել է 274.1, ապա հետագա տարիներին այն կտրուկ աճել է և 1994թ.-ին կազմել է շատ բարձր՝ 5062.3 [18]: ՀՀ առաջին տարիներին բնակչության լայնածավալ արտագաղթը բացատրվում է այն հանգամանքով, որ

տնտեսական նման կտրուկ անկումն ուղեկցվում էր Արցախում շարունակվող պատերազմական իրավիճակով, անվերջանալի շրջափակումներով, քաղաքներում արդունաբերական ձեռնարկությունների փակման հետ կապված զանգվածային գործազրկության առաջացմամբ, ավերիչ երկրաշարժի հետևանքների վերացմանն ու խորացող էներգետիկ ճգնաժամի կասեցմանն ուղղված պետական կառավարման բարդություններով:

1994թ.-ից սկսած ՀՀ տնտեսական իրավիճակը սկսեց կայունանալ և 1995-2001թթ.-ին ՀՆԱ-ի ընդհանուր աճը կազմեց 50.3%, իսկ տարեկան միջին կտրվածքով՝ մոտ 6%: Ընդ որում ՀՆԱ-ի աճը այս տարիներին արդյունք էր տնտեսության գրեթե բոլոր ճյուղերի արտադրանքի և ծառայությունների ծավալների ավելացմանը: ՀՆԱ-ի փոքր, բայց հաստատուն աճը պայմանավորված էր մի քանի հանգամանքերով, որոնցից կարելի է առանձնացնել Արցախյան պատերազմում հրադադարի կնքումը և քաղաքական համակարգի զգալի կայունացումը, շուկայական հարաբերությունների կայացմանն ուղղված գործընթացները, սեփական դրամական միավորի ներդրումը և որպես դրա հետևանք ինքնուրույն դրամավարկային քաղաքականության իրականացման հնարավորությունները, հարկային քաղաքականության և վարչարարության կատարելագործման փորձերը, նոր արտաքին տնտեսական կապերի ձևավորումը: Հարկ է նշել նաև, որ 1990-ական թթ.-ի առաջին տարիներին ՀՆԱ արտադրության ծավալներն այնքան էր կրճատվել, որ չնայած նախորդ 4 տարիներին գրանցված տնտեսական աճի՝ 1998թ.-ին ՀՆԱ-ի արտադրությունը կազմեց 1990թ.-ի ՀՆԱ-ի արտադրության ընդամենը 61%-ը [2]:

2002թ.-ից ՀՀ տնտեսությունը մտավ երկնիշ աճի փուլ, որը տևեց մինչև 2007թ.-ը: Այս 6 տարիների ընթացքում ՀՆԱ միջին տարեկան աճը կազմեց 13.1%: Այս ժամանակահատվածում տնտեսության երկնիշ աճը հիմնականում պայմանավորված էր շինարարության և ծառայությունների ծավալների կտրուկ աճով, որոնց միջին տարեկան աճը կազմել է համապատասխանաբար 33.3% և 20%: Արդյունաբերական արտադրանքի ծավալի միջին տարեկան աճը կազմել է 6.9%, գյուղատնտեսության համախառն արտադրանքի ծավալինը՝ 7.4%, իսկ առևտրի շրջանառությունը տարեկան միջինը աճել է 11.9%-ով (սկ. 3):



Նկար 3. ՀՀ տնտեսության հիմնական ճյուղերի արտադրությունների և ծառայությունների ծավալները 2000-2016թթ.-ին (մլն. դրամ)

2008թ.-ից սկսած վերջացավ ՀՀ տնտեսության երկնիշ աճի փուլը, և եթե 2008թ.-ին տնտեսական աճը ընդամենը նվազեց` կազմելով 6.9%, ապա 2009թ.-ին նկատվեց տնտեսական մեծ անկում` 14.1%-ի չափով: Այս պատկերը համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամի հետևանքն էր: Հենց 2009թ.-ին գրանցվեց 1994թթ.-ից ի վեր ՀՀ բնակչության միգրացիայի ամենամեծ բացասական սալոն` 38453 մարդ: Դրա հետ կապված 2008-2010թթ.-ին բարձրացավ ՀՀ աղքատության մակարդակը և եթե 2007թ.-ի դրությամբ այն կազմում էր 26.4%, ապա 2010թ.-ին այդ նույն ցուցանիշը կազմեց արդեն 35.8%: Ընդ որում, 2009թ.-ին տնտեսական նման չափի անկումը պայմանավորված էր առաջին հերթին շինարարության ծավալների կտրուկ անկման հետ` 37.4%, ինչպես նաև արդյունաբերության արտադրանքի ծավալի և առևտրի շրջանառության անկումով` համապատասխանաբար 7.6% և 6.6%-ներով: Իսկ ահա սույն տարում գյուղատնտեսության համախառն արտադրանքի ծավալը նվազեց ընդամենը 0.5%-ով, իսկ ծառայությունների ոլորտում անգամ չնչին աճ նկատվեց` 1.1%-ի չափով:

2010թ.-ին ՀՀ տնտեսության մեջ նկատվեց որոշակի աշխուժացում, գրանցվեց ՀՆԱ-ի 2.2%-ի աճ: Տնտեսական ոչ մեծ աճ գրանցվեց նաև 2011-2012թթ.-ին` 4.7% և 7.2%: Դրանով է պայմանավորված նաև, որ 2008-2010թթ.-ի համեմատությամբ որոշ չափով նվազեց նաև ՀՀ բնակչության ՄՍ-ի բացասական ցուցանիշը` հետևաբար և արտագաղթի ծավալները: Համեմատաբար նվազեցին նաև աղքատության և գործազրկության մակարդակները: 2012թ.-ից սկսած նվազեցին ՀՀ տնտեսական աճի

տեմպերը, իսկ 2016թ.-ին այն կազմեց ընդամենը 0.2%: 2016թ.-ին գրանցված այս ցուցանիշը պայմանավորված է հատկապես նախորդ տարվա համեմատությամբ գյուղատնտեսական համախառն արտադրանքի և շինարարության ծավալների կտրուկ նվազման հետ, որոնք կազմեցին համապատասխանաբար՝ 5.2% և 10.8%: Շինարարության ծավալներն ընդհանրապես 2009-2016թթ.-ին անընդհատ անկում են ապրել (բացառությամբ 2014թ.)՝ միջին տարեկան հաշվով 8.9%:

Ինչպես տեսնում ենք ՀՀ տնտեսական ցուցանիշների վերլուծությունից՝ 2009թ.-ի համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամից հետո ՀՀ տնտեսությունը ուշքի չի գալիս և անգամ 2016թ.-ին մոտեցել է գրոյական տնտեսական աճի սահմանագծին: Դրանով է պայմանավորված նաև, որ ՀՀ բնակչության միգրացիոն տեղաշարժերում չի նկատվում արտագաղթի ծավալների նվազման միտում, անգամ 2015թ.-ին բնակչության ՄՍ-ի բացասական ցուցանիշը մոտ 19%-ով գերազանցել է նախորդ տարվա նույն ցուցանիշին: Ընդ որում 2016թ.-ին գյուղատնտեսության համախառն արտադրանքի ծավալը նախորդ տարվա համեմատ նվազել է 5.2%-ով, որը ինչ-որ չափով վերահաստատում է մեր կողմից ստացված այն տվյալները, որ վերջին տարիներին ՀՀ բնակչության արտագաղթին լայնորեն մասնակցություն ունի հենց գյուղական բնակչությունը:

Ընդհանրացնելով կարող ենք նշել, որ 1990-ական թթ.-ին ՀՀ տնտեսության զարգացումը պայմանավորված է եղել տնտեսական վերափոխումներով և դրանց հետ փոխկապակցված մի շարք մարտահրավերներով, որի հետևանքով էլ ՀՀ-ից տեղի ունեցավ բնակչության զանգվածային արտագաղթ [51]: Տնտեսական զարգացմանը խոչընդոտող բազմաբնույթ խնդիրների աստիճանաբար լուծման արդյունքում 1990-ական թթ.-ի կեսերից նկատվեց տնտեսության որոշակի կայունացում, որը ուղեկցվում էր փոքր, բայց հաստատուն տնտեսական աճով: Դրան զուգահեռ կայունացավ նաև ՀՀ միգրացիոն իրավիճակը, արտագաղթը կորցրեց իր զանգվածային բնույթը: Տնտեսական աճի տեմպերը աստիճանաբար մեծացան և համեմատաբար բարձր մնացին մինչև 2009թ.-ի համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամը, երբ ՀՆԱ-ն 14.1% անկում ապրեց: Հենց այդ տարում էլ գրանցվեց ՀՀ բնակչության ՄՍ-ի ամենամեծ բացասական ցուցանիշը՝ սկսած 1994թ.-ից: Մեծացան նաև աղքատության և գործազրկության մակարդակները, իսկ զբաղվածության մակարդակը մի փոքր նվազեց [26]: Հետագա

տարիներին տնտեսության մեջ նկատվեց որոշակի աշխուժացում, սակայն տնտեսական աճի տեմպերը չհասան 2000-ականների առաջին տարիներին մակարդակին, ՀՀ տնտեսության ներկայիս իրավիճակը և զարգացման միտումները թույլ են տալիս եզրակացնել, որ մոտակա տարիներին ոչ միայն չեն սպասվում ՀՀ բնակչության արտագաղթի նվազման միտումներ, այլև դրանք հակված են դառնալու ավելի զանգվածային: Քանի որ չեն վերացել դրանք առաջացնող սոցիալ-տնտեսական գործոններն ու պայմանները; Բավական է նշել, որ 2015թ.-ի տվյալներով ՀՀ բնակչության աղքատության ցուցանիշը կազմել է 29,8%, իսկ գործազրկության մակարդակը՝ 18,5% [24]:

Բնակչության միգրացիոն հոսքերի ձևավորման և սոցիալ-տնտեսական ցուցանիշների միջև եղած փոխադարձ կապերի վերլուծությունն ենք կատարել նաև Երևան քաղաքի և ՀՀ մարզերի կտրվածքով: Հաշվի առնելով, որ ՀՀ տնտեսության տարածքային կառուցվածքն ունի հստակորեն արտահայտված միակենտրոն բնույթ և Երևանից ունեցած հեռավորության մեծացմանը զուգընթաց նվազում է նաև բնակչության խտությունը և տնտեսական յուրացվածության աստիճանը, ինչպես նաև փոփոխվում են միգրացիոն հոսքերի ձևավորման սոցիալ-տնտեսական և բնական այլ գործոններն ու պայմանները՝ նպատակարար հարմար ենք գտնում միգրացիայի վերլուծությունը կատարել հետևյալ երկու գոտիներով. **1)** Երևանը և նրա մերձակա գոտի, որն ընդգրկում է Երևան քաղաքն ու հարակից Արարատի, Արմավիրի, Կոտայքի և Արագածոտնի մարզերը **2)** ծարամասային գոտին, որն ընդգրկում է առավել լեռնային ռելիեֆ ունեցող Գեղարքունիքի, Տավուշի, Շիրակի, Լոռու, Վայոց Ձորի և Սյունիքի մարզերը:

1) Առաջին կամ հարակից գոտու մեջ մտնող Երևանն ու նրան հարակից մարզերը բնութագրվում են բնակչության բարձր խտությամբ և բնակչության բնական աճի ավելի բարձր ցուցանիշներով: Այս մարզերը բնութագրվում են աղքատության և գործազրկության համեմատաբար ավելի ցածր մակարդակով: Այսպես, 2008 և 2015թթ.-ին աղքատության ցուցանիշը Երևանում եղել է համապատասխանաբար՝ 20,1% և 25%, Արագածոտնի մարզում՝ 20,3% և 16,1%, Արարատի մարզում՝ 31,3% և 27,3%, Արմավիրի մարզում՝ 24,5% և 29,6% [27]: Համեմատաբար ցածր է նաև նշված մարզերի գործազրկության մակարդակը: Նշված մարզերում է նկատվում 1998-2015թթ.-ին ՄՍ-ի համեմատաբար ցածր բացասական ցուցանիշները: Մասնավորապես Երևանում այն

կազմել է 5,7%, Արմավիրի մարզում 7%, Արարատի մարզում 7,1%, իսկ Արագածոտնի մարզում 8.9%: ՄՍ-ի բացասական ցուցանիշը բարձր է գոտու միակ արդյունաբերական և քաղաքաբնակ Կոտայքի մարզում 11,1%, որտեղ համապատասխանաբար բարձր է նաև գործազրկության մակարդակը՝ 23% և աղքատության ցուցանիշը՝ 2008թ.՝ 39,5% և 2015թ.՝ 35,2%:

Երևան քաղաքի և հարակից մարզերի 1998-2015թթ.-ին ՄՍ-ի և արդյունաբերության, գյուղատնտեսության, շինարարության և ծառայությունների ծավալների բացարձակ ցուցանիշների շարժընթացների գրաֆիկների համադրումն ու տարածաժամանակային վերլուծությունը ցույց են տալիս դրանց միջև որոշակի կապի առկայության մասին: Այսպես, նշված մարզերի ՄՍ-ի բացասական ցուցանիշները ցածր են 1999-2002թթ.-ին, երբ նկատվում է տնտեսության հիմնական ճյուղերի աշխուժացման միտումներ: Մյուս միգրացիոն ակտիվացման փուլը նկատվում է 2012-2013թթ.-ին, երբ նույնպես նկատվել է ճգնաժամից հետո տնտեսության՝ հատկապես արդյունաբերության և գյուղատնտեսության աճի տեմպերի որոշակի բարձրացում:

Երևանում և հարակից բոլոր մարզերում ՄՍ-ի բացասական ցուցանիշները բարձրանում են 2008-2010թթ.-ին, երբ տնտեսության որոշ հիմնական ճյուղերի արտադրանքի ծավալների աճի տեմպերը խիստ նվազել են, իսկ որոշներինը՝ կտրուկ անկում ապրել (օր.՝ շինարարության ծավալները): Սա պայմանավորված է 2009թ.-ին համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամի հանգամանքով: Առավել գյուղաբնակ Արագածոտնի մարզում ՄՍ-ի բացասական ցուցանիշը բարձրացել է նաև 2013-2015թթ.-ին:

2) Երկրորդ կամ ծայրամասային գոտու մեջ մտնող մարզերը բնութագրվում են բնակչության ավելի ցածր խտությամբ, ժողովրդագրական առավել լարված իրավիճակով, աղքատության և գործազրկության առավել բարձր ցուցանիշներով [61]: Այսպես, աղքատության ցուցանիշը 2008 և 2015թթ.-ին հատկապես բարձր է եղել Շիրակի մարզում համապատասխանաբար 42,4% և 45,3%, Լոռու մարզում՝ 34,2% և 36,2% և Գեղարքունիքի մարզում՝ 32% և 32,1%; Նույն տարիներին ծայրամասային գոտում աղքատության ցուցանիշները համեմատաբար ցածր են եղել Սյունիքի՝ 20,3% և 24,5%, Վայոց Ձորի՝ 21,1% և 16,9% և Տավուշի՝ 23,2% և 35,3% մարզերում: Գործազրկության

մակարդակը համեմատաբար բարձր է եղել առավել արդյունաբերական Շիրակի, Լոռու և Սյունիքի մարզերում:

Նշված մարզերում ՄՍ-ի ցուցանիշները ողջ քննարկվող ժամանակահատվածում եղել են բացասական: ՄՍ-ի բացասական ամենաբարձր ցուցանիշները նկատվել են աղքատության և գործազրկության ամենաբարձր ցուցանիշներ ունեցող առավել քաղաքաբնակ Լոռու և Շիրակի մարզերում: Մինևսյն ժամանակ աղքատության և գործազրկության համեմատաբար ցածր ցուցանիշներ ունեցող գյուղաբնակ Տավուշի մարզում նկատվել է այս գոտում ՄՍ-ի ամենացածր բացասական ցուցանիշը: Այսինքն, երկրորդ գոտու մարզերի կտրվածքով նույնպես նկատվում է այն օրինաչափությունը, որ միգրացիոն հոսքերի ձևավորման և բնակչության աղքատության և գործազրկության մակարդակների միջև գոյություն ունի ուղիղ կապ:

Ճայրամասային գոտու գրեթե բոլոր մարզերում ՄՍ-ի ցուցանիշները ցածր են եղել 2000-2002թթ.-ին (բացառությամբ Վայոց Ձորի մարզի) և 2011-2012թթ.-ին, երբ տնտեսության հիմնական ճյուղերը տնտեսական ճգնաժամից հետո ակտիվության որոշակի նշաններ են ցույց տվել: Մինչդեռ, բոլոր վերը նշված մարզերը 2002-2010թթ.-ի ժամանակահատվածում ՄՍ-ի բարձր բացասական ցուցանիշներ են ունեցել տարբեր տարիների (առավել հաճախակի՝ 2009-2010թթ.-ին), իսկ 2013-2015թթ.-ին այդ ցուցանիշները բարձր են եղել հատկապես առավել գյուղատնտեսական մասնագիտացում ունեցող մարզերում, երբ ակտիվացել են գյուղական բնակչության արտագաղթի ծավալները:

2.3 ՀՀ բնակչության արտաքին միգրացիայի մասշտաբները

Անկախության առաջին տարիներին ՀՀ-ում տեղի ունեցած քաղաքական և սոցիալ-տնտեսական բնույթի խոր և արմատական տեղաշարժերը փոխեցին միգրացիայի ուղղություններն ու ծավալները, շարժառիթներն ու ձևերը: Բնական է, որ 1990-ական թթ.-ին մարդկանց ներհոսքը դեպի ՀՀ աննշան էր՝ համեմատած արտահոսքի ծավալների հետ: Ընդ որում հարկ է նշել, որ չնայած չի կարելի ժխտել այդ ժամանակ ՀՀ-ում ստեղծված սոցիալ-տնտեսական և քաղաքական ծանր իրավիճակի օբյեկտիվությունը, սակայն դրա վրա աննշան չէր նաև սուբյեկտիվ գործոնի դերը: Հետևաբար երկրի ճիշտ, արդյունավետ

և օպտիմալ կառավարման պարագայում բնակչության արտագաղթը չէր կրի նման մեծ ծավալներ:

Ազգային վիճակագրական ծառայությունը ստույգ տվյալներ չունի, թե 1990-ական թթ.-ի ընթացքում որքան մարդ է մասնակցել բնակչության միգրացիային, որքան են եկողների և մեկնողների իրական թվաքանակները: Կան տվյալներ, որոնք վերաբերում են միայն միգրանտների այն հատվածին, որոնք ՀՀ-ից արտագաղթելուց առաջ դուրս էին գալիս հաշվառումից կամ վերադառնալուց մտնում հաշվառման մեջ: Սակայն պարզ է, որ այդ միգրանտները միգրացիաներին մասնակցածների ընդհանուր թվի միայն մի փոքր մասն էին կազմում: Եղած պաշտոնական տվյալների հիման վրա հնարավոր չէ որոշել միգրացիայի իրական մասշտաբներն ու բնույթը, պատճառներն ու այլ օրինաչափություններ:

Ներկա փուլում ՀՀ-ում օգտագործվում է բնակչության միգրացիայի վերաբերյալ տեղեկությունների ստացման չորս հիմնական աղբյուր՝ **ա)** մարդահամարներ **բ)** բնական և մեխանիկական շարժի ընթացիկ հաշվառումներ **գ)** ընտրանքային կամ հատուկ կազմակերպված վիճակագրական և սոցիոլոգիական հետազոտություններ **դ)** բնակչության ռեգիստրներ և հաշվառումների այլ տեսակներ: Նշված բոլոր աղբյուրներն էլ ունեն իրենց թերություններն ու առավելությունները, փոխլրացնում են միմյանց և միայն վերջիններիս միասնական օպտիմալ օգտագործմամբ կարելի է ստանալ հավաստի և ամբողջական պատկերացում բնակչության թվի, տեղաբաշխման, կառուցվածքի, միգրացիայի և վերարտադրության վերաբերյալ:


Անկախության առաջին տարիներին միգրացիոն շարժի հաշվառման գործընթացը լավ չէր կազմակերպվում օբյեկտիվ և սուբյեկտիվ պատճառներով: Դա հիմնականում կապված էր նախկին ԽՍՀՄ-ում քաղաքացիների պարտադիր գրանցման համակարգի քառսային վիճակի հետ, ինչպես նաև միգրանտները որոշակի պատճառներով չէին ցանկանում հայտնվել պաշտոնական գործադիր մարմինների տեսադաշտում: Տարբեր օբյեկտիվ և սուբյեկտիվ պայմաններից ելնելով անընդհատ ձգձգվում էր հանրապետությունում մարդահամարի անցկացումը: Այդ իսկ պատճառով, Հայաստանի անկախության առաջին տարիներին բնակչության միգրացիայի իրական տվյալներ ստանալու նպատակով կատարվում էին մասնավոր հետազոտություններ տարբեր գիտնականների, հայ և միջազգային փորձագետների և կազմակերպությունների կողմից:

1995թ.-ին ՄԱԿ-ի զարգացման ծրագրի ազգաբնակչության հիմնադրամի (UNFPA) հովանավորությամբ, Ս.Ա. Կարապետյանի գլխավորած աշխատանքային խումբն անցկացրեց ընտրանքային հետազոտություն և ուսումնասիրեց արտաքին միգրացիոն շրջանառությունը, կատարեց Հայաստանի 1991-1995թթ.-ի էմիգրացիոն և իմիգրացիոն իրական հոսքերի գնահատումը [45]: Հետազոտության արդյունքներով ճշգրտվել է, որ ՀՀ-ից 1991-1995թթ.-ին մեկնել է մոտ 900 հազար մարդ, որից նշված տարիներին վերադարձել է ընդամենը մոտ 230 հազարը: Այսինքն՝ մեկնողներից մոտ 670 հազար մարդ հետազոտության պահին գտնվել է Հայաստանից դուրս: Ստացված տվյալների լրացուցիչ հիմնավորման և հստակեցման նպատակով տրամաբանական վերլուծության են ենթարկվել ՀՀ քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչության պաշտոնական տվյալները, ըստ որի՝ 1992-1995թթ.-ին ՀՀ օդային ուղևորափոխադրումների գումարային բացասական մնացորդը կազմել է 535 հազար մարդ: Հեղինակներն իրենց հետազոտության արդյունքում ստացված ՄՍ-ի և օդային ուղևորափոխադրումների մնացորդի միջև եղած մոտ 135 հազար մարդու տարբերությունը բացատրում է նրանով, որ որոշակի թվով արտագաղթյալներ մեկնել են մինչև 1992թ.-ի կեսերը գործած «Երևան-Թբիլիսի» երկաթուղային ուղերթով, ինչպես նաև մեկնել ու չեն վերադարձել ավտոբուսներով կազմակերպված տուրիստական ճամփորդություններից, ինչպես նաև փոքր թիվ չեն կազմել 1992-1993թթ.-ին բեռնատար ինքնաթիռներով անօրինական կամ կիսաօրինական մեկնողները:

ՀՀ վիճակագրական, պետական ռեգիստրի և վերլուծության նախարարության և Եվրոմիության վիճակագրական ծառայության (Եվրոստատ) կողմից «ՏԱՍԻՍ» ծրագրով համատեղ իրականացվող «Միգրացիոն հետազոտություն» նախագծի շրջանակներում 1998թ.-ի մայիս ամսից մինչև 1999թ.-ի հունիս ամիսն անցկացվել է ՀՀ արտաքին միգրացիայի ընտրանքային հետազոտություն՝ 2 փուլով [22]: Հետազոտության առաջին փուլն ընդգրկել է ՀՀ սահմանային հատման այն կետերը, որոնց միջոցով իրականացվում են հիմնական ուղևորափոխադրումները, իսկ երկրորդ փուլը՝ հանրապետության տարածքում 3600 տնային տնտեսությունները: Ըստ այդ հետազոտության արդյունքների 1991-1998թթ.-ի ընթացքում ՀՀ-ից ընդհանուր առմամբ հեռացել են 760-780 հազար մարդ, որից միայն 610 հազարն է հանդիսացել հանրապետության մշտական բնակիչ:

Ըստ ՀՀ ԱՎԾ տվյալների, 2001թ.-ի մարդահամարի տվյալների ճշգրտման արդյունքում, 1991-2001թթ.-ին ՀՀ բնակչության թիվը միգրացիայի միջոցով պակասել է 633.8 հազար մարդով, իսկ ըստ Ռ.Եգանյանի և Կ.Կույումջյանի կողմից կատարված փորձագիտական հաշվարկների՝ ՀՀ բնակչության միգրացիայի բացասական մնացորդը ստացվել է 886 հազար մարդ [8]:

Ինչպես տեսնում ենք, վերոնշյալ գրեթե բոլոր հետազոտություններում օգտագործվում է 1992-2000թթ.-ի ընթացքում տեղի ունեցած օդային ուղևորափոխադրումների ծավալների, մեկնողների և ժամանողների տարբերությունների տվյալները, քանի որ, նախ օդային տրանսպորտը հանդիսացել է տվյալ ժամանակահատվածում ուղևորափոխադրումների հիմնական միջոցը, ապա նաև ստույգ տվյալներ չեն եղել այլ միջոցներով մարդկանց սահմանահատումների վերաբերյալ: Ստորև ներկայացնում ենք 1992-2000թթ.-ին ուղևորափոխադրումների ծավալներն՝ ըստ ՀՀ քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչության տվյալների (սկ. 4):



Նկար 4. Ուղևորափոխադրումների ծավալները 1992-2000թթ.-ին՝ ըստ ՀՀ քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչության տվյալների, (հազ. մարդ)

Նկար 4-ից երևում է, որ այս ժամանակահատվածում ՀՀ-ից մեկնողները գերազանցել են ժամանողներին 643.9 հազ. մարդով, ընդ որում այդ տարբերության 77%-ից ավելին՝ 497.5 հազարը, բաժին է ընկնում միայն 1992-1994թթ.-ին: Հաշվի առնելով, որ օդային, ինչպես նաև այլ միջոցներով սահմանահատումների տվյալները անմիջապես չեն արտահայտում միգրացիայի ցուցանիշները, կատարվում են նաև այլ տեսակի փորձագիտական և սոցիոլոգիական հետազոտություններ:

Այս առումով ուշադրության է արժանի ակադեմիկոս Վ.Ե. Խոջաբեկյանի կողմից առաջարկված Էմիգրանտների թվի հաշվարկման նոր մոտեցումը, որտեղ արտագաղթի չափը որոշելու համար օգտագործվել է ոչ թե ուղևորափոխադրումների տվյալները, այլ՝ 1990 ու 1995թթ.-ին և 1996 և 2000թթ.-ին ծնված երեխաների թվի տարբերությունները, իհարկե նաև հաշվի առնելով այն հանգամանքը, որ բացի բնակչության թվաքանակից, ծնելիության վրա ազդում են նաև բազմաթիվ շատ այլ գործոնները: Տվյալ մեթոդում ելակետային է համարվում այն, որ պետք է հիմնվել նրա վրա, թե որքան բնակչությունը կարող է ապահովել այդ ժամանակ գրանցված ծնունդների չափը, այլ կերպ ասած՝ ծնունդների նվազման ծավալներին համապատասխան հաշվարկել բնակչության թվի նվազման ծավալները: Եվ արդյունքում, հաշվի առնելով վերը նշված գործոնները, հեղինակը ստացել է, որ 1991-2000թթ.-ի ընթացքում ՀՀ-ից արտագաղթել է մոտ 1 մլն 250-1 մլն 300 հազ. մարդ, որից 1991-1995թթ.-ին բաժին է ընկնում մոտ 950 հազարը: Ճիշտ է, այս տվյալները չի կարելի ընդունել որպես ճշգրիտ, որովհետև շատ են սուբյեկտիվ մոտեցումները, սակայն կարելի է պնդել, որ որքան էլ այս տվյալները չեն արտահայտում այդ տարիներին ՀՀ-ից բնակչության արտագաղթի ճշգրիտ մասշտաբները, սակայն դրանք իրականությանը շատ ավելի մոտ են և ավելի ճիշտ են արտացոլում այդ տարիներին տեղի ունեցած մարդկանց զանգվածային արտագաղթը, քան եղած պաշտոնական տվյալները:

Կարծում ենք, որ ավելի կարևոր է ոչ թե այն հանգամանքը, թե կոնկրետ ինչքանով է պակասել մեր երկրի բնակչությունը, այլ այն, որ հաշվի առնելով, որ ըստ պաշտոնական տվյալների՝ Հայաստանում ծնունդների թիվը 1991թ.-ին կազմել է 77825 մարդ, իսկ 2000թ.-ին՝ ընդամենը 34276 մարդ, այսինքն՝ 56 %-ով պակաս: Սա ակնհայտորեն վկայում է այն մասին, որ ՀՀ բնակչության արտագաղթը մեծ ծավալներ է ունեցել: Իսկ 2000թ.-ին բնական աճի գործակիցը մոտ 5 անգամ փոքր է եղել 1991թ.-ի բնական աճի գործակիցից (1991թ.՝ 15.2%, 2000թ.՝ 3.2%), որն էլ իր հերթին նշանակում է, որ արտագաղթողների մեջ հատկապես մեծ թիվ են կազմել երիտասարդները, որոնք պետք է ապահովեին ծնելիության բարձր ցուցանիշները:

2001թ.-ին ՀՀ-ում անցկացված առաջին մարդահամարը հստակորեն ցույց տվեց, մինչ այդ կատարված ընթացիկ հաշվառումների տվյալների անճշտությունները: Նմանատիպ իրավիճակներում, երբ մեծ տարբերություններ են առաջանում մարդահամարների և


ընթացիկ հաշվառումների ընթացքում ստացված տվյալների միջև, օգտագործում են միջազգայնորեն ընդունված հետադարձ հաշվարկի համաչափ տարածման մեթոդաբանությունը, սակայն դա ՀՀ դեպքում կիրառելի չէ, քանի որ միգրացիոն ակտիվությունը բաժին է ընկել հատկապես 1992-1994թթ.-ին: Այդ իսկ պատճառով հետհաշվարկի հիմքում դրվել է միգրացիայի ճշգրտման սկզբունքը: Ճշգրտման գործակիցների հիմքում դրվել են 1992-2000թթ.-ին վարչական աղբյուրներից ստացված ժամանումների և մեկնումների ընդհանուր տարբերության մեջ յուրաքանչյուր տարվա տեսակարար կշիռները:

ՀՀ երկրորդ մարդահամարը անցկացվեց 2011թ.-ի հոկտեմբեր ամսին: Այս մարդահամարն էլ իր հերթին բացահայտեց 2002-2010թթ.-ին տեղի ունեցած ընթացիկ հաշվառումների արդյունքների անճշտությունները: Ըստ ընթացիկ հաշվառումների՝ ՀՀ մշտական բնակչությունը պետք է կազմեր մոտ 3.281 հազար մարդ, սակայն մարդահամարի արդյունքներով այն կազմեց ընդամենը 3.018.854 մարդ, այսինքն՝ այս անգամ շեղումը կազմեց մոտ 262.1 հազար մարդ: ՀՀ բնակչության միգրանտների վերաբերյալ ԱՎԾ-ի կողմից ներկայացված պաշտոնական տվյալների հավաստի չլինելու հանգամանքը ապացուցվում է մարդահամարների և տարեկան ընթացիկ հաշվառումների արդյունքում ստացված տվյալների մեծ տարբերությամբ:

Հայտնի է, որ ցանկացած տարածքի բնակչության թիվը փոփոխվում է 2 եղանակով՝ բնական և մեխանիկական շարժերի միջոցով: Հետևաբար եթե ունենանք մշտական բնակչության և բնական շարժի տվյալները, ապա հեշտությամբ կարող ենք ստանալ մեխանիկական շարժի տվյալները, այն է՝ միգրացիայի սալոն: Այստեղ միակ խնդիրը կայանում է ելակետային տվյալների հավաստիության մեջ: Քանի որ բնակչության բնական շարժի տվյալները հավաստի են, ապա բնակչության թվաքանակի ճշգրիտ տվյալների առկայության դեպքում կարող ենք որոշել բնակչության ՄՍ-ի իրական ցուցանիշները: Որպես ճշգրիտ տվյալներ կարող ենք ընդունել 2001 և 2011թթ.-ի մարդահամարների ժամանակ ՀՀ մշտական բնակչության վերաբերյալ ստացված տվյալները և վերոնշյալ մոտեցմամբ պարզենք, թե այդ 10 տարիների ընթացքում որքան է կազմել ՀՀ բնակչության ՄՍ-ն: Հաշվի առնելով, որ մարդահամարները անցկացվել են տարեվերջին մոտ՝ հոկտեմբեր ամսին, ապա բնական շարժի տվյալները կվերցնենք 2002թ.-ի հունվարի 1-ից մինչև 2012թ.-ի հունվարի 1-ն ընկած ժամանակահատվածի համար: Այսպիսով, նշված 10

տարիների ընթացքում ՀՀ բնակչության բնական հավելանքը կազմել է 126.034 մարդ: 2001թ.-ի մարդահամարի ժամանակ ՀՀ մշտական բնակչությունը կազմել է 3.213.011 մարդ, իսկ 2011թ.-ի մարդահամարի ժամանակ՝ 3.018.854 մարդ [29, 30]: Արդյունքում ստացվում է, որ երկու մարդահամարների միջև ընկած 10 տարում ՀՀ բնակչության բացասական ՄՍ-ն կազմել է 320.191 մարդ, այլ կերպ ասած՝ բնակչության թիվը միգրացիայի միջոցով կրճատվել է 10%-ով: Համոզված ենք, որ ստացված տվյալները ճիշտ են, քանի որ ինչպես ցույց տվեցինք հաշվարկման ժամանակ, օգտագործվել են ելակետային բացառապես ճշգրիտ տվյալներ: Տարեկան միջինացված կտրվածքով այն կազմում է մոտ 32 հազար մարդ, այսինքն՝ 2002-2011թթ.-ն ընկած ժամանակահատվածում յուրաքանչյուր տարի միջինը այդքանով ՀՀ բնակչությունը միգրացիաների միջոցով պակասել է: Իհարկե, սա անհանգստացնող երևույթ է, որը խոսում է արտագաղթի բարձր տեմպերի մասին, մինչդեռ պաշտոնապես գրանցված միգրանտները շատ ավելի փոքր թիվ են կազմում: Նույն մոտեցմամբ հաշվարկել ենք, թե միգրացիաների արդյունքում որքանով են փոփոխվել ՀՀ բոլոր քաղաքների բնակչության թվաքանակները 2001-2011թթ.-ի միջմարդահամարային տարիների ընթացքում և ստացված արդյունքների հիման վրա առանձնացրել ենք քաղաքների 4 տիպ (տես. հավ. 1):

Բնականաբար, բոլոր տարիների համար չենք կարող ունենալ ՀՀ մշտական բնակչության ստույգ տվյալներ, քանի որ դրանց հաշվման գործում բացի մարդահամարների ելակետային տվյալներից, օգտագործվում են նաև ընթացիկ հաշվառումների և տնային տնտեսություններում կատարվող հետազոտությունների տվյալները: Սակայն կարծում ենք, որ ԱՎԾ-ի կողմից ներկայացված ՀՀ մշտական բնակչության թվի վերահաշվարկված տվյալները կարելի է ելակետ համարել միգրացիայի ցուցանիշների հաշվարկման համար: Ինչպես երևում է ստացված տվյալներից, ՀՀ բոլոր տարիներին բնակչության տեղաշարժերում արտագաղթը գերազանցել է ներգաղթին (սկ. 5, հավ. 2):



Նկար 5. ՀՀ բնակչության միգրացիայի սալդոն 1992-2015թթ.-ին, (մարդ)

Հատկապես այդ տարբերությունը մեծ է եղել 1992-1994թթ.-ի ընթացքում, որի մասին արդեն խոսել ենք: Իսկ դրանից հետո մինչև 2015թ.-ը, միջինացված տվյալներով միգրացիայի բացասական սալդոն կազմել է տարեկան 27 հազար մարդ: Վերոնշյալ մոտեցմամբ հաշվման դեպքում ստացվում է, որ իր անկախության 24 տարիների ընթացքում (1992-2015թթ.) Հայաստանի բնակչությունը միգրացիաների միջոցով պակասել է 1.036.426 մարդով: ՀՀ բնակչության միգրացիայի բացասական մնացորդը սկսել է զգալիորեն նվազել 1990-ական թվականների երկրորդ կեսից:

Սակայն վերջին տարիներին արտագաղթի մասշտաբների աճին համապատասխան աճել է նաև ՄՄ-ի բացասական ցուցանիշները, իսկ 2012թ.-ին ՄՄ-ի համեմտաբար ցածր բացասական ցուցանիշը կարծում ենք հետևանք է ոչ թե տվյալ տարում արտագաղթի մասշտաբների էական նվազման, այլ պայմանավորված է ներգաղթողների թվի կտրուկ աճով: Մասնավորապես 2011թ.-ից սկիզբ առած Սիրիական ճգնաժամի հետևանքով այնտեղից փախուստի դիմած հայերի մի մասը (համաձայն որոշ աղբյուրների՝ 15-20 հազ.) ապաստան գտան ՀՀ-ում:

Բնակչության միգրացիոն տեղաշարժերի վերաբերյալ, ինչպես արդեն նշել ենք, որոշակի պատկերացում կարելի է կազմել նաև իմանալով տարվա ընթացքում սահմանահատումների քանակը: 2000թ.-ից սկսած անցագրային հսկիչ կետերից արդեն ստացվում են սահմանահատումների վերաբերյալ ստույգ տվյալներ, որոնք տեղի են ունենում օդային, ավտոմոբիլային և երկաթուղային տրանսպորտային միջոցներով: Այդ տվյալները տրամադրում է ՀՀ տարածքային կառավարման նախարարության միգրացիոն

գործակալությունը, իսկ 2010թ.-ից սկսած տվյալների աղբյուրը՝ սահմանային էլեկտրոնային կառավարման տեղեկատվական համակարգն է: (տես հավ. 3): Ինչպես տեսնում ենք հավելված 3-ի տվյալներից, աստիճանաբար մեծանում է ՀՀ ուղևորաշրջանառության ծավալները, տարեցտարի համաչափորեն ավելի մեծ թվով մարդիկ են ժամանում ՀՀ և մեկնում այստեղից: Մեր կարծիքով սա հիմնականում պայմանավորված է ՀՀ-ում տուրիզմի ոլորտի աստիճանաբար զարգացման, արտաքին աշխարհի հետ ավելի ինտենսիվ կապերի հաստատման, կրթական և գործնական տարբեր միջազգային ծրագրերին ինտեգրման և այլ հանգամանքներով:

Եթե միավորենք նկար 4-ի և հավելված 3-ի տվյալները (ուղևորափոխադրումների ծավալները 1992-1999թթ.-ին և սահմանահատումների քանակը 2000-2015թթ.-ին), ապա կստանանք, որ 1992-2015թթ.-ի ընթացքում ՀՀ-ից մեկնումների թիվը մոտ 1.013 հազար մարդով ավելի է եղել ՀՀ ժամանումների թվից: Ստացված թիվը բավական մոտ է այն թվին, որը հաշվումների արդյունքում մենք ստացանք որպես 1992-2015թթ.-ի ՀՀ բնակչության միգրացիայի մնացորդ (1.036 և 1.013 հազար մարդ): Շատ դժվար, իսկ ներկայիս օրենսդրական պայմաններում գրեթե անհնարին է տարանջատել, թե սահմանահատում կատարած մարդկանցից որոնք են միգրանտներ, և որոնք ոչ: Ուստի, սահմանահատումների տվյալները կարող են միայն հիմք հանդիսանալ հասկանալու մարդկանց տեղաշարժերն ու դրանց մասշտաբները, սակայն ոչ՝ միգրացիոն տեղաշարժերն ու դրանց մասշտաբները:

ՀՀ ազգային վիճակագրական ծառայությունը՝ Համաշխարհային բանկի, ԱՄՆ միջազգային զարգացման գործակալության և այլ դոնոր կազմակերպությունների աջակցությամբ, իրականացնում է տնային տնտեսությունների կենսամակարդակի ամբողջացված հետազոտություն (SSYԱՀ), որը ԱՎԾ-ի կողմից հանդիսանում է միգրացիայի վերաբերյալ հիմնական տեղեկատվական աղբյուր: SSYԱՀ հետազոտությունները հնարավորություն են տալիս տեղեկություններ ստանալ միգրացիոն գործընթացներում ներգրավված 15 և բարձր տարիքի տնային տնտեսությունների անդամների գտնվելու վայրի և մեկնելու պատճառների վերաբերյալ: 2015թ.-ին տեղի ունեցած հետազոտության համար ընտրվել է 5184 տնային տնտեսություն, որից 3240-ը՝ քաղաքային, իսկ 1944-ը՝ գյուղական բնակավայրերից: Ըստ այդ հետազոտության արդյունքների՝ տնային տնտեսությունների 5.3%-ը 2012-2015թթ.-ին ներգրավված են եղել

արտաքին և ներքին միգրացիոն գործընթացներում, որոնք կազմել են տնային տնտեսությունների 15 և բարձր տարիքի անդամների 9.5%-ը: 2012-2015թթ.-ին միգրացիոն գործընթացներում ներգրավված 15 և բարձր տարիքի անդամների տնային տնտեսությունների անդամների 55.6%-ը (շուրջ 130 հազ. մարդ) 2015թ.-ի դրությամբ դեռևս բացակայել են և գտնվել են արտերկրում, ՅՅ այլ մարզերում և Երևանում, 41%-ը (շուրջ 96 հազ.մարդ) վերադարձել են մեկնումներից, իսկ 3.4%-ն առաջին անգամ է ժամանել բնակավայր (շուրջ 7.7 հազ.մարդ): Նշված ժամանակահատվածում արտաքին և ներքին միգրացիոն տեղաշարժերում ընդգրկված տնային տնտեսությունների 15 և ավելի բարձր տարիքի անդամների` 11%-ի տեղաշարժերը 2015թ.-ի դրությամբ եղել են ներհանրապետական` Երևան քաղաքում և ՅՅ մարզերում, 10.5%-ը` ԼՂՀ-ում, իսկ մնացած 78.5%-ը` միջպետական, որի գերակշիռ մեծամասնությունը` դեպի ՌԴ (89.3%-ը): [20]

Բնակչության միգրացիայի ուսումնասիրություններում պետք է չանտեսել ժամանակավոր միգրացիայի կարևորությունը: ՅՅ պարագայում ժամանակավոր միգրացիայի հիմնական տեսակը աշխատանքային-սեզոնային միգրացիան է, իսկ հիմնական ուղղությունը` դեպի ՌԴ: Այսպիսի միգրացիաները հաշվառումների և մարդահամարների ժամանակ օբյեկտիվ և սուբյեկտիվ պատճառներով լիարժեք հաշվարկման չեն ենթարկվում, սակայն ակնհայտ է, որ սրանց մասշտաբները մի քանի անգամ ավելի մեծ են, քան մշտական միգրացիաներինը: Դրա ապացույցն է մարդահամարների ժամանակ գրանցված մշտական և առկա բնակչության ահռելի տարբերությունները: Հայաստանից հեռացող միգրանտները հիմնականում խուսափում են պաշտոնապես ընդունված կարգով միգրացիոն ակտը գրանցելուց: Սա պայմանավորված է այն հանգամանքով, որ նրանք ցանկանում են հնարավոր վերադարձի դեպքում քիչ խնդրներ ունենալ:

Ժամանակավոր միգրացիայի մասշտաբների մասին կարելի է պատկերացում կազմել իմանալով ժամանակավոր բացականների թիվը, որի տվյալները ստացվում են մարդահամարների ժամանակ: Այսպես, 2011թ.-ի մարդահամարի տվյալներով ՅՅ ժամանակավոր բացականների թիվը կազմել է 176.611 մարդ, որը կազմել է բնակչության 5.9%-ը [30]: Բնականաբար այս թվի մեծ մասը կազմում են հենց աշխատանքային միգրանտները, և միայն մի փոքր մասը` գործուղման, կրթական ծրագրերով,

ճանապարհորդության կամ այլ նպատակներով մեկնածները: Մարդահամարի արդյունքում ստացված ժամանակավոր բացակաները բավականին մեծ թիվ են կազմում, քանի որ այն անցկացվել է հոկտեմբեր ամսին, երբ սովորաբար աշխատանքային միգրանտները դեռևս վերադարձած չեն լինում: Պատահական չէ, որ ժամանակավոր միգրանտների մոտ 66.6%-ը կազմում են տղամարդիկ, իսկ 33.4%-ը` կանայք: Դա ևս մենք անգամ վերահաստատում է, որ սեզոնային-աշխատանքային միգրացիաներում հիմնականում ներգրավված են տղամարդիկ:

Միգրացիայի արդի վիճակի գնահատման և տարածաշրջանային առանձնահատկությունները պարզելու համար կարևոր է վերլուծել նաև Երևան քաղաքի և ՀՀ մարզերի ժամանակավոր բացակաների թվաքանակները: Առկա տվյալների հիման վրա մարզերը և Երևան քաղաքը կարելի է միավորել երեք խմբի մեջ:

Առաջին խմբի մեջ մտնում են այն մարզերը, որոնցում ժամանակավոր բացակաների բաժինը բնակչության ընդհանուր թվում կազմում է 2%-6%: Այս խումբը կազմում են Երևան քաղաքը և նրան հարակից գոտու` Արմավիրի, Արարատի, Արագածոտնի և Կոտայքի մարզերը:

Երկրորդ խմբի մեջ մտնում են ծայրամասային գոտու այն մարզերը, որոնցում ժամանակավոր բացակաների բաժինը բնակչության ընդհանուր թվում կազմում է 6,1%-10%: Այս խումբը կազմում են աղետի գոտում գտնվող Շիրակ և Լոռու մարզերը:

Երրորդ խմբի մեջ են մտնում ծայրամասային գոտու այն մարզերը, որոնցում ժամանակավոր բացակաների բաժինը բնակչության ընդհանուր թվում կազմում է 10,1%-17%: Դրանք լեռնային և սահմանամերձ Սյունիքի, Վայոց ձորի, Տավուշի և Գեղարքունիքի մարզերն են:

Ընդհանուր օրինաչափությունն այն է, որ ժամանակավոր բացակաների բաժինը բնակչության ընդհանուր թվում մեծանում է Երևանից ունեցած հեռավորության մեծացմանը զուգընթաց: Երևանին հարակից մարզերի ցածր ցուցանիշները բացատրվում են նրանով, որ դրանց բնակչությունը առանց բնակության վայրը փոխելու հնարավորություն ունեն աշխատանքի կամ կրթության նպատակներով ճոճանակային միգրացիայով կապվելու Երևանի հետ, որից զուրկ են ծայրամասային գոտու բնակչությունը: Ընդ որում, եթե քաղաքային բնակչության ժամանակավոր բացակաները կազմում են բնակչության 4.5%-ը, ապա գյուղական բնակչության դեպքում` 8.1%: Սակայն

եթե այդ հաշվարկից հանենք Երևան քաղաքի բնակչությանը, ապա ՀՀ մնացած քաղաքային բնակչության համար այդ ցուցանիշը կկազմի 7.3%:

2.4 ՀՀ բնակչության միգրացիոն տրամադրվածությունների ձևավորման սոցիալ-աշխարհագրական վերլուծությունը

Բնակչության արտաքին միգրացիոն հոսքերի վրա ազդող գործոնների, պատճառների և ուղղությունների աշխարհագրական ուսումնասիրության համար անհրաժեշտ փաստական-վիճակագրական նյութերը անբավարար են, իսկ որոշ դեպքերում նաև ոչ արժանահավատ: Այս բացը կարելի է միայն լրացնել ՀՀ տարբեր մարզերում և դրանց բնակավայրերում բնակչության միգրացիոն տրամադրվածությունների, դրանց ձևավորման գործոնների և ուղղությունների սոցիալ-աշխարհագրական դաշտային ուսումնասիրությունների միջոցով:

Անհրաժեշտ է նշել, որ արտագաղթի վերաբերյալ պաշտոնական արժանահավատ տվյալների բացակայության պայմաններում, տարբեր կազմակերպությունների և հեղինակների կողմից իրականացվել են հարցումներ և սոցիալ-ժողովրդագրական վերլուծություններ: Դրանք բոլորը փաստում են, որ երկրից հեռանալ ցանկացողների թիվը չափազանց մեծ է: Ընդ որում արտագաղթը ոչ միայն չի նվազում, այլ նաև նոր բնույթ և ձևեր է ընդունում: Ինչպես իրավացիորեն նշում է Լ.Հարությունյանը, ի տարբերություն նախկինում դիտված այս երևույթի տարերային դրսևորումների, ներկայումս Հայաստանում այն ստացել է յուրահատուկ ինքնակազմակերպման ձև և իր բնույթով դարձել է ցանցային: Այսինքն՝ ՀՀ-ից հեռացողները նպաստում, իսկ հաճախ նաև կազմակերպում են իրենց բարեկամների և մտերիմների երկրից մեկնումը [54]:

Բնակչության արտագաղթի պատճառ են դառնում բազմաթիվ քաղաքական, տնտեսական, սոցիալական և հոգեբանական բնույթի գործոններ: Ա.Մինասյանը դրանք միավորում է արտածին և ներքին գործոնների խմբերի մեջ: Արտագաղթի արտաքին գործոնները առաջին հերթին աշխարհաքաղաքական են և կապված են այլ երկրների կողմից վարվող ներգաղթի քաղաքականության հետ, իսկ ներքին գործոնները առավել շատ սոցիալ-տնտեսական, սոցիալ-քաղաքական և սոցիալ-հոգեբանական բնույթի են [46]:

Սակայն մարդկանց արտագաղթելու ցանկությունները ՀՀ համայնքներում և մարզերում տարբեր են: Դրանք պայմանավորված են ոչ միայն համայնքների բնակչության

սեռատարիքային և սոցիալական կառուցվածքներով, այլև՝ համայնքների բնակչության կյանքի պայմաններով: Անհրաժեշտ է նշել, որ դեռևս 2007թ.-ին ՀՀ տարբեր մարզերում և համայնքներում միգրացիայի ծավալների և գործոնների բացահայտման նպատակով ՀՀ ազգային վիճակագրական ծառայության և ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կողմից իրականացվել է ՀՀ արտաքին և ներքին միգրացիայի ընտրանքային հետազոտություն [23]:

Սակայն վերջին տասը տարիներին ՀՀ-ում տեղի ունեցած քաղաքական-տնտեսական և սոցիալ-ժողովրդագրական փոփոխություններն ու տարաբնակեցման համակարգի տարածքային և կառուցվածքային տեղաշարժերը բնակչության միգրացիայի դաշտային հետազոտությունների նոր անհրաժեշտություն են առաջացրել: Բացի այդ, իրականացված ընտրանքային հետազոտությունները հիմնականում սոցիալ-աշխարհագրական բնույթ չեն կրել և նպատակ չի դրվել բացահայտել միգրացիոն հոսքերի մասշտաբների և ուղղությունների ձևավորման գործոնների տարածքային տարբերություններն ու առանձնահատկությունները, տարբեր տիպի և մեծության բնակավայրերի ազդեցությունը բնակչության միգրացիոն տրամադրվածությունների ձևավորման գործում:

Այդ իսկ պատճառով, ՀՀ տարբեր տեղադիրք և մեծություն ունեցող բնակավայրերում բնակչության միգրացիոն տրամադրվածությունները, դրանց ձևավորման վրա ազդող տեղական (բնակավայրային) և համապետական բնույթի հիմնախնդիրներն ու գործոնները ուսումնասիրելու նպատակով՝ 2015-2016թթ.-ին ԵՊՀ ուսանողների մասնակցությամբ կատարել ենք լայնածավալ սոցիալ-աշխարհագրական դաշտային հետազոտություններ: Դրանք անցկացվել են հարցաթերթիկների միջոցով, ՀՀ բոլոր մարզերի տարբեր մեծության 60 բնակավայրերում, որոնցից 18-ը քաղաքներ են, իսկ 42-ը՝ գյուղեր: Մշակվել են 2557 հարցաթերթիկ, որից 886-ը Երևան քաղաքում:

Հարցաթերթիկների միջոցով անցկացրած սոցիալ-աշխարհագրական հետազոտությունների արդյունքների հավաստիության օգտին է խոսում այն հանգամանքը, որ հարցումների մասնակիցները համամասնորեն ներկայացրել են տարբեր սեռատարիքային և սոցիալական խմբեր: Հարցումներին մասնակցածների թվում 1408-ը եղել են կանայք, իսկ 1149-ը՝ տղամարդիկ: Նրանց ընտրության հարցում առաջնորդվել ենք այն սկզբունքով, որ հարցման բոլոր մասնակիցները պետք է միգրացիոն տեղաշարժի ինքնուրույն որոշում կայացնելու հնարավորություն ունենան: Այսինքն հարցման

մասնակից չեն դարձել երեխաները (մինչև 18տ.) և տարեցները (65տ.–ից բարձր), որոնց միգրացիոն ակտիվությունը սեփական նախաձեռնությամբ սահմանափակ է: Հարցաթերթիկի առաջին մասը վերաբերել է անհատի սոցիալ-ժողովրդագրական բնութագրիչներին (սեռը, տարիքը, մասնագիտությունը, զբաղմունքը), իսկ երկրորդ մասի հարցերը, այլընտրանքային պատասխաններով, վերաբերում են տեղական-բնակավայրային և համապետական հիմնախնդիրներին, որոնք կարող են մարդկանց մոտ միգրացիոն տրամադրվածություն առաջացնել: Մարդկանց միգրացիոն տրամադրվածությունները պարզելու համար հարցաթերթիկում հարցը ձևակերպված է այսպես. հնարավորության դեպքում կարտագաղթե՞ք Հայաստանից, որի պատասխանի տարբերակներն են ա) այո բ) ոչ գ) չեմ մտածել: Հարցաթերթիկի հարցերը հնարավորություն են տալիս նաև պարզելու արտաքին միգրացիայի ուղղությունները, այն նախընտրելի երկրներն ու տարածաշրջանները, որտեղ կցանկանային արտագաղթել (տես հավ. 4):

Առավել լայնածավալ հետազոտություններ անցկացվել են Երևանին հարակից մարզերում: Այսպես, Արարատի մարզի բնակավայրերում տարածվել և մշակվել է 416 հարցաթերթիկ, որից 336-ը գյուղական բնակավայրերում, Կոտայքի մարզում՝ համապատասխանաբար 256 և 154, Արագածոտնի մարզում՝ 127 և 106, Արմավիրի մարզում՝ 100 և 60: ՀՀ ծայրամասային գոտու մարզերից առավել շատ թվով հարցաթերթիկներ բաժանվել են Սյունիքի և Գեղարքունիքի մարզերում: Ընդ որում, գոտու առավել քաղաքաբնակ Սյունիքի մարզում նախապատվությունը տրվել է քաղաքային բնակավայրերին, իսկ առավել գյուղաբնակ Գեղարքունիքի մարզում՝ գյուղական բնակավայրերին: Այսպես, Գեղարքունիքի մարզում մշակված 296 հարցաթերթիկներից 231-ը բաժին է ընկնել գյուղական բնակավայրերին: Սյունիքի մարզում՝ համապատասխանաբար՝ 239 և 20, Տավուշի մարզում՝ 90 և 42, Շիրակի մարզում՝ 67 և 47: Լոռու և Վայոց ձորի մարզերում հարցաթերթիկներ տարածվել են միայն գյուղական բնակավայրերում և համապատասխանաբար կազմել են 60 և 20:

Բնակչության արտաքին միգրացիոն տրամադրվածությունները, դրանց վրա ազդող գործոնները փոփոխվում են ինչպես ըստ առանձին մարզերի, այնպես էլ ըստ բնակավայրերի տիպերի: Կախված բնակավայրի մեծությունից, գործառույթներից և տեղադիրքից փոխվում են ինչպես բնակչության միգրացիոն տրամադրվածությունները,

այնպես էլ դրանց ձևավորման վրա առավել մեծ ազդեցություն ունեցող գործոնները: Ընդ որում գործոնները պարզելու համար մենք հարցաթերթիկում նպատահարմար ենք գտել հարցերը ձևակերպելիս տարբերակել տեղական-բնակավայրային և համապետական մակարդակները, նկատի ունենալով այն, որ ներքին միջբնակավայրային միգրացիոն տրամադրվածություններ ձևավորող գործոնները (շարժառիթները) մեծամասամբ տեղական-բնակավայրային բնույթի հիմնախնդիրների առկայությունն են, իսկ արտագաղթի միգրացիոն տրամադրվածություններ ձևավորող գործոնները՝ հիմնականում համապետական բնույթի հիմնախնդիրներն են:

Ինչպես ցույց են տալիս սոցիոլոգիական հետազոտությունների արդյունքները՝ բնակչության մեջ դեռևս բարձր են միգրացիոն տրամադրվածությունները: ՀՀ տարբեր մարզերում կատարած բնակչության հարցումներում միջինացված տվյալներով հարցվողների 40-50%-ը այո են պատասխանել այն հարցին, թե հնարավորության դեպքում պատրաստ են արտագաղթել ՀՀ-ից թե ոչ: Ընդ որում այն բարձր է ոչ միայն Երևանում և մայրաքաղաքին հարակից մարզերում (Արարատ, Կոտայք), այլ նաև ծայրամասային գոտու մարզերում (Գեղարքունիք, Սյունիք), որն անշուշտ առավել մտահոգիչ է: Միաժամանակ բոլոր մարզերում և Երևան քաղաքում կատարած հարցումների ժամանակ հարցվողների միայն 30-40%-ն են հաստատապես ոչ պատասխանել հնարավորության դեպքում երկրից արտագաղթելու վերաբերյալ հարցին: Մտահոգիչն այն է, որ բնակչության միգրացիոն տրամադրվածությունները երկրում համատարած բնույթ են կրում, դրանք բարձր են բոլոր մարզերում, դրանց թե՛ քաղաքային, և թե՛ գյուղական բնակավայրերում (աղ. 2):

Աղյուսակ 2

ՀՀ մարզերում և Երևան քաղաքում բնակչության միգրացիոն տրամադրվածությունները և նախընտրելի ուղղությունները

Մարզեր	Արտագաղթելու պատրաստակամությունը %-ով			Արտագաղթելու դեպքում նախընտրելի ուղղությունը %-ով				
	Այո	Ոչ	Չեմ մտածել	Ռուսաստան	ԱՊՀ այլ երկրներ	Եվրոպա	ԱՄՆ	Այլ երկրներ
Երևան	50.7	34.1	15.2	24.7	0.4	38.2	32.6	4.1
Արագածոտն	42.5	41	16.5	31	1.7	36.2	27.6	3.5

Արարատ	43.8	35.8	20.4	43.9	2.3	28.5	21.7	3.6
Արմավիր	53	36	11	15	1	24	15	2
Գեղարքունիք	47.6	37.9	14.5	40.8	5.9	25	29.6	0.7
Լոռի	48.3	40	11.7	25.8	3.2	54.8	13	3.2
Կոտայք	46.9	35.9	17.2	39.1	2.9	29	25.4	3.6
Շիրակ	32.8	47.8	19.4	35.5	3.2	32.3	25.8	2.6
Սյունիք	41.4	36.4	22.2	36.4	2.8	40.2	18.7	1.9
Վայոց Ձոր	40	40	20	75	0	25	0	0
Տավուշ	37.8	42.2	20	53.6	4.9	29.3	12.2	0

Հարցումները ցույց են տալիս, որ միգրացիոն տրամադրվածությունները թեև առկա են բոլոր տարիքային և սոցիալական խմբերում, սակայն դրանք առավել մեծ չափի են հասնում երիտասարդ աշխատունակ տարիքի (20-40տ.) բնակչության խմբերում: Հարցումները ևս մեկ անգամ վերահաստատեցին, որ տղամարդկանց միգրացիոն ակտիվությունը կանանց համեմատ շարունակում է մնալ ավելի բարձր: Գործազուրկների և ցածր վարձատրվող ոլորտներում (կրթություն, սպասարկման ոլորտ և այլն) զբաղվածների մոտ միգրացիոն տրամադրվածություններն ավելի բարձր են:

Միգրացիոն հակվածություն ունեցող հարցվողների շուրջ 1/3-ը նախապատվությունը տվել է Ռուսաստանին: Գրեթե նույնքան նախապատվություն հարցվողները տվել են նաև Եվրոպական երկրներին, իսկ ԱՄՆ-ի բաժինը կազմել է 1/4-ը: Միայն աննշան մասն է միգրացիոն նախապատվությունները տվել այլ տարածաշրջաններին և երկրներին:


Այստեղ անհրաժեշտ է նշել, որ ցանկությունները միշտ չէ որ իրականություն են դառնում, և դրանով է բացատրվում, որ հարցման մեջ նշված ցանկալի ուղղությունները չեն համընկնում միգրացիայի ներկայիս ուղղություններին: Մասնավորապես, ներկայումս դեպի Ռուսաստան փաստացի մեկնածները կազմում են ընդհանուր միգրանտների 4/5-ից ավելի, սակայն հարցման ժամանակ դեպի Ռուսաստան արտագաղթելու ցանկություն հայտնաձևերը կազմում են 1/3-ը, իսկ Եվրոպայի և ԱՄՆ-ի դեպքում հակառակ երևույթն է՝ ավելի շատ են ցանկություն հայտնողները, ավելի քիչ՝ փաստացի մեկնողները: Դա բացատրվում է այն հանգամանքով, որ դեպի Ռուսաստան աշխատանքի կամ այլ նպատակով մեկնելու հնարավորությունները շատ անգամ ավելի հեշտ է իրականացնել, քան զարգացած եվրոպական երկրներ և ԱՄՆ:

Միգրացիայի սոցիալ-աշխարհագրական հետազոտությունները ցույց են տալիս, որ բարձր կրթական ցենզ ունեցողները միգրացիոն նախապատվությունները տալիս են

Եվրոպական զարգացած երկրներին և ԱՄՆ-ին, իսկ համեմատաբար ցածր կրթական ցենզ ունեցողները՝ ՌԴ-ին: Նույն տրամաբանության մեջ, եթե երևանցիները նախապատվությունը տալիս են Եվրոպական երկրներին և ԱՄՆ-ին, ապա գյուղաբնակ մարզերը, որոնցում մեծ է գյուղական բնակչության բաժինը՝ Ռուսաստանին: Այդ նույն տարբերությունները նկատվում են նաև քաղաքային և գյուղական բնակչության կտրվածքով: Ինչպես երևում է նկարներ 5-ից և 6-ից, քաղաքային բնակիչները արտագաղթելու դեպքում նախապատվություն են տալիս եվրոպական երկրներին և ԱՄՆ-ին, սակայն պատկերը փոխվում է գյուղական բնակչության դեպքում:

Նկար 6


Նկար 7



Նկար 6, 7. ՀՀ քաղաքային և գյուղական բնակչության արտագաղթելու նախընտրելի ուղղությունները

Ընդ որում հարկ է նշել, որ ըստ հարցման արդյունքների արտագաղթելու ցանկությունը համեմատաբար ավելի մեծ է քաղաքների բնակիչների մոտ: Քաղաքաբնակների պարագայում հարմար առիթի դեպքում արտագաղթելու ցանկություն են հայտնել հարցվողների 48,8 %-ը, իսկ գյուղաբնակների մեջ՝ 43,5%-ը:

Միգրացիայի սոցիալ-աշխարհագրական հետազոտությունների ժամանակ կարևոր հարցերից մեկն է դառնում այն գործոնների գնահատումն ու հիմնախնդիրների բացահայտումը, որոնք բնակչության մոտ միգրացիոն տրամադրվածություններ են ձևավորում: Արտագաղթելու նկատմամբ տրամադրվածությունների ձևավորման գործում առավել կարևոր և որոշիչ դեր են խաղում համապետական բնույթի հիմնախնդիրներն ու գործոնները (նկ.8):



Նկար 8. Հարցվողների կողմից նշված համապետական հիմնախնդիրների տոկոսային հարաբերակցությունը

Նկար 8-ի տվյալները ևս մեկ անգամ հաստատում են, որ արտագաղթելու տրամադրվածությունների առաջացման հիմնական պատճառները սոցիալ-տնտեսական են, քանի որ հարցվողները ամենաշատը նշել են աշխատատեղերի բացակայության և ցածր աշխատավարձի հիմնախնդիրները: Սոցիալ-քաղաքական գործոններից բնակչության կողմից կարևորվել են նաև անարդարության, օրենքների չկիրառման և երկրի զարգացման հեռանկարների բացակայության հիմնախնդիրները: Իսկ ամենաքիչ նշանակությունը հարցվողները տվել են Եկոլոգիական իրավիճակին, քաղաքական և տնտեսական ռեֆորմների բացակայությանը և աշխարհաքաղաքական իրավիճակին վերաբերող հիմնախնդիրներին: Համապետական բնույթի հիմնախնդիրները ՀՀ մարզերում և տարբեր տիպի բնակավայրերում տարբեր սրություն և բնակչության կողմից տարբեր ընկալումներ ունեն (տես քարտեզ 1):

Համապետական հիմնախնդիրների տոկոսային հարաբերակցությունն ըստ Երևանի և ՀՀ մարզերի




Քարտեզ 1. Համապետական հիմնախնդիրների տոկոսային հարաբերակցությունն ըստ Երևանի և ՀՀ մարզերի

Երևանում և մարզերի տարբեր տիպի և մեծության բնակավայրերում կատարած հարցումները ցույց են տալիս, որ թե՛ մայրաքաղաքում, և թե՛ բոլոր մարզերում, հիմնախնդիրների թվում հարցվողները առավել հաճախակի նշում են աշխատատեղերի բացակայությունը, ընդ որում մարզերի համեմատությամբ Երևանում այն զգալիորեն ցածր

Է: Գրեթե ամենուրեք երկրորդ ամենաշատ նշված հիմնախնդիրը ցածր աշխատավարձն է, որը նույնպես սոցիալ-տնտեսական բնույթ ունի: Երևանում և մարզերի մեծ մասում հարցվողների կողմից հաճախակի նշվել են նաև անարդարության, օրենքների չկիրառման, կոռուպցիայի և երկրի զարգացման հեռանկարների բացակայության հիմնախնդիրները:

Միգրացիոն տրամադրվածությունների ձևավորման տարածաշրջանային տարբերությունները ցույց տալու համար նպատակահարմար ենք գտել ներկայացնել Երևանի, մայրաքաղաքին հարակից գոտու՝ Արարատի մարզի և ծայրամասային գոտու՝ Տավուշի մարզի համեմատական վերլուծությունը (նկ. 9):



Նկար 9. Հարցվողների կողմից նշված համապետական հիմնախնդիրների տոկոսային բաշխումը Երևանում, Արարատի և Տավուշի մարզերում

Քարտեզ 1-ի և նկար 9-ի տվյալների վերլուծությունը ցույց է տալիս, որ կան միգրացիոն տրամադրվածությունների ձևավորման տարածաշրջանային տարբերություններ: Մասնավորապես՝ ավելի բարձր կրթական ցենզ և մտավոր ներուժ ունեցող երևանցիների

հարցումների պատասխանների կառուցվածքը տարբերվում է մարզերի առավել գյուղաբնակ բնակչության հարցումների պատասխաններից: Այսպես, երևանցիների մոտ, մարզերի համեմատությամբ, հիմնախնդիրների թվում ավելի հաճախակի են հանդիպում քաղաքական բնույթի՝ անարդարության, օրենքների չկիրառման, քաղաքական և տնտեսական ռեֆորմների բացակայության, քաղաքական անկայունության հիմնախնդիրները, մինչդեռ մարզերի տարբեր բնակավայրերում անցկացված հարցումների պատասխաններում գերակայությունը ակնհայտ առավելությամբ տրվում է սոցիալ-տնտեսական բնույթի հիմնախնդիրներին:


Առանձին մարզերում հարցվողների պատասխանների մեջ հաճախակի նշել են նաև այլ հիմնախնդիրներ՝ աշխարհաքաղաքական բարդ իրավիճակը (Տավուշ, Սյունիք), Էկոլոգիական վիճակը (Գեղարքունիք, Սյունիք) և այլն: Սա բացատրվում է այն հանգամանքով, որ Տավուշի և Սյունիքի սահմանամերձ դիրքերի հետ կապված կարևոր նշանակություն է ստանում բնակչության անվտանգության պահպանման հիմնախնդիրները: Իսկ Գեղարքունիքի և Սյունիքի մարզերում հարցվողների պատասխաններում Էկոլոգիական հիմնախնդրի կարևորումը թերևս բացատրվում է նշված մարզերում հանքարդյունաբերության զարգացման և ջրային տարածքների աղտոտման հետ:

Իհարկե ՀՀ բնակչության միգրացիայի ձևավորման վրա որոշակի ազդեցություն են թողնում նաև ընտանեկան-կենցաղային գործոնները (ամուսնություն, ընտանիքի միավորում և այլն), սակայն մեր կողմից իրականացված սոցիալ-աշխարհագրական հետազոտություններում, մասնավորապես հարցաթերթիկում, նման բնույթի հարցեր չենք ներառել, քանի որ կարծում ենք, որ միգրացիայի ընտանեկան-կենցաղային շարժառիթները բնակչության ոչ բոլոր խմբերին են վերաբերում:

Ինչպես ցույց են տալիս ուսումնասիրությունները՝ բնակչության միգրացիոն բարձր տրամադրվածությունները թեև կրում են տարածականորեն համատարած բնույթ, սակայն մարզերում և բնակավայրերում տարբեր են դրանք ձևավորող գործոններն ու պայմանները: Դա նշանակում է, որ արտագաղթի կրճատմանն ուղղված սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրերի և միգրացիայի կարգավորման հայեցակարգերի մշակման դեպքում անհրաժեշտ է հաշվի առնել ՀՀ սոցիալ-տնտեսական զարգացման

տարածքային տարբերությունները, տարաբնակեցման կառուցվածքն ու տարածաշրջանային առանձնահատկությունները:

Համեմատել ենք նաև տարբեր տիպի և մեծության բնակավայրերի բնակչության արտաքին միգրացիոն տրամադրվածությունները և դրանց ձևավորման վրա ազդող գործոններն ու պայմանները: Ինչպես ցույց են տալիս հարցումները՝ մինչև 1000 բնակիչ ունեցող գյուղական բնակավայրերում բնակչության միգրացիոն տրամադրվածությունները ավելի թույլ են դրսևորվում, քան ավելի մեծ մարդաշատություն ունեցող բնակավայրերի խմբերում: Այսպես, մինչև 1000 բնակիչ ունեցող գյուղական բնակավայրերում բնակչության արտաքին միգրացիոն տրամադրվածությունը բացահայտող հարցին 166 հարցվողներից այո են պատասխանել 40,4%-ը, ոչ՝ 41,5%-ը, 1001-3000 բնակչություն ունեցող գյուղական բնակավայրերում 488 հարցվողներից այո են պատասխանել 45,3%-ը, ոչ՝ 38,5%-ը, 3001-5000 բնակչություն ունեցող բնակավայրերում 195 հարցվողներից համապատասխանաբար այո և ոչ են պատասխանել հարցվողների 47,2% և 39%-ը, իսկ ամենախոշոր գյուղերում, որոնք ունեն 5000-ից ավելի բնակչություն, 212 հարցվողներից այո են պատասխանել 38,2%-ը ոչ՝ 42,5%-ը: Վերոնշյալ բնակավայրերում հարցվողների կողմից նշված արտագաղթելու նախընտրելի ուղղությունների հարաբերակցությունը արտահայտված է նկար 10-ում:



Նկար 10. ՀՀ գյուղական բնակավայրերում հարցվողների կողմից նշված արտագաղթի նախընտրելի ուղղությունների հարաբերակցությունը

Ինչպես ցույց են տալիս հարցումները՝ բոլոր տիպի գյուղական բնակավայրերում բավականին բարձր են միգրացիոն տրամադրվածությունները: Ընդհանուր է նաև այն, որ

միգրացիոն տրամադրվածություններ ունեցողները նախապատվություն են տվել Ռուսաստանին, որին հաջորդել են եվրոպական երկրները և ԱՄՆ-ն: Սակայն բնակավայրերի առանձին խմբերում տարբեր են միգրացիոն տրամադրվածությունները ձևավորող գործոններն ու պայմանները: Այսպես, առավել փոքր գյուղական բնակավայրերում համապետական բնույթի հիմնախնդիրների թվում, այլ բնակավայրերի համեմատությամբ, ավելի հաճախակի են նշվել աշխատատեղերի բացակայությունը (24%), կոռուպցիան (11,3%), զարգացման հեռանկարների բացակայությունը (13,8%), իսկ առավել խոշոր գյուղական բնակավայրերում՝ ցածր աշխատավարձը (20,4%), օրենքների չկիրառումը (13,6%), քաղաքական անկայունությունը (5,3%):

Ինչպես ցույց են տալիս հարցումները՝ գյուղական բնակավայրերի բոլոր խմբերում համապետական հիմնախնդիրների ընդհանուր կառուցվածքում բնակչության կողմից նախապատվությունները տրվում են ինչպես սոցիալ-տնտեսական հիմնախնդիրներին՝ աշխատատեղերի բացակայություն (18%-24%), ցածր աշխատավարձ (18%-20%), այնպես էլ քաղաքական բնույթի հիմնախնդիրներին՝ անարդարություն (12%-15%), օրենքների չկիրառում (12%-14%), կոռուպցիա և կաշառակերություն (8%-11%), երկրի զարգացման հեռանկարների բացակայություն (8%-14%):

Բնակչության միգրացիոն տրամադրվածությունների բացահայտման համար սոցիոհարցումներ ենք կատարել Երևան քաղաքի բոլոր վարչական շրջաններում, Գյումրի քաղաքում, յոթ կիսամիջին քաղաքներում (Յրազդան, Աբովյան, Չարենցավան, Կապան, Գորիս, Արարատ, Վաղարշապատ) որոնք ունեն 20-50հազ բնակչություն և իննը փոքր քաղաքներում (Մեղրի, Ագարակ, Նոյեմբերյան, Բերդ, Սևան, Վարդենիս, Աշտարակ, Նոր Զան): Հարցումները ցույց տվեցին, որ քաղաքների նշված խմբերում առկա են արտաքին միգրացիոն տրամադրվածությունների, ուղղությունների, դրանց ձևավորման գործոնների և պայմանների որոշակի տարբերություններ: Միգրացիոն տրամադրվածությունները հատկապես բարձր են Գյումրիում, որտեղ հարցվողների 55%-ը հնարավորության դեպքում պատրաստ է երկրից արտագաղթել, մինչդեռ Երևանում այն կազմում է 50,7%, կիսամիջին քաղաքներում՝ միջինը 46,9%, իսկ փոքր քաղաքներում՝ 44,4%: Արտագաղթելու ցանկություն հայտնած հարցվողները եթե փոքր և կիսամիջին քաղաքներում նախապատվությունը տվել են Ռուսաստանին, ապա Երևանում և Գյումրիում՝ եվրոպական երկրներին:

Համապետական հիմնախնդիրների թվում, ինչպես Երևանում, այնպես էլ քաղաքների այլ խմբերում, առաջնակարգ տեղ են գրավում սոցիալ-տնտեսական հիմնախնդիրները՝ աշխատատեղերի բացակայությունը և ցածր աշխատավարձը: Այսպես, Երևանում հիմնախնդիրների կառուցվածքում հարցվողներ ամենաշատը նշել են ցածր աշխատավարձը (19%) և աշխատատեղերի բացակայությունը (16,9%), ապա Գյումրիում և քաղաքների մյուս խմբերում ամենաշատը նշել են աշխատատեղերի բացակայությունը (22%-27%), որին հաջորդում է ցածր աշխատավարձը (16%-19%):

Երևանի բնակչության շրջանում քաղաքական գործոնները ավելի մեծ դեր են խաղում միգրացիոն տրամադրվածությունների ձևավորման գործում քան մնացած քաղաքներում: Այսպես մայրաքաղաքում, քաղաքների այլ խմբերի համեմատությամբ, մի փոքր ավելի բարձր կշիռ ունեն անարդարության (13,5%), օրենքների չկիրառման (12,3%) և քաղաքական անկայունության (7,6%) հիմնախնդիրները: Փոքր և կիսամիջին քաղաքներում բարձր կշիռ նաև աշխարհաքաղաքական բարդ իրավիճակը: Երևանում և քաղաքների այլ խմբերում հարցվողները բավականին հաճախակի են նշել նաև երկրի զարգացման հեռանկարների բացակայությունը (11-14%), կոռուպցիան և կաշառակերությունը (8-9%): Մնացած հիմնախնդիրները բնակչության միգրացիոն տրամադրությունների ձևավորման գործում ավելի փոքր նշանակություն ունեն:

Այսպիսով, մեր կողմից կատարված միգրացիայի սոցիալ-աշխարհագրական հետազոտությունները վկայում են բնակչության միգրացիոն բարձր տրամադրվածությունների մասին, որոնք համատարած բնույթ են կրում: Դրանք դրսևորվում են բոլոր տիպի բնակավայրերում, բնակչության սոցիալական և սեռատարիքային բոլոր խմբերում: Բոլոր տիպի բնակավայրերում, անկախ մարդաշատությունից և աշխարհագրական դիրքից, բնակչության միգրացիոն տրամադրվածության ձևավորման վրա առավել մեծ ազդեցություն են թողնում սոցիալ-տնտեսական բնույթի գործոնները (աշխատատեղերի բացակայություն, ցածր աշխատավարձ), իսկ միգրացիայի աշխարհագրական ուղղություններում նախապատվությունները տրվել են Ռուսաստանին և Եվրոպական երկրներին:

ԳԼՈՒԽ 3. ՀՀ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՆԵՐՔԻՆ ՄԻԳՐԱՑԻՈՆ ՏԵՂԱՇԱՐԺԵՐԻ ՏԱՐԱԾԱԺԱՄԱՆԱԿԱՅԻՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ


3.1 Բնակչության ներքին միգրացիոն տեղաշարժերը խորհրդային և հետխորհրդային անցումնային տարիներին

Խորհրդային Հայաստանի ներքին միգրացիայի հիմնահարցերին անդրադարձել են տարբեր հեղինակներ՝ Գ.Ավագյանը, Խ. Ավետիսյանը, Վ. Խոջաբեկյանը, Բ. Ասատրյանը և այլ հեղինակներ, որոնք ուսումնասիրել են բնակչության միգրացիայի տնտեսաաշխարհագրական և ժողովրդագրական կողմերը [15, 71]: Մասնավորապես նրանք փաստական նյութերի հիման վրա պարզել են խորհրդային տարիներին միգրացիայի դերը բնակչության տեղաբաշխման փոփոխություններում և ուրբանիզացման գործընթացներում:

Մինչխորհրդային տարիներին բնակչության միգրացիոն շարժունակությունն ընդհանուր առմամբ ցածր էր և հիմնականում դրսևորվում էր արտաքին միգրացիայի տեսքով: Միգրացիոն ցածր ակտիվությունը նախ և առաջ բացատրվում էր նրանով, որ բնակչության մոտ 90%-ը գյուղաբնակ էր և զբաղված էր գյուղատնտեսական գործունեությամբ: Արդյունաբերության և ոչ գյուղատնտեսական այլ ոլորտների, քաղաքային խոշոր կենտրոնների և տրանսպորտային ուղիների թույլ զարգացման կամ բացակայության պայմաններում չէր առաջանում անհրաժեշտ սոցիալ-տնտեսական նախադրյալներ ներքին միգրացիոն տեղաշարժերի համար:

Ներքին միգրացիայի զարգացման համար բարենպաստ և օբյեկտիվ նախադրյալներ ստեղծվեցին միայն խորհրդային տարիներին: Արդյունաբերության, շինարարության, տրանսպորտի, սպասարկման ոլորտի զարգացումը, նոր քաղաքների առաջացումը, գյուղատնտեսության մեքենայացումը նպաստեցին բնակչության տարածական շարժունակության մեծացմանը և ուրբանիզացման գործընթացների ակտիվացմանը: Դրանց արդյունքում բնակչության ներքին միգրացիան առաջին հերթին ուներ գյուղից քաղաք ուղղություն: Ներքին միգրացիան կրում էր ինչպես տարերային, այնպես էլ պետության կողմից կարգավորվող բնույթ, որի հիմքում ընկած էր պետության կողմից տնտեսության տարբեր ճյուղերի զարգացման պլանավորումը և վերահսկողությունը,

հետևաբար նաև՝ բնակչության միգրացիայի կառավարումը: Ըստ որոշ հեղինակների տվյալների՝ Նախապատերազմյան շրջանում գյուղից տարեկան միջին հաշվով քաղաք է տեղափոխվել 6000 մարդ [3]: Ստորև ներկայացնում ենք Խորհրդային Հայաստանում գյուղից քաղաք և քաղաքից գյուղ մեկնածների թվաքանակները և դրանց արդյունքում քաղաքների մեխանիկական աճն ըստ ժամանակահատվածների (նկ. 11):



Նկար 11. Խորհրդային Հայաստանում գյուղից քաղաք եկածների և հակառակ ուղղությամբ մեկնածների թվաքանակները (հազ. մարդ)

Ինչպես տեսնում ենք, գյուղից քաղաք և հակադարձ ուղղությամբ միգրացիոն տեղաշարժերի արդյունքում քաղաքների մեխանիկական աճը գյուղաբնակների հաշվին 1950-1979թթ.-ին անընդհատ աճել է: 1950-1959թթ.-ին քաղաքների բնակչության մեխանիկական աճն ի հաշիվ գյուղերի եղել է 60.4 հազ. մարդ, 1960-1969թթ.-ին՝ 78.9 հազ. մարդ, իսկ 1970-1979թթ.-ին՝ 105.6 հազ.: Գյուղական բնակչության արտահոսքի ակտիվացումը դեպի քաղաք պետք է բացատրել գյուղատնտեսության մեջ աշխատանքի արտադրողականության բարձրացումամբ, քաղաքներում արդյունաբերության և սպասարկման ոլորտի բուռն զարգացումամբ և աշխատուժի պահանջարկի մեծացումամբ:

Խորհրդային առաջին տասնամյակներին, բացի Երևանից, գյուղական բնակչության նկատմամբ միգրացիոն ձգողական մեծ ուժ ունեին նաև Գյումրին և Վանաձորը, լեռնահանքային արդյունաբերության կենտրոնները, իսկ 1960-ական թթ.-ից սկսած՝ նաև Երևանի ագլոմերացիայի մեջ մտնող արդյունաբերական քաղաքները՝ Հրազդանը, Չարենցավանը, Աբովյանը, Նոր Հաճնը, Բյուրեղավանը, Արարատը: Անհրաժեշտ է նշել, որ շրջկենտրոն-քաղաքների միգրացիոն ձգողականությունը գյուղական բնակչության

վրա փոքր էր և սովորաբար սահմանափակվում էր իրենց ենթակա շրջաններում գտնվող գյուղական բնակավայրերի բնակչությանը:

Գյուղից դեպի գյուղ ներքին միգրացիայի ուղղությունը ամբողջ խորհրդային ժամանակահատվածում այդքան էլ ինտենսիվ չի եղել, այն հիմնականում պայմանավորված է եղել նոր հողերի յուրացմամբ: Չնայած Արարատյան դաշտը հանրապետության ամենախիտ բնակեցված շրջանն էր, սակայն շարունակվում էր բնակչության արտահոսքը բարձր լեռնային շրջանների գյուղերից դեպի Արարատյան գոգավորության գյուղեր:


Խորհրդային տարիներին բարձր լեռնային և ծայրամասային սահմանամերձ գոտիներից դեպի Երևանի ագլոմերացիայի քաղաքային և գյուղական բնակավայրեր գյուղական բնակչության միգրացիայի արդյունքում ոչ միայն վերացան տասնյակ բարձրլեռնային և սահմանամերձ գյուղեր, այլև վտանգավոր չափերի հասան բնակչության տեղաբաշխման անհամաչափությունները, իսկ տարաբնակեցման տարածքային կառուցվածքը ստացավ միակենտրոն բնույթ:

Բնակչության ներքին միգրացիայի միջքաղաքային տեղաշարժերը խորհրդային տարիներին ավելի շատ կրում էր հիերարխիկ բնույթ, այսինքն՝ փոքր քաղաքից դեպի ավելի մեծ քաղաք, շրջկենտրոնից կամ տեղական կենտրոնից՝ դեպի տարածաշրջանային կենտրոն: Սրա հետևանքով հիմնականում ավելանում էր Երևանի՝ մասամբ նաև Գյումրի և Վանաձոր քաղաքների բնակչությունը: Դա կապված էր նշված քաղաքների սոցիալ-տնտեսական մեծ ներուժի, երիտասարդ բնակչությանը աշխատանքով և բարձրագույն կրթությամբ ապահովելու լայն հնարավորությունների հետ: Սակայն, ընդհանուր առմամբ, խորհրդային տարիներին ինչպես ամբողջ ներքին միգրացիան, այնպես էլ միջքաղաքային միգրացիան կրում էր միակենտրոն բնույթ: Հանրապետության քաղաքների հիերարխիայի ամենաբարձր աստիճանում գտնվող Երևանի միգրացիոն ձգողական ուժն ու ազդեցությունը ներառում էր բոլոր տիպի և մեծության բնակավայրերի բնակչությանը:

Բնակչության տեղաբաշխման և ժողովրդագրական իրավիճակի տարածաշրջանային առանձնահատկությունները, ուրբանիզացման գործընթացները, տարաբնակեցման կառուցվածքն ու տեղաշարժերը զգալի չափով պայմանավորված են բնակչության ներքին տեղաշարժերով: Բնակչության ներքին միգրացիայի ամբողջական և մանրակրկիտ վերլուծության համար անհրաժեշտ են բնակավայրերի և մարզերի կտրվածքով

միգրացիայի մասշտաբների և ուղղությունների վերաբերյալ տվյալներ: Ցավոք, վիճակագրական և այլ պետական մարմինները հետխորհրդային ողջ ժամանակահատվածի համար նման հաշվառումներ չեն իրականացրել կամ էլ արել են մասնակիորեն՝ առանձին տարիների և առանձին ցուցանիշների համար: Իսկ եղած տվյալները հաճախ հակասական են, ոչ ճշգրիտ և չեն կարող փաստական հիմք հանդիսանալ բնակչության ներքին միգրացիայի օբյեկտիվ և ամբողջական աշխարհագրական ուսումնասիրությունների համար: Այս պայմաններում ներքին միգրացիայի մասշտաբների և ուղղությունների տարածաժամանակային վերլուծությունը փորձել ենք տալ պաշտոնական և այլ աղբյուրների թերի և հակասական տվյալների, փորձագիտական գնահատումների և բնակչության բնական և մեխանիկական շարժերի համադրման միջոցով մեր կողմից ստացված տվյալների հիման վրա: Հետխորհրդային առաջին տասնամյակի համար բնակչության ներքին միգրացիայի մասշտաբների և ուղղությունների վերաբերյալ փաստական նյութերի հիման վրա որոշակի վերլուծություններ է կատարել Վ.Խոջաբեկյանը [14]:

Ինչպես ցույց են տալիս տվյալները՝ խորհրդային կարգերի փլուզումից և Հայաստանի անկախուցումից հետո ներհանրապետական տեղաշարժերը կտրուկ նվազեցին, ներքին միգրացիան իր ծավալներով սկսեց անհամեմատ ետ մնալ արտաքին միգրացիայի ծավալներից: ՀՀ սոցիալ-տնտեսական և քաղաքական նոր ստեղծված իրավիճակը չէր կարող չազդել ժողովրդագրական գործընթացների, այդ թվում՝ ներքին միգրացիոն տեղաշարժերի վրա: Ներքին միգրացիան ըստ էության դադարեց քաղաքային բնակչության թվի աճի գործոն լինելուց: Վերամշակող արդյունաբերական կենտրոնները, որոնք նախկինում հանդիսանում էին ՀՀ տարաբնակեցման դինամիկ տարրերը և միգրացիոն գլխավոր ձգողության կենտրոններ, դարձան արտահոսքի հիմնական կենտրոններ: Դա պայմանավորված էր դրանց տնտեսական հիմքի՝ արդյունաբերության խիստ անկման և գործազրկության ահռելի չափերի հետ: Ավելին, 1990-ական թթ.-ի սկզբներին ներքին միգրացիայի հիմնական ուղղություններից մեկը քաղաքից գյուղն էր, որը հատկապես մեծ չափերի էր հասնում 1991-1993թթ.-ին (սկ. 12):



Նկար 12. Բնակչության ներհանրապետական տեղաշարժերը 1991-2000 թթ.-ին (հազ. մարդ)

Հարկ ենք համարում նշել, որ ներկայացված տվյալները վերաբերում են այն միգրանտներին, որոնք իրենց բնակավայրը փոխելիս փոխել են նաև իրենց հաշվառման գրանցումը: Իհարկե այս տվյալները չեն կարող ճիշտ արտացոլել այդ տարիներին տեղի ունեցած ներքին միգրացիայի իրական մասշտաբները, սակայն հնարավորություն են տալիս կատարել վերլուծություններ ներքին միգրացիայի ուղղությունների վերաբերյալ:

Դատելով աղյուսակ 3-ի տվյալներից՝ այս տարիներին քաղաքից գյուղ բնակչության տեղաշարժերը ավելի քան երկու անգամ գերազանցում էին գյուղից քաղաք բնակչության տեղաշարժերին: Սա ոչ թե հետևանք էր գյուղատնտեսության զարգացման, այլ նրա, որ գյուղերում առկա էր բնակչության կենսագործունեության համար անհրաժեշտ նվազագույն տարրական պայմաններ՝ աշխատանք, հող, անասուններ և այլն [48]: Միգրացիայի հոսքերի ուղղությունների նման փոփոխումը առավելապես կապված էր հողի և գյուղատնտեսական այլ արտադրամիջոցների մասնավորեցման հետ, ընդ որում քաղաքից գյուղ մարդկանց տեղաշարժերին նպաստեց նաև այն հանգամանքը, որ հողերի սեփականաշնորհման ժամանակ որոշակի թվով քաղաքային բնակիչներ ձեռք բերեցին հողեր: Հետագա տարիներին՝ 1993թ.-ից սկսած, բնակչության ավելի քիչ զանգվածներ սկսեցին մասնակցել ներքին միգրացիայի այս ուղղություններին, սակայն նշված հարաբերակցությունը նրանց միջև պահպանվեց մինչև 2000թ.-ը:

Ներքին միգրացիայի գործընթացներում բնակչության թվաքանակով երկրորդ տեղը (քաղաքից գյուղ ուղղությունից հետո) բաժին է հասնում միջքաղաքային տեղաշարժերին, ընդ որում այն տարեց տարի նվազման միտում է ունեցել: Ներքին միգրացիայի այս ուղղության շնորհիվ փոքր քաղաքների արտագաղթող բնակչության հաշվին ավելանում էր հիմնականում մայրաքաղաք Երևանի բնակչությունը:


Բնակչության միգրացիոն ներքին տեղաշարժերում ամենաքիչ մասնակցությունն ունեցել է գյուղից գյուղ ուղղությունը: Ընդ որում 1991թ.-ի համեմատությամբ 1996-2000թթ.-ին բնակչության այս տեղաշարժերին մասնակցել է մոտ 6-7 անգամ ավելի քիչ մարդ: Դա բացատրվում էր հետևյալ պատճառներով.

1) 1991-1992թթ.-ին այս ցուցանիշը համեմատաբար բարձր էր, քանի որ Ադրբեջանի հետ չհայտարարված պատերազմի մեջ լինելու պատճառով սահմանամերձ գոտիների գյուղական բնակչությունը թողեցին իրենց բնակավայրերը և հեռացավ: Իրականում հեռացել են տասնյակ հազարավոր բնակիչներ, սակայն հիշեցնենք, որ այս տվյալներն ընդգրկում են միայն այն մարդկանց, ովքեր փոխել են իրենց գրանցումը: Եվ հետագա տարիներին, երբ հրադադար հայտարարվեց հարևան պետության հետ, գրանցումը չփոխած միգրանտների մի մասը ետ վերադարձավ՝ դարձյալ տեղ չգտնելով միգրանտների ցուցակներում:

2) Սկսած 1994թ.-ից սահմանամերձ գոտիներում ձեռք բերված հրադադարը նպաստեց նրան, որ տեղի բնակչությունը այլևս չհեռանա, և գումարած դրան, արդեն ավարտվել էր հողերի մասնավորեցման փուլը, և գյուղացիներն արդեն սեփականատերեր էին և իմաստ չկար թողնելու իրենց ունեցվածքը և գնալու այլ գյուղական բնակավայր, որտեղ հողատարածք ձեռք բերելու համար պետք էր վճարել: Հողերի մասնավորեցման գործընթացը մեծապես կասեցրեց նաև նախկինում առավել տարածված միջգյուղական տեղաշարժերը լեռնային և նախալեռնային գոտիներից դեպի հարթավայրային գոտիներ:

ՀՀ բնակչության ներքին միգրացիայի ուսումնասիրության ժամանակ շատ կարևոր է բնակավայրեր եկողների և մեկնողների տարածաժամանակային վերլուծությունը: Զարտեզ 2-ում ներկայացնում ենք պաշտոնական տվյալներով ՀՀ քաղաքներ եկողների և մեկնողների թվաքանակների հարաբերակցությունը 1991-2001թթ.-ին:

ՀՀ քաղաքներ եկողների և մեկնողների թվաքանակների հարաբերակցությունը 1991 - 2001 թթ.



Քարտեզ 2. ՀՀ քաղաքներ եկողների և մեկնողների թվաքանակների հարաբերակցությունը 1991-2001թթ.-ին

Սակայն հետխորհրդային տարիների բնակչության ներքին միգրացիոն տեղաշարժերը բացահայտելու և ճիշտ գնահատելու համար հարկավոր է նաև վերլուծել անկախացմանը նախորդող տարիների միգրացիոն տեղաշարժերը: Հաշվի առնելով պաշտոնական

տվյալների մատչելիության հանգամանքը՝ Հայաստանի քաղաքների բնակչության միգրացիայի վերլուծությունը կատարել ենք 1975-2001թթ.-ի, իսկ նախկին վարչական շրջանների (**ՆՎՇ**) գյուղական բնակչությանը՝ 1986-2001թթ.-ի համար:


Այսպիսով, 1975-2001թթ.-ին Հայաստանի քաղաքներ եկողների և մեկնողների թվաքանակների վերլուծության արդյունքում, ըստ եկողների և մեկնողների թվերի հարաբերակցության, առանձնացրել ենք քաղաքների մի քանի խմբեր՝ ըստ բնակչության միգրացիայի նմանատիպ հետագծերի: Բոլոր խմբերում ամբողջ վերլուծվող ժամանակահատվածի համար կարելի է առանձնացնել մի քանի փուլեր՝ ա) խորհրդային փուլ (1975-1988թթ.), բ) անցումային փուլ, որն ըստ էության համկնում է հայ-ադրբեջանական հակամարտության ժամանակահատվածին (1989-1993թթ.), գ) հետխորհրդային փուլ (1994-2001թթ.): Նշված փուլերն միմյանցից տարբերվում քաղաքական-տնտեսական և սոցիալ-ժողովրդագրական իրավիճակներով և դրանց հետ կապված բնակչության միգրացիոն տեղաշարժերի բնույթով:

Առաջին խմբի մեջ են մտնում այն քաղաքները (Արարատ, Արտաշատ, Գորիս, Սիսիան, Տաշիր), որոնցում եկողների և մեկնողների թվերի միջև մեծ տարբերություն է գրանցվել հատկապես 1989-1991թթ.-ին, երբ Միգրացիայի սալոն (**ՄՍ**) եղել է դրական՝ ի հաշիվ եկողների թվաքանակների կտրուկ աճի: Իսկ մնացած ժամանակահատվածներում, այսինքն թե՛ խորհրդային, և թե՛ հետխորհրդային փուլերում այդ տարբերությունները, այսինքն՝ ՄՍ-ի ցուցանիշները չնչին են եղել, ընդ որում խորհրդային փուլում գերակշռել են եկողները, իսկ հետխորհրդային փուլում՝ մեկնողները (տես հավ. 5):

Երկրորդ խումբը կազմում են այն քաղաքները, որոնք ամբողջ վերլուծվող ժամանակահատվածում ունեցել են բացասական ՄՍ (Ապարան, Ախթալա, Իջևան, Կապան, Մարտունի, Շամլուղ, Քաջարան, Եղեգնաձոր, Թալին)՝ բացառությամբ 1988-1991թթ.-ի, երբ նկատվել է դրական ՄՍ, քանի որ եկողները զգալիորեն գերակշռել են մեկնողներին: Ընդ որում հետխորհրդային փուլում միգրացիայի բացասական սալոն ավելի նշանակալից էր քան նախորդ խմբում: Այս խմբի մեջ են մտնում լեռնահանքային արդյունաբերության կենտրոնները, ինչպես նաև նախկին շրջկենտրոնները, որոնցից երեքը՝ Կապան, Իջևան, Եղեգնաձոր քաղաքները վարչատարածքային նոր բաժանմամբ դարձան մարզկենտրոններ: Սակայն կարգավիճակի փոփոխությունը սկզբնական


շրջանում էական փոփոխություններ չի առաջացրել բնակչության միգրացիոն շարժերի ուղղություններում (տես հավ. 5):

Երրորդ խումբը ընդգրկում է Երևանը և նրան հարակից քաղաքները (Աբովյան, Վեդի, Հրազդան, Մասիս, Նոր Հաճն), որտեղ 1975-1992թթ.-ի գրեթե բոլոր տարիներին բնակչության միգրացիան բնութագրվում է դրական սալդոյով, ընդ որում՝ եկողների թվի զգալի գերակշռությամբ մեկնողների թվի նկատմամբ (որոշ քաղաքների դեպքում բացառություն է կազմում 1988թ.-ը): Իսկ սկսած 1992թ.-ից՝ խորհրդային փուլում ՄՍ-ն դառնում է բացասական, այսինքն՝ նշված քաղաքներում մեկնողների թիվը գերազանցում է եկողների թվին (նկ. 13, տես հավ. 5):



Նկար 13. Երևան եկողների և մեկնողների հարաբերակցությունը 1975-2001թթ.-ին

Չորրորդ խմբի քաղաքների (Վաղարշապատ, Վանաձոր, Սևան, Չարենցավան, Մեծամոր, Գավառ, Արթիկ) բնակչության միգրացիայի ցուցանիշների հետազոտելը բավական նման է 3-րդ խմբի քաղաքներին, այն առումով, որ հետխորհրդային փուլում բնակչության ՄՍ-ն գրեթե բոլոր տարիներին եղել է բացասական:



Նկար 14. Վանաձոր քաղաք եկողների և մեկնողների հարաբերակցությունը 1975-2001թթ.-ին


Իսկ խորհրդային փուլում, չնայած տարիների մեծ մասում արձանագրվել է բնակչության դրական ՄՍ, սակայն բոլոր քաղաքներում էլ եղել են տարիներ, երբ մեկնողներ թվաքանակը գերազանցել է եկողների թվաքանակին: Ինչպես առաջին և երկրորդ խմբերում, այնպես էլ այս խմբի քաղաքներում երկրորդ անցումային փուլը հստակ չի դրսևորվում: Այս խմբի մեջ մտնող քաղաքները վերամշակող արդյունաբերության կենտրոններ են, որոնց մեծ մասը միաժամանակ հանդիսացել են նաև նախկին ՆՎՇ-ի կենտրոններ (նկ. 14, տես հավ. 5):

Հինգերորդ խմբի մեջ մտնող քաղաքները (Վարդենիս, Վայք, Ստեփանավան, Ջերմուկ, Ծաղկաձոր, Մարալիկ, Արմավիր), բացառությամբ Ջերմուկի և Ծաղկաձորի, եղել են ՆՎՇ-ի կենտրոններ: Այս քաղաքներում խորհրդային և անցումային փուլերում (մինչև 1992թ.-ը) եկողների և մեկնողների հարաբերակցությունը եղել է փոփոխական՝ առանձին տարիներին ՄՍ-ն եղել է դրական, որոշ տարիներին՝ բացասական: Իսկ հետխորհրդային բոլոր տարիներին մեկնողները գերազանցել են եկողներին (տես հավ. 5):

Վեցերորդ խումբը կազմող քաղաքները հիմնականում ՀՀ ծայրամասային շրջաններում գտնվող լեռնահանքային արդյունաբերության կենտրոններն են և բնակչության փոքր թվաքանակ ունեցող նախկին շրջկենտրոնները (Նոյեմբերյան, Մեղրի, Բերդ, Ճամբարակ, Ալավերդի, Թումանյան, Ագարակ, Դաստակերտ): Գրեթե վերլուծվող ամբողջ ժամանակահատվածում՝ 1975-2001թթ.-ին նշված քաղաքները ունեցել են բացասական ՄՍ (տես հավ. 5):

Աշտարակ և Բյուրեղավան քաղաքների բնակչության միգրացիայի հետագծերը առանձնանում են ինքնատիպ գծերով. երկու քաղաքներում էլ միայն վերջին մի քանի տարիներին է ՄՍ-ն եղել բացասական, իսկ մնացած գրեթե ամբողջ քննարկվող ժամանակահատվածում եկողները գերազանցել են մեկնողներին (տես հավ. 5):

Որոշակի ինքնատիպ գծերով են բնութագրվում նաև Գյումրի և Սպիտակ քաղաքների միգրացիոն կորերի հետագծերը: Երկու քաղաքներում էլ մեկնողների և եկողների միջև ամենամեծ տարբերությունը նկատվում է 1989թ.-ին՝ կապված 1988թ.-ի Սպիտակի երկրաշարժի հետ: Նշված տարում մեկնողների թվաքանակը ողջ ժամանակահատվածի համար հասնում է առավելագույն մակարդակին: Սակայն, ի տարբերություն Սպիտակ քաղաքի, Գյումրիում բացասական ՄՍ գրանցվել է 1981-2001թթ.-ն ընկած ժամանակաշրջանի բոլոր տարիներին (տես նկ.15, հավ. 5):



Նկար 15. *Գյուևրի քաղաք եկողների և մեկնողների հարաբերակցությունը 1975-2001թթ.-ին*

Դիլիջան քաղաքում եկողները գերազանցել են մեկնողներին հիմնականում մինչխորհրդային տարիներին՝ 1975թ.-ից մինչև 1983թ.-ը, իսկ դրանից հետո, բացառությամբ 1989թ.-ի, բոլոր տարիներին ՄՍ-ն եղել է բացասական (տես. հավ. 5):

Ամփոփելով Հայաստանի քաղաքների բնակչության միգրացիոն շարժերը 1975-2001թթ.-ին՝ հանգում ենք այն եզրահանգմանը, որ անցումային փուլում (1987-1992թթ.) գրեթե բոլոր քաղաքներում նկատվում է բնակչության միգրացիայի մասշտաբների մեծացում, որը պայմանավորված է մի շարք հանգամանքներով. Առաջին, Սպիտակի երկրաշարժի հետևանքով աղետի գոտում գտնվող բազմաթիվ մարդիկ լքեցին իրենց բնակավայրերը և երկրից չարտագաղթացների մի մասն էլ վերաբնակեցվեցին այլ բնակավայրերում: Երկրորդը, Հայաստանի տարբեր բնակավայրերում բնակեցվեցին Ադրբեջանից բռնագաղթված հայերի մի մասը: Երրորդ, անկախացման առաջին տարիներին պատերազմական իրավիճակի առկայությունը և երկրում ստեղծված ծանր սոցիալ-տնտեսական պայմանները սկիզբ դրեցին ՀՀ-ից բնակչության զանգվածային արտագաղթին: Ինչպես նաև նկատվում է այն օրինաչափությունը, որ Հայաստանի քաղաքների մեծ մասում խորհրդային փուլում բնակչության ՄՍ-ն հիմնականում եղել է դրական, իսկ հետխորհրդային փուլում՝ բացասական:

Կարծում ենք, որ քաղաքների բնակչության միգրացիայի ուղղությունների վերլուծության համադրումը ՆՎՇ-ների գյուղական բնակչության միգրացիայի վերլուծության հետ կարելի է ստանալ հետաքրքիր արդյունքներ, որոնք ցույց կտան ՀՀ բնակչության տարածաշրջանային առանձնահատկությունները, տարաբնակեցման տարածքային և կառուցվածքային տեղաշարժերը: ՀՀ բոլոր ՆՎՇ-ների գյուղական

բնակչության 1986-2001թթ.-ի միգրացիոն տեղաշարժերի վերլուծությունը ցույց է տալիս, որ միգրացիայի մասշտաբները մեծ են եղել նշված ժամանակահատվածի առաջին տարիներին: 1990-ական թթ.-ի երկրորդ կեսին միգրացիայի մասշտաբները փոքրացել են, եկողների և մեկնողների տարբերությունները եղել են փոքր և մեծամասամբ ՄՍ-ն եղել է բացասական: 1986-2001թթ.-ին ՆՎՇ-ների գյուղական բնակչության միգրացիոն տեղաշարժերի վերլուծությունը թույլ է տալիս առանձնացնելու հետևյալ հինգ խմբերը, որոնք միմյանցից տարբերվում են բնակչության միգրացիայի ուղղություններով և մասշտաբներով:

Առաջին խմբի մեջ են մտնում Գուգարքի, Սիսիանի, Տաշիրի, Ստեփանավանի, Կապանի, Կրասնոսելսկի, Ամասիայի և Եղեգնաձորի ՆՎՇ-ները, որտեղ հայ-ադրբեջանական հակամարտության առաջին տարիներին՝ 1988-1989թթ.-ին, մեկնողների (հիմնականում՝ ադրբեջանցիների) թվաքանակի կտրուկ աճի պատճառով նկատվել է ՄՍ-ի առավելագույն բացասական ցուցանիշները: Իսկ մնացած տարիներին եկողների և մեկնողների թվաքանակների միջև տարբերությունը եղել է փոքր, ՄՍ-ն որոշ տարիներին եղել է բացասական, որոշ տարիներին՝ դրական (տես հավ. 6):

Երկրորդ խումբը կազմում են Արարատի, Յրազդանի, Մասիսի, Մեղրիի, Սպիտակի, Վայքի և Վարդենիսի ՆՎՇ-ները: Ինչպես և առաջին խմբի դեպքում 1988թ.-ին, իսկ առանձին դեպքերում նաև 1989թ.-ին, նկատվում է մեկնողների (հիմնականում ադրբեջանցիների) թվի կտրուկ աճ: Սակայն այս խմբի մեջ մտնող ՆՎՇ-ների գյուղական բնակչության միգրացիայի տարբերությունը, առաջին խմբի հետ համեմատությամբ, կայանում է նրանում, որ այստեղ նկատվում է նաև եկողների թվի կտրուկ աճ հենց 1989թ.-ից սկսած: Եվ եթե խմբի բոլոր ՆՎՇ-ներում 1988թ.-ին գյուղական բնակչության ՄՍ-ն եղել է բացասական, իսկ եկողների և մեկնողների տարբերությունը մեծ, ապա հաջորդող տարիներին հիմնականում ՄՍ-ն եղել է դրական: Ուսումնասիրվող ժամանակահատվածի վերջին տարիներին նկատվել է ՄՍ-ի բացասական ցածր ցուցանիշներ (տես հավ. 6):

Երրորդ խումբը կազմում են Ախուրյանի, Աշոցքի, Ապարանի, Արագածի, Տավուշի Թալինի, Մարտունու, Նոյեմբերյանի, Գավառի, Սևանի, Վաղարշապատի և Արմավիրի ՆՎՇ-ները, որոնք ունեն ընդգծված գյուղատնտեսական մասնագիտացում: Ամբողջ ժամանակահատվածի կտրվածքով մեկնողները գերակշռում են եկողներին, սակայն այդ հարաբերակցությունն ըստ տարիների խիստ փոփոխվում է և կարելի է առանձնացնել

երեք փուլ. Առաջին և երրորդ փուլերում, որոնք համապատասխանաբար կազմում են ուսումնասիրվող տարիների առաջին և վերջին ժամանակահատվածները, երբ ՄՍ-ն եղել է բացասական: Իսկ ահա երկրորդ փուլում, որն ընդգրկում է հետազոտվող տարիների միջին ժամանակահատվածը, եկողների թվաքանակիի աճի շնորհիվ ՄՍ-ն եղել է դրական: Որոշ ՆՎՇ-ների համար այդ երկրորդ փուլը կազմել է 1-2 տարի, իսկ որոշների համար՝ մինչև 5-6 տարի: Համեմատաբար մեծ քաղաքային շրջկենտրոն ունեցող Սևանի, Գավառի, Արմավիրի և Վաղարշապատի ՆՎՇ-ների սահմաններում տեղի են ունեցել միգրացիոն տեղաշարժեր գյուղից դեպի շրջկենտրոն ուղղությամբ (տես հավ. 6):

Չորրորդ խմբի մեջ են մտնում Աշտարակի, Արտաշատի, Բաղրամյանի, Գորիսի, Թումանյանի, Իջևանի, Կոտայքի և Նաիրիի ՆՎՇ-ները, որոնցում նշված ժամանակահատվածի տարիների մեծ մասում գյուղական բնակչության ՄՍ-ն եղել է դրական: Միայն առանձին տարիներին է նկատվել մեկնողների գերակշռություն եկողների նկատմամբ՝ այն էլ ոչ մեծ տարբերությամբ: Դա իր հերթին նշանակում է, որ չորրորդ խմբի մեջ մտնող բոլոր ՆՎՇ-ներում 1986-2001թթ.-ի ընթացքում գյուղական բնակչության թվաքանակն ավելացել է ի հաշիվ միգրացիայի: Այս խմբի մեջ մտնող ՆՎՇ-ների մեծ մասը գտնվում են մերձերևանյան գոտում, իսկ մնացած ՆՎՇ-ների գյուղերի մեծ մասը ունեն հարմար տեղադիրք և համեմատաբար բարենպաստ հողակլիմայական պայմաններ գյուղատնտեսության բազմազան ճյուղերի զարգացման համար (տես հավ. 6):


Հինգերորդ խմբի մեջ են մտնում Արթիկի և Անիի ՆՎՇ-ները, որոնցում գրեթե ամբողջ հետազոտվող ժամանակահատվածում եկողների և մեկնողների միջև մեծ տարբերություններ չեն գրանցվել, առանձին տարիներին ՄՍ-ն եղել է դրական, իսկ որոշ տարիներին՝ բացասական: Բնակչության միգրացիայի մասշտաբները մեծ են եղել 1980-ական թթ.-ի վերջին և 1990-ական թթ.-ի սկզբին, իսկ դրանից հետո մինչև 2001թ.-ը միգրացիոն գործընթացներում թվով ավելի քիչ մարդիկ են ներգրավված եղել (տես հավ. 6):

Ինչպես քաղաքային, այնպես էլ գյուղական բնակչության միգրացիոն տեղաշարժերի վերաբերյալ ներկայացված պաշտոնական տվյալները որոշակի առումով կասկածելի են թվում որոշ քաղաքների և ՆՎՇ-ների գյուղական բնակչության կտրվածքով՝ հատկապես 1992-1994թթ.-ի համար, երբ վստահաբար կարող ենք պնդել, որ տեղի է ունեցել բնակչության զանգվածային արտագաղթ ՀՀ գրեթե բոլոր քաղաքներից և գյուղական շրջաններից:

3.2 ՀՀ բնակչության արդի միգրացիոն տեղաշարժերի աշխարհագրական առանձնահատկությունները

3.2.1. ՀՀ քաղաքային և գյուղական բնակչության միգրացիաների արդի միտումները

ՀՀ մարզերի քաղաքային և գյուղական բնակչության միգրացիաների վերաբերյալ պաշտոնական հավաստի տվյալների բացակայության պատճառով 2002-2015թթ.-ի համար կատարել ենք սեփական հաշվարկները, որում բնակչության ՄՍ-ն ստացել ենք հենվելով բնակչության թվի փոփոխության և բնական շարժի տվյալների վրա: Նպատակ ունենալով ստանալ ՀՀ բոլոր քաղաքների և ՆՎՇ գյուղական բնակչության ՄՍ-ի իրական ցուցանիշները 2002-2015թթ.-ի համար և միմյանց հետ համեմատել տարբեր տարիներին քաղաքային և գյուղական բնակչության, տարբեր քաղաքների և տարածաշրջանների գյուղական բնակչության ՄՍ-ի ցուցանիշները՝ հաշվել ենք նաև միգրացիայի սալոյի գործակիցը 1000 մարդու հաշվով հետևյալ բանաձևով՝ $ՄՄ_q = \frac{(F_{x+1} - F_x) - F_{U_x}}{F_x} \times 1000$, որտեղ $ՄՄ_q$ -ն միգրացիայի սալոյի գործակիցն է, F_x -ը՝ X-երորդ տարում բնակչության թիվը, F_{x+1} -ը՝ X-երորդ տարվա հաջորդ տարում բնակչության թիվը. F_{U_x} -ը՝ բնական աճը X-երորդ տարում, \bar{F}_x -ը՝ X-երորդ տարում բնակչության միջին թվաքանակը: Նկար 16-ում ներկայացված է վերոնշյալ մոտեցմամբ հաշված ՀՀ քաղաքային և գյուղական բնակչության ՄՍ-ի գործակիցները 1991-2015թթ.-ի համար: Ինչպես տեսնում ենք, 1992-1993թթ.-ին բնակչությունը հիմնականում ընդգրված է եղել արտաքին միգրացիոն գործընթացներում, ներքին միգրացիան մղվել է երկրորդ պլան, տեղի է ունեցել բնակչության զանգվածային արտագաղթ և՛ քաղաքային, և՛ գյուղական բնակավայրերից: Սակայն եթե քաղաքային բնակչության պարագայում նույն տեմպերը պահպանվել են նաև 1994թ.-ին, ապա գյուղական բնակչության դեպքում ՄՍ-ի գործակիցը նվազել է: Չնայած հետագա տարիներին քաղաքներից մարդկանց արտահոսքի տեմպերը նվազել են 1992-1994թթ.-ի համեմատությամբ, այնուամենայնիվ, ՄՍ-ի բացասական գործակիցը շարունակեց մնալ բավական բարձր, մինչդեռ գյուղական բնակչության արտահոսքի տեմպերը կտրուկ նվազեցին ընդհուպ մինչև 1999-2001թթ.-ը և գրանցվեց ՄՍ-ի դրական գործակից:



Նկար 16 ՀՀ քաղաքային և գյուղական բնակչության միգրացիայի սալդոյի գործակիցները 1991-2015թթ.-ին (%)

Սա հիմնականում պայմանավորված էր այդ ժամանակաշրջանում հատկապես ՀՀ տնտեսության կառուցվածքային փոփոխությամբ, մասնավորապես՝ արդյունաբերության և շինարարության ծավալների կտրուկ նվազման և այդ ֆոնին հողի սեփականաշնորհման հետ կապված գյուղատնտեսության ավելի բարվոք վիճակում գտնվելու հետ: Չնայած ներքին միգրացիայի ուղղությունների և ծավալների մասին պաշտոնական հավաստի տվյալների բացակայությանը՝ կարելի է արձանագրել, որ այդ տարիներին ՀՀ քաղաքային և գյուղական բնակավայրերից շարունակվող արտագաղթին զուգահեռ տեղի է ունեցել նաև քաղաքից գյուղ մարդկանց տեղաշարժեր, որի պատճառով էլ գյուղական բնակչության թիվը շարունակվող արտագաղթի պայմաններում միգրացիայի միջոցով ոչ միայն շատ քիչ է նվազել, այլև որոշ տարիներին անգամ ավելացել է: Սա անշուշտ արդյունք է ներքին միգրացիոն տեղաշարժերի, քանզի ՀՀ բնակչության արտաքին միգրացիան այդ նույն ժամանակաշրջանում հիմնականում բնութագրվում էր արտագաղթի մեծ և ներգաղթի չնչին ծավալներով:

Վերոնշյալ հանգամանքներում փոփոխության ենթարկվեց նաև ՀՀ ուրբանիզացման մակարդակը, քաղաքային և գյուղական բնակչության հարաբերակցությունը: Եթե մինչ բնակչության զանգվածային արտագաղթի սկիզբը՝ 1991թ.-ին, ուրբանիզացման մակարդակը 69.2% էր, ապա 1995թ.-ին այն նվազեց՝ հասնելով 66.4%-ի: Դա բացատրվում է նրանով, որ 1992-1994թթ.-ին տեղի ունեցած արտագաղթին քանակական առումով ավելի շատ մասնակցություն է ունեցել քաղաքային բնակչությունը: Նույն պատճառներով

ուրբանիզացման մակարդակի նվազման միտումները շարունակվեցին նաև հաջորդ 6-7 տարիներին, որի արդյունքում 2002թ.-ին այն կազմեց ընդամենը 64.3%: Սակայն հետագա տարիներին գյուղական բնակավայրերը դադարեցին հրապուրիչ լինել ներքին միգրացիոն ուղղություններում և իրենք դարձան ինտենսիվ արտագաղթի օջախներ: 2002թ.-ից սկսած աստիճանաբար իրար են մոտենում քաղաքային և գյուղական բնակչության ՄՍ-ի բացասական գործակիցները՝ կապված գյուղական բնակավայրերից բնակչության արտահոսքի ծավալների աճի և ներհոսքի ծավալների կտրուկ նվազման հետ: Գյուղացիական տնտեսությունների խոշորացման առկա միտումների և գյուղատնտեսական արտադրության ինտենսիվության բարձացմանը զուգընթաց վերջին տարիներին ավելի ինտենսիվ և մասշտաբային է դարձել գյուղական բնակչության արտահոսքը: Դա է պատճառը, որ վերջին տարիներին, մասնավորապես՝ 2012-2015թթ.-ին, գյուղական բնակչության ՄՍ-ի բացասական գործակիցները անկախության առաջին տարիներից սկսած առաջին անգամ գերազանցել են քաղաքային բնակչության ՄՍ-ի գործակիցներին: Սա արդյունք է այն բանի, որ գյուղական բնակչության ինտենսիվ արտագաղթից բացի ներքին միգրացիոն ուղղություններում տեղի է ունենում մարդկանց տեղաշարժեր գյուղական բնակավայրերից դեպի առանձին քաղաքներ՝ հիմնականում մայրաքաղաք Երևան: Դրա մասին է խոսում նաև այն փաստը, որ հենց նույն 2012-2015թթ.-ի ընթացքում առաջին անգամ ընդհատվեց դեռևս 1990-ական թթ.-ից սկսված ուրբանիզացման մակարդակի անընդհատ նվազումը և գրանցվեց ուրբանիզացման մակարդակի չնչին աճ՝ 64.3%-ից դառնալով 64.5%: Իսկ ներքին միգրացիոն ուղղություններում Երևանի գրավիչ լինելու և գյուղական և քաղաքային բնակավայրերից դեպի մայրաքաղաք մարդկանց ինտենսիվ տեղաշարժերի մասին է խոսում այն փաստը, որ Երևանի բնակչության տեսակարար կշիռը վերջին տասնամյակում գնալով մեծանում է և՛ ՀՀ ընդհանուր բնակչության, և՛ ՀՀ քաղաքային բնակչության մեջ: Մասնավորապես, եթե 2002թ.-ին Երևանի բնակչության տեսակարար կշիռը ՀՀ ընդհանուր բնակչության մեջ կազմել է 34,3%, իսկ ՀՀ քաղաքային բնակչության մեջ՝ 53,2%, ապա 2016թ.-ին այդ նույն ցուցանիշները համապատասխանաբար կազմել են 35.8% և 56,3%:


ՀՀ քաղաքների բնակչության միգրացիայի սակրոյի միջին գործակիցները 2002 - 2015 թթ.



Քարտեզ 3. ՀՀ քաղաքների բնակչության միգրացիայի սակրոյի միջին գործակիցները 2002-2015թթ.-ին

Քարտեզներ 3-ում և 4-ում ներկայացնում ենք ՀՀ բոլոր քաղաքների և ԼՎՇ-ների գյուղական բնակչության ՄՍ-ի միջինացված գործակիցները 2002-2015թթ.-ի համար, որոնց արդյունքում քաղաքների և ԼՎՇ-ների գյուղական բնակչության համար առանձնացրել ենք 4 տիպեր: Ընդհանրապես, 2002-2015թթ.-ին բնակչության ՄՍ-ի

ամենացածր միջին գործակիցներ ունեցել են առաջին տիպի մեջ մտնող հետևյալ քաղաքները Դիլիջանը՝ -0.4%, Բերդը՝ -0.7%, Իջևանը՝-3.2%, Երևանը՝ -6.5%, Նոյեմբերյանը՝ -6.4%, Մեղրին՝ -8%:




Քարտեզ 4 ՆԿՇ-ների գյուղական բնակչության միգրացիայի սակրոյի միջին գործակիցները 2002-2015թթ.-ին

Քաղաքների և ՆԿՇ-ների գյուղական բնակչության ՄՍ-ի գործակիցները միմյանց հետ համեմատելու համար 2002-2015թթ.-ի ժամանակաշրջանը բաժանել ենք երեք գրեթե

հավասար ժամանակահատվածների՝ 2002-2006թթ., 2007-2011թթ. և 2012-2015թթ.: Առանձին դիագրամներով ներկայացնում ենք այս 3 ժամանակահատվածներում Երևան քաղաքի և ՀՀ մարզերի քաղաքների և ՆՎՇ-ների գյուղական բնակչության ՄՍ-ի միջինացված գործակիցները:

2002-2015թթ.-ի ամբողջ ժամանակահատվածում ՀՀ բոլոր քաղաքների բնակչության ՄՍ-ի գործակիցները եղել են բացասական, իսկ առանձին վերցված երեք ժամանակահատվածների համար բացառություն են կազմում միայն Տավուշի մարզի առանձին քաղաքներ (Դիլիջան, Իջևան), որոնցում ՄՍ-ի դրական գործակիցներ են գրանցվել միայն 2007-2011թթ.-ի համար:

Առհասարակ, և՛ հանրապետության մակարդակով, և՛ քաղաքների մակարդակով, բնակչության ՄՍ-ի գործակիցները բարձր բացասական արժեքներ են ունեցել 2002-2006 և 2007-2011 թվականների ժամանակահատվածներում, իսկ ամենացածրը՝ վերջին տարիներին: Չնայած մեր հաշվարկներով վերջին տարիներին միգրացիայի միջոցով քաղաքների բնակչության թվաքանակի նվազումը ավելի փոքր չափեր է ընդունել նախորդ տարիների հետ համեմատած, սակայն այնուամենայնիվ, այն մնում է բավական բարձր՝ 1 տարվա ընթացքում 9.8% (նկ. 17): Ուստի, ստորև կատարվելիք վերլուծությունների ժամանակ նշելով գործակիցների աճ և նվազում, ավելի բարձր կամ ավելի մեծ արժեք, նկատի ենք ունենալու գործակիցների բացասական աճ կամ նվազում, ավելի բարձր կամ մեծ բացասական արժեք:



Նկար 17. ՀՀ քաղաքների բնակչության միգրացիայի սալդոյի միջինացված գործակիցները 2002-2015թթ.-ին (%)


ՀՀ քաղաքային և գյուղական բնակչության միգրացիոն տեղաշարժերի բնույթի, ինտենսիվության ու առաջացման գործոնների տարածաշրջանային առանձնահատկությունները զգալի են և դրանք զգալի չափով պայմանավորված են Երևանից ունեցած հեռավորությամբ և տրանսպորտային մատչելիությամբ: Դրա մասին է վկայում նաև այն հանգամանքը, որ եթե Երևանի բնակչության ՄՍ-ի միջինացված գործակիցը 1995-2015թթ.-ի համար կազմում է -5.8% , իսկ նրա հարակից գոտու (Արագածոտն, Արարատ, Արմավիր, Կոտայք) համար՝ -8.6% , ապա ծայրամասային գոտու (Գեղարքունիք, Լոռի, Շիրակ, Սյունիք, Վայոց Ձոր, Տավուշ) համար այն ավելի բարձր է՝ -10.8% : Ուստի նպատակահարմար ենք գտել դրանց վերլուծությունները տալ ըստ երեք տարածքային միավորների՝ Երևանի, նրա հանդեպ հարակից և ծայրամասային դիրք ունեցող գոտիների:

3.2.2. Երևան քաղաքի և նրա հարակից գոտու քաղաքային և գյուղական բնակչության միգրացիայի տարածաժամանակային վերլուծությունը

Երևան քաղաքն ու նրան հարակից գոտում գտնվող մարզերն ունեն ինչպես բնակչության միգրացիոն տեղաշարժերի ընդհանուր գծեր, այնպես էլ զգալի տարբերություններ, որոնք պայմանավորված են տնտեսության ճյուղային կառուցվածքով, բնակչության սոցիալական կազմով և կենսամակարդակով, քաղաքային և գյուղական բնակչության հարաբերակցությամբ, տարաբնակեցման բնույթով, ժողովրդագրական իրավիճակով:

Երևան քաղաքում 2002-2015թթ.-ի ընթացքում և առանձին վերցված երեք ժամանակահատվածներում էլ գրանցված ՄՍ-ի գործակիցները իրենց արդյունքներով բավականին զիջում են հանրապետության մակարդակով գրանցված միջինացված արդյունքներին (սկ. 18, աղ. 3): Երևանում նվազագույն գործակիցը եղել է 2002թ.-ին՝ -1.3% , իսկ ահա ամենաբարձրը եղել է 2009թ.-ին՝ -10.5% : Ինչպես նաև Երևանն այն քաղաքների շարքում է, որոնք հանրապետության մակարդակով գրանցել են միգրացիայի սալոյի նվազագույն գործակիցներ, ինչը թույլ է տալիս կատարել երկու եզրակացություն. Առաջինը, որ Երևանը, լինելով ՀՀ մայրաքաղաքը, անհամեմատ զարգացած լինելով ՀՀ այլ քաղաքների նկատմամբ և ունենալով շատ ավելի լավ սոցիալ-տնտեսական պայմաններ, զարգացած ենթակառուցվածքներ, մյուս քաղաքների համեմատ գրանցում է արտագաղթի

ցածր ցուցանիշներ: Եվ երկրորդը, չնայած միգրացիայի միջոցով Երևանի բնակչության թիվը պակասում է, սակայն վերը թվարկված գործոնների շնորհիվ այն դեռևս չի կորցրել իր ձգողական ունակությունը ԶԶ այլ բնակավայրերի նկատմամբ բնակչության ներքին միգրացիայի շրջանակներում: Հետևաբար կարող ենք արձանագրել, որ մայրաքաղաքում գրանցված ՄՍ-ի բացասական, սակայն համեմատաբար ցածր արժեք ունեցող գործակիցները պայմանավորված են քաղաքի և՛ արտաքին, և՛ ներքին միգրացիաների առանձնահատկություններից:



Նկար 18 Երևան քաղաքի բնակչության միգրացիայի սալդոյի գործակիցները 2002-2015թթ.-ին (%)


ԶԶ մարզերի քաղաքային և գյուղական բնակչության միգրացիոն տեղաշարժերի ինտենսիվությունն ու մասշտաբները տարբեր են և ժամանակի ընթացքում փոփոխվում են: **Արագածոտնի մարզի** 3 քաղաքներում էլ (Աշտարակ, Ապարան, Թալին) 2002-2015թթ.-ին բնակչության ՄՍ-ի բացասական գործակիցները աճել են և որպես կանոն ավելի բարձր են եղել ԶԶ քաղաքների միջին ցուցանիշներից: Սակայն եթե 2007-2011թթ.-ին Աշտարակ և Թալին քաղաքներում ՄՍ-ի գործակիցները շարունակում են մնալ ցածր հանրապետության միջինացված գործակիցներից, ապա Ապարան քաղաքում, ընդհակառակը, նախորդ ժամանակահատվածի համեմատ այդ ցուցանիշը աճել է և կազմել -15.6‰ (տես աղ. 3): Իսկ 2012-2015թթ.-ին Արագածոտնի մարզի բոլոր 3 քաղաքներում էլ ՄՍ-ի բացասական գործակիցները կտրուկ աճել են՝ կազմելով Աշտարակ քաղաքի համար -16.1‰, իսկ Ապարան և Թալին քաղաքների համար համապատասխանաբար՝ -18.1‰ և -26.1‰: Բնակչության ՄՍ-ի ամենափոքր

բացասական ցուցանիշը ողջ հետազոտվող ժամանակաշրջանի ընթացքում ունեցել է մարզկենտրոն Աշտարակը, իսկ ամենամեծը՝ Թալինը:

Աղյուսակ 3

Երևանի և նրա հարակից գոտու քաղաքների բնակչության միգրացիայի սալդոյի գործակիցներն ըստ ժամանակահատվածների (%)


Քաղաքներ	2002-2006թթ.	2007-2011թթ.	2012-2015թթ.
Երևան	-6,2	-9,3	-3,2
Աշտարակ	-10,4	-9,7	-16,1
Ապարան	-11,6	-15,6	-18,1
Թալին	-13,9	-13,3	-26,1
Արտաշատ	-11,4	-13,9	-24,4
Արարատ	-14,3	-13	-2,8
Վեդի	-12,8	-17,2	-8,2
Մասիս	-14	-15,1	-5,3
Արմավիր	-17,4	-20,4	-7,5
Մեծամոր	-23,8	-26,6	-14,3
Վաղարշապատ	-16,5	-19,2	-3,6
Հրազդան	-15,5	-18,3	-10,8
Չարենցավան	-15	-17,6	-3,4
Ծաղկաձոր	-13,1	-9,5	-11
Աբովյան	-16,2	-20,9	-3,6
Բյուրեղավան	-15,4	-18,9	-11,8
Եղվարդ	-17,1	-21,2	-3,8
Նոր Հաճն	-16,8	-17,4	-3,1



Նկար 19. Արագածոտնի մարզի նախկին վարչական շրջանների գյուղական բնակչության միգրացիայի սալդոյի գործակիցները 2002-2015թթ.-ին (%)

Ինչպես երևում է նկար 19-ից, մարզի գյուղական բնակչության ՄՍ-ի բացասական գործակիցներն ունեցել են բոլոր ՆՎՇ-ների գյուղական բնակչությունը, ընդ որում ամբողջ ժամանակահատվածի համար դրանք ավելի փոքր են եղել քան քաղաքներինը, որը վկայում է մարզի քաղաքներից բնակչության ավելի մեծ արտահոսքի, և մարզի ներսում գյուղից քաղաք բնակչության միգրացիայի գրեթե բացակայության մասին: Արագածի և Թալինի ՆՎՇ-ների գյուղական բնակչության ՄՍ-ի բացասական գործակիցները ողջ հետազոտվող ժամանակահատվածում ավելի բարձր են եղել, ընդ որում առավելագույնը նկատվել է 2007-2011թթ.-ին: Ապարանի և Աշտարակի ՆՎՇ-ների գյուղական բնակչության արտահոսքի ինտենսիվությունը աճել է 2002-2015թթ.-ին: Ամբողջ ժամանակահատվածում մարզի ՆՎՇ-ների գյուղական բնակչության ՄՍ-ի գործակիցները ավելի ցածր են եղել ՀՀ գյուղական բնակչության միգրացիայի սալդոյի միջին գործակցից:

Արարատի մարզի քաղաքների բնակչության միգրացիայի վերլուծությունը 2002-2015թթ.-ին ցույց է տալիս, որ մարզի բոլոր քաղաքներն էլ հետազոտվող ժամանակահատվածում հիմնականում բնութագրվում են Երևանի հարակից գոտու քաղաքների համեմատությամբ ՄՍ-ի ավելի բարձր բացասական ցուցանիշներով (տես աղ. 3): Վերջին տարիներին (2012-2015թթ.) նվազել են ՄՍ-ի բացասական գործակիցները՝ Արարատ, Վեդի և Մասիս քաղաքներում. իսկ Արտաշատ քաղաքում, ընդհակառակը, աճել է՝ դառնալով -24,4%: Դա նշանակում է, որ բնակչության արտահոսքը մարզկենտրոնից վերջին տարիներին զգալիորեն ավելացել է:




Նկար 20 Արարատի մարզի նախկին վարչական շրջանների գյուղական բնակչության միգրացիայի սալդոյի գործակիցները 2002-2015թթ.-ին (%)

Արարատի մարզի ՆՎՇ-ների գյուղական բնակչության ՄՍ-ի բացասական գործակիցները հիմնականում ցածր են ՀՀ գյուղական բնակչության ՄՍ-ի միջին գործակիցից: Արարատի մարզի գյուղական բնակչության ՄՍ-ի ցածր բացասական ցուցանիշները մարզի քաղաքների համեմատությամբ մի կողմից վկայում են գյուղական բնակչության արտահոսքի համեմատաբար փոքր ծավալների մասին, իսկ մյուս կողմից մարզի սահմաններում գյուղից-քաղաք բնակչության միգրացիայի գրեթե բացակայության մասին: Անհրաժեշտ է նշել, որ նույնիսկ 2007-2011թթ-ին. Մասիսի ՆՎՇ-ի գյուղական բնակչության ՄՍ-ի գործակիցը դրական է եղել (նկ. 20):

Արմավիրի մարզի քաղաքների միգրացիայի վերլուծությունը քննարկվող ժամանակահատվածում ցույց է տալիս, որ բոլոր երեք քաղաքներում էլ նկատվում է բացասական ՄՍ-ի նվազման միտումներ (տես աղ. 3): Բոլոր երեք քաղաքներն էլ բնութագրվում են ՀՀ քաղաքների միջին ցուցանիշից բարձր ՄՍ-ի բացասական գործակցով: Ընդ որում, ՄՍ-ի բացասական գործակցի առավել բարձր ցուցանիշներով առանձնանում է միագործառուբային Մեծամոր քաղաքը, որը ՀՀ բնակչության ՄՍ-ի բացասական ամենաբարձր ցուցանիշ ունեցող քաղաքներից մեկն է (-21,6‰): Վերջին տարիներին՝ 2012-2015թթ.-ին, Արմավիր և Վաղարշապատ քաղաքների ՄՍ-ի բացասական ցուցանիշները նվազել են և համեմատաժ հանրապետության քաղաքների միջին տվյալների հետ՝ գրանցել են ավելի փոքր արժեքներ: Այսպիսով, կարող ենք հետևություն անել, որ Արմավիրի մարզի քաղաքները ևս բնութագրվում են ոչ բարենպաստ միգրացիոն ռեժիմով, քանի որ միգրացիայի շնորհիվ քաղաքների բնակչության թվի նվազումը ընդունել է բավական մեծ չափեր և ունի կայուն բնույթ:

Պատկերը լրիվ այլ է Արմավիրի մարզի գյուղական բնակչության դեպքում: Ի տարբերություն մարզի քաղաքային բնակչությանը, գյուղական բնակչության ՄՍ-ի բացասական գործակիցները ամբողջ վերլուծվող ժամանակահատվածում բավականին ցածր են հանրապետության գյուղական բնակչության ՄՍ-ի միջին գործակիցներից (նկ. 21): Այն հատկապես ցածր է Էջմիածնի ՆՎՇ-ում, որտեղ 2007-2011թթ.-ին ՄՍ-ի գործակիցը նույնիսկ դրական է եղել՝ 3.3‰: Գյուղական բնակչության արտահոսքի մասշտաբները վերջին տարիներին ավելացել է հատկապես Բաղրամյանի ՆՎՇ-ում: Մարզի քաղաքների և տարածաշրջանների գյուղական բնակչության միգրացիայի

համադրված վերլուծությունը վկայում է այն մասին, որ մարզի ներսում միգրացիոն տեղաշարժերը աննշան են (նկ. 21):




Նկար 21 Արմավիրի մարզի նախկին վարչական շրջանների գյուղական բնակչության միգրացիայի սալդոյի գործակիցները 2002-2015թթ.-ին (%)

Կոտայքի մարզում ուսումնասիրվող ժամանակահատվածի առաջին տարիներին քաղաքների բնակչության ՄՍ-ի բացասական գործակիցների միջև տարբերությունները մեծ չեն եղել (բացառությամբ Ծաղկաձոր քաղաքի), իսկ գործակիցները մի փոքր են բարձր եղել հանրապետության քաղաքների միջին գործակից (տես աղ. 3): Հաջորդ ժամանակահատվածում (2007-2015թթ.), այդ գործակիցները նախ բարձրանում են, իսկ հետո նվազում որպես կանոն գերազանցելով ՀՀ քաղաքների ՄՍ-ի բացասական միջին գործակից: ՄՍ-ի բացասական ցուցանիշը բարձր է եղել Եղվարդ քաղաքում, իսկ վերջին տարիներին՝ Բյուրեղավանում և Հրազդանում: Ծաղկաձոր քաղաքի ՄՍ-ի գործակիցի հետագծի գրաֆիկը Էապես տարբերվում է մարզի մնացած քաղաքներից՝ իր ՄՍ-ի բացասական գործակիցի աննշան փոփոխությամբ:

Չնայած Կոտայքի մարզի բոլոր ՆՎՇ-ների գյուղական բնակչության ՄՍ-ի գործակիցները բացասական են, սակայն դրանք հանրապետության գյուղական բնակչության միջին գործակիցի համեմատությամբ ցածր են: Բացառություն է կազմում միայն Հրազդանի ՆՎՇ-ն, որտեղ 2007-2011թթ.-ին գյուղական բնակչության ՄՍ-ի բացասական գործակիցը եղել է շատ բարձր՝ -27.3% (նկ. 22):

Ինչպես Երևանի հարակից գոտու մյուս մարզերում, Կոտայքի մարզում ևս քաղաքային և գյուղական բնակչության ՄՍ-ի բացասական ցուցանիշներն ամբողջ վերլուծվող ժամանակահատվածում վկայում են ներմարզային միգրացիոն տեղաշարժերի գրեթե բացակայության մասին: Միգրացիոն հոսքերի հիմնական զանգվածները ընթանում են ՀՀ

սահմաններից դուրս, իսկ փոքր մասը ուղղված են դեպի Երևան: Ինչպես Երևանի հարակից գոտու այլ մարզերում, Կոտայքի մարզում էլ գրեթե բոլոր տարածաշրջանների գյուղական բնակչության ՄՍ-ի բացասական գործակիցները աճել են վերջին տարիներին:



Նկար 22. Կոտայքի մարզի նախկին վարչական շրջանների գյուղական բնակչության միգրացիայի սալդոյի գործակիցները 2002-2015թթ.-ին (%)

3.2.3 ՀՀ ծայրամասային գոտու քաղաքային և գյուղական բնակչության միգրացիայի տարածաժամանակային վերլուծությունը

Ի տարբերություն Երևանի հարակից գոտու մարզերի, որոնց բնակավայրերը, գտնվելով Երևանի անմիջական ազդեցության գոտում, միմյանց հետ թույլ են փոխկապակցված, ՀՀ ծայրամասային գոտու մարզերի տարածքներում ձևավորվում են զարգացվածության տարբեր աստիճաններում գտնվող տարածաշրջանային (մարզային) տարաբնակեցման համակարգեր: Դրանք միմյանցից տարբերվում են իրենց տարածքային կառուցվածքով, տարբեր տիպի և մեծության բնակավայրերի համամասնությամբ, տարածաշրջանային կենտրոնի (մարզկենտրոնի) մեծությամբ, համակարգաստեղծ կապերի ինտենսիվությամբ [61]: Դրանք բոլորը ազդում են մարզի բնակչության միգրացիաների ուղղությունների և մասշտաբների վրա: Ընդ որում, Երևանին հարակից և Նրա անմիջական ազդեցության գոտում գտնվող մարզերի բնակավայրերի բնակչության միգրացիոն ճնշումը Երևանի նկատմամբ անհամեմատ թույլ է, քան հեռավոր մարզերի քաղաքային և գյուղական բնակավայրերինը: Դա բացատրվում է նրանով, որ ինչպես ցույց է տալիս Երևանին ոչ հարակից, այսինքն ծայրամասային գոտու քաղաքների և ՆԿԸ-ների գյուղական բնակչության միգրացիոն տեղաշարժերի միաժամանակյա վերլուծությունը՝

դրանց մարզկենտրոններն ու մարզի այլ քաղաքները սոցիալ-տնտեսական փոքր ներուժի պայմաններում գյուղական բնակչության համար գրավիչ չեն դառնում և չեն ստեղծում իրենց սեփական միգրացիոն ձգողական դաշտերը:

Վերլուծության համար առնձնացված երկրորդ գոտին ընդգրկում է Երևանի նկատմամբ ծայրամասային դիրք ունեցող՝ Գեղարքունիքի, Լոռու, Շիրակի, Սյունիքի, Վայոց Ձորի և Տավուշի մարզերը:

Գեղարքունիքի մարզի բոլոր հինգ քաղաքներն էլ ՆՎՇ-ների կենտրոններ են և բնութագրվում են ՄՍ-ի բացասական գործակիցների տարբեր մեծություններով և փոփոխությունների բնույթով: Եթե հետազոտվող ժամանակահատվածի սկզբնական փուլում՝ 2002-2007թթ.-ին, ՄՍ-ի բացասական գործակիցները բարձր էին ճամբարակ և Սևան քաղաքներում, իսկ ամենացածրը՝ Վարդենիս և Գավառ քաղաքներում, ապա հետագա տարիներին ճամբարակի, Սևանի և Վարդենիսի բնակչության ՄՍ-ի բացասական գործակիցները նվազել են, իսկ Գավառ և Մարտունի քաղաքներում ընդհակառակը՝ բարձրացել (աղ. 4): Ողջ հետազոտվող ժամանակահատվածում քաղաքներից ՄՍ-ի բացասական ամենաբարձր ցուցանիշներն ունի Մարտունի քաղաքը: Ամբողջ ժամանակահատվածում Գեղարքունիքի մարզի քաղաքների ՄՍ-ի միջին բացասական գործակիցն ընդհանուր առմամբ մոտ է եղել հանրապետության քաղաքների միջին գործակցին:

Մարզի ՆՎՇ-ների գյուղական բնակչության ՄՍ-ի բացասական գործակիցները հիմնականում ցածր են ՀՀ ամբողջ գյուղական բնակչության և այլ մարզերի ՆՎՇ-ների մի մասի գյուղական բնակչության միջին գործակիցներից: Նույնիսկ Կրասնոսելսկի ՆՎՇ-ում 2002-2006թթ.-ին, իսկ Մարտունու ՆՎՇ-ում 2007-2011թթ.-ին գյուղական բնակչության ՄՍ-ի գործակիցներն ունեցել են դրական արժեքներ (նկ. 23): Մարզի բոլոր ՆՎՇ-ների (բացառությամբ Կրասնոսելսկի) գյուղական բնակչության ՄՍ-ի բացասական գործակիցները հետազոտվող ժամանակահատվածի ընթացքում աճել են, որը վկայում է մարզի գյուղական բնակչության արտահոսքի մասշտաբների ավելացման մասին:

Աղյուսակ 4


ՀՀ ծայրամասային գոտու քաղաքների բնակչության միգրացիայի սալդոյի գործակիցներն ըստ ժամանակահատվածների (%)

Քաղաքներ	2002-2006թթ.	2007-2011թթ.	2012-2015թթ.
----------	--------------	--------------	--------------

Գավառ	-11,8	-13,2	-17,9
Ճամբարակ	-15,3	-12	-6,9
Մարտունի	-13,6	-16,2	-18,5
Սևան	-13,8	-16,4	-5,8
Վարդենիս	-11,2	-14,7	-4,2
Վանաձոր	-19,8	-26	-12,3
Ալավերդի	-18,1	-23,9	-5,8
Ախթալա	-17,4	-10,2	-4,3
Թումանյան	-15,6	-18	-13,9
Շամլուղ	-16,1	-20,8	-11
Սպիտակ	-21,6	-27,6	-6,2
Ստեփանավան	-17,6	-23,4	-6,5
Տաշիր	-19	-27,6	-11,5
Գյումրի	-16,2	-20,1	-9,7
Մարալիկ	-21,8	-28,3	-6,4
Արթիկ	-17,9	-22	-13,9
Կապան	-10,1	-10,9	-3,6
Քաջարան	-11,2	-13,6	-7,2
Գորիս	-11,4	-13,6	-6,5
Մեղրի	-8,2	-11,8	-3
Ագարակ	-14,1	-14,4	-10
Սիսիան	-12,6	-14,9	-3,5
Եղեգնաձոր	-8,6	-10,5	-12,8
Վայք	-15,1	-9,6	-11,8
Ջերմուկ	9	-13,1	-14,6
Իջևան	-4,8	0,4	-8,4
Դիլիջան	-1,9	3	-2,9
Նոյեմբերյան	-3,7	2	-20,4
Բերդ	-0,3	2,9	-5,6
Այրում	-	-3,6	-18,9

Որպես կանոն, մարզի ՆՎՇ-ների շրջկենտրոն-քաղաքների բնակչության ՄՍ-ի բացասական գործակիցները զգալիորեն բարձր են համապատասխան ՆՎՇ-ների գյուղական բնակչության միջին գործակիցներից, ինչը վկայում է մարզի և նրա առանձին շրջանների ներսում ներքին միգրացիայի գրեթե ամբողջական բացակայության մասին: Ինչպես ՀՀ այլ մարզերում, այստեղ ևս միգրացիաները մեծամասամբ ուղղված են ՀՀ սահմաններից դուրս, իսկ փոքր քանակությամբ՝ Երևան և նրա մերձակա բնակավայրեր: Բնակչության միգրացիոն տեղաշարժերը Էական ազդեցություն չեն թողնում մարզի


տարաբնակեցման համակարգի կառուցվածքի վրա և այն շարունակում է մնալ բազմակենտրոն և թույլ ձևավորված:



Նկար 23. Գեղարքունիքի մարզի նախկին վարչական շրջանների գյուղական բնակչության միգրացիայի սալդոյի գործակիցները 2002-2015թթ.-ին (%)

Բնակչության միգրացիոն տեղաշարժերի առումով առանձնապես աննպաստ իրավիճակ է ստեղծվել **Լոռու մարզում**: Բավական է նշել, որ քննարկվող ամբողջ ժամանակահատվածի կտրվածքով ՄՍ-ի ամենաբարձր բացասական գործակիցներ ունեցող 33 քաղաքներից երեքը գտնվում են մարզի տարածքում՝ Վանաձորը (-19.4%), Տաշիրը (-19.4%) և Սպիտակը (-18.5%) (տես աղ. 4): Մարզի բոլոր քաղաքների բնակչության ՄՍ-ի բացասական գործակիցները բարձր են եղել հատկապես 2002-2011թթ.-ին և զգալիորեն գերազանցել են 33 քաղաքների միջին ցուցանիշին: Վերջին տարիներին ՄՍ-ի բացասական գործակիցը բոլոր քաղաքներում համեմատաբար նվազել է, թեև Վանաձոր, Թումանյան, Տաշիր և Շամլուղ քաղաքներում այն շարունակում է մնալ բավականին բարձր: Փաստորեն, միգրացիոն լարվածությունը մեծանում է հանքագործական արդյունաբերության փոքր կենտրոններում (Թումանյան, Շամլուղ), որտեղ տնտեսական հիմքը կազմող արդյունաբերական միակ ձեռնարկությունը չաշխատելու պարագայում մեծ չափերի է հասնում գործազրկությունը՝ հետևաբար նաև արտագաղթը: Վանաձոր քաղաքի բնակչության արտահոսքի մեծ չափերը ողջ ժամանակահատվածում պայմանավորված է քաղաքի մեծ թվով արդյունաբերական ձեռնարկությունների փակման և դրա հետ կապված գործազրկության զգալի չափերի հետ:

Միևնույն պրոբլեմային իրավիճակն է ստեղծվել նաև Լոռու մարզի ՆՎՇ-ների գյուղական բնակչության միգրացիոն տեղաշարժերում: Ինչպես երևում է նկար 24-ից՝ քննարկվող ժամանակահատվածի գրեթե բոլոր տարիներին մարզի գյուղական բնակչության ՄՍ-ի բացասական գործակիցները բարձր են ՀՀ գյուղական բնակչության միջին ցուցանիշից:




Նկար 24. Լոռու մարզի նախկին վարչական շրջանների գյուղական բնակչության միգրացիայի սալոյոյի գործակիցները 2002-2015թթ.-ին (%)

Ընդ որում, եթե քննարկվող ժամանակահատվածում Գուգարքի և Տաշիրի ՆՎՇ-ների գյուղական բնակչության ՄՍ-ի բացասական գործակիցները զգալիորեն բարձրացել են, ապա Թումանյանի և Սպիտակի ՆՎՇ-ում նվազել են, իսկ Ստեփանավանիինը՝ մնացել անփոփոխ: Հատկապես մտահոգիչ է սահմանամերձ Տաշիրի ՆՎՇ-ի գյուղական բնակչության արտահոսքի մեծ ծավալները: Բավական է նշել, որ ՄՍ-ի գործակիցը 2012-2015թթ.-ի համար կազմել է -43%: Ինչպես և մյուս մարզերում, այնպես էլ Լոռու մարզում, թույլ է ներկայացված ներմարզային միգրացիոն տեղաշարժերը, չնայած՝ Երևանից ունեցած մեծ հեռավորությանը և Վանաձոր մարզկենտրոնի առկայությանը:

Բնակչության միգրացիոն հիմնախնդիրները բավականին սուր են դրսևորվում նաև ՀՀ հյուսիսային մասում գտնվող մեկ այլ՝ **Շիրակի մարզում**: Մարզի բոլոր երեք քաղաքների՝ Գյումրի, Արթիկի և Մարալիկի բնակչության ՄՍ-ի բացասական գործակիցները ողջ ժամանակահատվածի կտրվածքով գերազանցում են ՀՀ քաղաքների միջին ցուցանիշին (տես աղ. 4): Ընդ որում, ՄՍ-ի ամենաբարձր բացասական գործակիցն ունի Մարալիկը, որը նաև ՀՀ քաղաքների թվում ամենաբարձր ցուցանիշներից է: Այն բարձր է եղել հատկապես 2007-2011թթ.-ին՝ -28.3%: Մարզի երեք քաղաքների ՄՍ-ի բացասական

գործակիցները քննարկվող ժամանակահատվածի վերջին տարիներին նվազել են, սակայն շարունակում են դեռևս մնալ բարձր, հետևաբար կարելի է փաստել, որ Շիրակի մարզի քաղաքները միգրացիայի ազդեցությամբ տարեցտարի կորցնում են իրենց բնակչության զգալի հատված և զրկվում են քաղաքների սոցիալ-տնտեսական զարգացման համար շատ կարևոր մարդկային ռեսուրսներից:

Շիրակի մարզի ՆՎՇ-ների գյուղական բնակչության միգրացիայի վերլուծությունը ցույց է տալիս, որ 2002-2015թթ.-ին ՄՍ-ի բացասական գործակիցները զգալիորեն աճել են Ախուրյանի և Արթիկի ՆՎՇ-ներում, իսկ ավելի փոքր չափով՝ Ամասիայի ՆՎՇ-ում (նկ. 25): Մինևույն ժամանակ նշված ժամանակահատվածում մի փոքր նվազել է Անիի և Աշոցքի ՆՎՇ-ների գյուղական բնակչության ՄՍ-ի բացասական գործակիցները: Ընդհանուր առմամբ, ողջ ժամանակահատվածի կտրվածքով մարզի գյուղական բնակչության ՄՍ-ի բացասական ցուցանիշները գերազանցում են ՀՀ գյուղական բնակչության միջին ցուցանիշին:



Նկար 25 Շիրակի մարզի նախկին վարչական շրջանների գյուղական բնակչության միգրացիայի սալդոյի գործակիցները 2002-2015թթ.-ին (%)

Շիրակի մարզի քաղաքների և ՆՎՇ-ների գյուղական բնակչության միգրացիոն տեղաշարժերի համատեղ վերլուծությունը ևս վկայում է, որ ներմարզային միգրացիոն տեղաշարժերը շատ թույլ են ներկայացված: Ընդ որում, ինչպես և Վանաձորը Լոռու մարզի դեպքում, Գյումրին ևս հետխորհրդային տարիներին դադարել է Շիրակի մարզի այլ բնակավայրերի բնակչության համար միգրացիոն ձգողական կենտրոն լինել: ՀՀ մեծությամբ երկրորդ և երրորդ քաղաքները հետխորհրդային տարիներին կորցրել իրենց մշտական բնակչության գրեթե կեսը, որն աննախադեպ է հանրապետության քաղաքների


թվում: Գյուժիից բնակչության մեծ արտահոսքը միայն երկրաշարժի հետևանքներով չի բացատրվում, դրան նպաստել է նաև տասնյակ արդյունաբերական ձեռնարկությունների փակման հետևանքով գործազրկության աճը և բնակչության աղքատացումը: Ներկա պահին գերակշռում են բնակչության արտաքին միգրացիաները:

Սյունիքը և Վայոց Ձորը ծայրամասային գոտու առավել լեռնային և թույլ բնակեցված մարզերն են: Նշված մարզերում ձևավորվող տարաբնակեցման համակարգերն առանձնանում են բնակավայրերի փոքրությամբ և ոչ մեծ խտությամբ, ինչպես նաև՝ մարզկենտրոնների անբավարար զարգացմամբ: Վերը նշված գործոնները որոշակի ազդեցություն են թողնում տվյալ մարզերի բնակչության միգրացիոն տեղաշարժերի ուղղությունների և մասշտաբների վրա:

Ինչպես ցույց են տալիս Սյունիքի քաղաքների բնակչության միգրացիաների վերլուծությունը 2002-2015թթ.-ի համար, կախված քաղաքների աշխարհագրական դիրքից, մեծությունից, գործառույթներից և ՏՀ-ում զբաղեցրած տեղից՝ փոխվում են ինչպես միգրացիաների ուղղությունները, այնպես էլ մասշտաբները, որն արտահայտվում է ՄՍ-ի գործակիցներում (տես աղ. 4): Մարզի բոլոր քաղաքներում, վերլուծվող ժամանակահատվածի սկզբնական տարիներին նկատվում է ՄՍ-ի բացասական գործակցի աճ, իսկ վերջին տարիներին՝ նվազում: Վերլուծություններում չենք ընդգրկել մոտ 300 բնակչություն և մարզի այլ քաղաքների համեմատությամբ միգրացիայի աննշան բացարձակ ցուցանիշներ ունեցող Դաստակերտ քաղաքը: Քաղաքների մեծ մասում ՄՍ-ի բացասական գործակիցները փոքր-ինչ ավելի ցածր են, քան ՀՀ քաղաքների միջին ցուցանիշներն են: Դա բացատրվում է նրանով, որ մարզի քաղաքներում (Քաջարան, Ագարակ) հանքագործական արդյունաբերության զարգացումը նոր աշխատատեղեր է ստեղծում ոչ միայն նշված քաղաքներում, այլև նաև մարզի այլ քաղաքներում: Նոր աշխատատեղերի ստեղծմանը նպաստում են նաև մարզի այլ բնական հարուստ ռեսուրսների (ջրաէներգետիկ, ռեկրեացիոն և այլն) և Իրանի հետ առևտրատնտեսական և տրանսպորտային կապերի զարգացումը:

Մարզի չորս ՆՎՇ-ների գյուղական բնակչության ՄՍ-ի գործակիցների վերլուծությունը քննարկվող ժամանակահատվածում ցույց են տալիս, որ Կապանի և Մեղրու ՆՎՇ-ների գյուղական բնակչության ՄՍ-ի բացասական գործակիցներն աճի միտումներ են

դրսևորում, իսկ Սիսիանի և Գորիսի ՆՎՇ-ներում՝ ընդհակառակը, նվազման միտումներ (նկ. 26):



Նկար 26. Սյունիքի մարզի նախկին վարչական շրջանների գյուղական բնակչության միգրացիայի սալոյոյի գործակիցները 2002-2015թթ.-ին (%)


Վերջին տարիներին նույնիսկ Կապանի և Մեղրու ՆՎՇ-ների գյուղական բնակչության ՄՍ-ի գործակիցները ավելի բարձր են եղել ՀՀ գյուղական բնակչության համապատասխան միջին ցուցանիշից: Սա իհարկե խիստ մտահոգիչ է՝ հաշվի առնելով նշված ՆՎՇ-ների գյուղական բնակչության ցածր խտությունը, գյուղերի ոչ մեծ մարդաշատությունը, բնակչության ցածր բնական աճը: Մեծ թվով գյուղական բնակավայրեր վերացման եզրին են:

Մարզի քաղաքների և ՆՎՇ-ների գյուղական բնակչության միգրացիոն տեղաշարժերի համադրված վերլուծությունը ցույց է տալիս, որ այս հեռավոր շրջանում ևս թույլ է դրսևորվում ներմարզային միգրացիոն կապերը: Սյունիքում բացակայում են միգրացիոն ձգողական տեղական կենտրոնները, որը բացասաբար է անդրադառնում ռազմավարական նշանակություն ունեցող և ռեսուրսներով բավարար ապահովված մարզի սոցիալ-տնտեսական զարգացման վրա [39]: Մարզի միգրանտների մեծ մասը մեկնում են երկրից, իսկ կրթություն ստացող երիտասարդների համար միգրացիոն գրավչությունը շարունակում է պահպանել մայրաքաղաք Երևանը:

Վայոց Ձորի մարզի քաղաքներում քննարկվող ժամանակահատվածի սկզբնական տարիներին ՄՍ-ի բացասական գործակիցներն եղել են նույնիսկ ավելի ցածր, քան ՀՀ քաղաքների միջին ցուցանիշն է, սակայն հետագա տարիներին գործակցի աճի հետ

կապված դրանք սկսում են գերազանցել միջին ցուցանիշին (տես աղ. 4): Իհարկե, մարզի քաղաքների ՄՍ-ի բացասական գործակցի աճը նոսր բնակեցված և գյուղաբնակ մարզի համար խիստ մտահոգիչ է: Միգրացիայի ձգողական տեղական կենտրոնների բացակայության պայմաններում միգրանտները հիմնականում մեկնում են մարզի սահմաններից դուրս:

Վայոց Ձորի մարզի Եղեգնաձորի և Վայքի ՆՎՇ-ների գյուղական բնակչության ՄՍ-ի բացասական գործակիցները բավականին մոտ են հանրապետության գյուղական բնակչության համապատասխան միջին ցուցանիշին (սկ. 27): Ընդ որում, ի տարբերություն մարզի քաղաքների, քննարկվող ժամանակահատվածում նկատելի է ՄՍ-ի բացասական գործակցի աննշան նվազում: Մարզի ՆՎՇ-ների գյուղական բնակչության ՄՍ-ի բացասական գործակիցներն ավելի փոքր են, քան քաղաքներինը, որը վկայում է մարզի սահմաններում գյուղից քաղաք միգրացիայի գրեթե բացակայության մասին:




Նկար 27 Վայոց Ձորի մարզի նախկին վարչական շրջանների գյուղական բնակչության միգրացիայի սալդոյի գործակիցները 2002-2015թթ.-ին, (%)

Ճայրամասային գոտում բնակչության միգրացիոն տեղաշարժերի առանձնահատուկ իրավիճակ է ստեղծվել **Տավուշի մարզում**: Սահմանամերձ, լեռնային և անտառապատ այս մարզում խոշոր քաղաքային կենտրոնի բացակայության պայմաններում կարևոր նշանակություն է ստանում նախկին շրջկենտրոնների զարգացումը: Այս տեսակետից հարաբերականորեն դրական պետք է համարել, որ քննարկվող ժամանակահատվածի մեծ մասում մարզի քաղաքներից երեքը՝ Դիլիջանը, Իջևանը և Բերդը ՅՅ այն քաղաքների շարքում են, որոնք քննարկվող ժամանակահատվածում ունեցել են ՄՍ-ի ամենացածր բացասական գործակիցները: Ընդ որում, Տավուշի մարզի քաղաքները (բացառությամբ Այրումի) ՅՅ-ում այն եզակի քաղաքներից են, որոնք 2007-2011թթ.-ին ունեցել են

բնակչության միգրացիայի դրական սալոդ (տես աղ. 4): Սակայն պատկերը զգալիորեն փոխվեց վերջին տարիներին, երբ բնակչության արտահոսքի հետ կապված բոլոր քաղաքների բնակչության ՄՍ-ի գործակիցները դարձան բացասական: Մարզի քաղաքներից միգրացիոն տեղաշարժերի առումով առավել լավ վիճակում են գտնվում Դիլիջան և Իջևան քաղաքները: Վերջին տարիներին Դիլիջան քաղաքում կուրորտային գործառույթների հետ մեկտեղ կրթական և բանկային գործառույթների զարգացումը որոշակի միգրացիոն ձգողական դաշտ ձևավորեց: Մարզի բնակչության համար տեղական ձգողական դաշտ է ստեղծել նաև մարզկենտրոն Իջևանը՝ շնորհիվ վարչական-կազմակերպչական և բարձրագույն կրթության նոր գործառույթների զարգացմամբ: Տավուշի մարզի քաղաքները, թերևս բացի Դիլիջանից, իրենց սոցիալ-տնտեսական զարգացման մակարդակով ամենաինչ Էլ գրավիչ չեն այլ բնակավայրի բնակիչների համար, այդ իսկ պատճառով 2007-2011թթ.-ին գրանցված ՄՍ-ի դրական ցուցանիշները կարծում ենք կապված է քաղաքների մշտական բնակչության վերաբերյալ ընթացիկ հաշվառումների ժամանակ ստացված տվյալների անճշտությունների հետ:

Տավուշի մարզի բոլոր երեք ՆՎՇ-ների գյուղական բնակչության ՄՍ-ի բացասական գործակիցները քննարկվող ժամանակահատվածում նվազել են, ընդ որում եթե Իջևանի և Նոյեմբերյանի ՆՎՇ-ներում այն դրսևորվել է զգալի, ապա Տավուշի ՆՎՇ-ում՝ աննշան չափով (սկ. 28): Ընդհանուր առմամբ քննարկվող ողջ ժամանակահատվածում գյուղական բնակչության միգրացիոն տեղաշարժերի առավել վատ վիճակ է ստեղծվել Տավուշի ՆՎՇ-ում, որտեղ ՄՍ-ի բացասական գործակիցը զգալիորեն գերազանցում է մարզի մյուս երկու ՆՎՇ-ների և ՀՀ գյուղական բնակչության միջին գործակիցներին: Տավուշի գյուղական բնակչության արտահոսքը խիստ մտահոգիչ է, քանի որ դրանց մեծ մասը ապրում են սահմանամերձ գյուղական բնակավայրերում:



Նկար 28 Տավուշի մարզի նախկին վարչական շրջանների գյուղական բնակչության միգրացիայի սալոդի գործակիցները 2002-2015թթ.-ին, (%)

Ամփոփելով 2002-2015թթ.-ին Երևանի, Նրան հարակից և ծայրամասային գոտիների մարզերի քաղաքների և ՆՎՇ-ների գյուղական բնակչության ՄՍ-ի գործակիցների տարածաժամանակային վերլուծությունը՝ կարելի է կատարել հետևյալ եզրահանգումներն ու հետևությունները.

1. Առհասարակ, ուսումնասիրվող ժամանակահատվածում միգրացիայի միջոցով նվազել է Երևան քաղաքի և ՀՀ բոլոր մարզերի և՛ քաղաքային, և՛ գյուղական բնակչության թվաքանակը, սակայն դա տարբեր գոտիների և դրանցում գտնվող մարզերի քաղաքային և գյուղական բնակչության մակարդակով արտահայտվել է տարբեր ինտենսիվությամբ:

2. ՄՍ-ի բացասական գործակիցները համեմատաբար բարձր են ծայրամասային գոտու Լոռու և Շիրակի մարզերի քաղաքներում: Աղետի գոտում գտնվող նշված մարզերը ՀՀ մարզերի թվում առանձնանում են նաև գործազրկության և աղքատության առավել բարձր ցուցանիշներով: Ընդ որում, դա վերաբերում է ոչ միայն միագործառուծության արդյունաբերական քաղաքներին, այլև Գյումրի և Վանաձոր մարզկենտրոններին, որոնց բնակչության ՄՍ-ի բացասական գործակիցները ամենաբարձրներից են: Մի քանի մարզերի (Վայոց Ձոր և Տավուշ) քաղաքներում նկատվում է այն միտումը, որ 2012-2015թթ.-ին ՄՍ-ի բացասական գործակիցները կտրուկ աճում են, իսկ դա նշանակում է, որ վերջին տարիներին բնակչության արտահոսքը այդ քաղաքներից ավելացել է:

3. Գյուղական բնակչության կտրվածքով նկատվում է այն օրինաչափությունը, որ ՄՍ-ի բացասական գործակիցները համեմատաբար ցածր են Երևանի հարակից գոտու մարզերի գյուղական բնակավայրերում: Մասնավորապես, ամբողջ ժամանակահատվածի համար ամենացածրը Մասիսի, Էջմիածնի և Կոտայքի ՆՎՇ-ների գյուղական բնակչության ՄՍ-ի գործակիցներն են: Թերևս, դա պայմանավորված է մայրաքաղաքի մոտիկությամբ, որն իրենից ենթադրում է սերտ սոցիալ-տնտեսական կապեր, գյուղմթերքի իրացման մեծ շուկայի առկայություն, Երևանում աշխատելու հնարավորություն և այլն:

4. 2002-2015թթ.-ի համար ընդհանուր վերցված ՄՍ-ի բացասական ցուցանիշները ամենաբարձրն են ծայրամասային գոտու Լոռու մարզի Տաշիրի և Գուգարքի ՆՎՇ-ների և Շիրակի մարզի Արթիկի ՆՎՇ-ի գյուղական բնակավայրերում: Ընդ որում, Լոռու մարզի քաղաքային և գյուղական բնակչության ՄՍ-ի բացասական գործակիցները շատ բարձր են բոլոր տարիներին: մեն տարի միգրացիայի միջոցով արագ տեմպերով նվազում է մարզի և՛ քաղաքային, և՛ գյուղական բնակչությունը:

5. Երկու առանձնացված գոտիների մարզերի քաղաքների և ՆՎՇ-ների գյուղական բնակչության միգրացիայի տարածաժամանակային վերլուծությունը ցույց է տալիս, որ գոտիների և մարզերի ներսում միջբնակավայրային միգրացիոն կապերը բացակայում են կամ շատ թույլ են արտահայտվում, հետևաբար ներքին միգրացիաները գլխավորապես ուղղված են դեպի մայրաքաղաք Երևան:

3.3 ՀՀ բնակչության միգրացիոն տրամադրվածությունները ձևավորող տեղական գործոններն ու հիմնախնդիրները

Բնակչության ներքին և արտաքին միգրացիաների պատճառահետևանքային կապերի խորը և բազմակողմանի ուսումնասիրությունների համար անհրաժեշտ փաստական-վիճակագրական նյութերը մարզերի և հատկապես բնակավայրերի կտրվածքով խիստ անբավարար են: Ուստի, նպատակ ունենալով բացահայտել բնակչության միգրացիոն հոսքերի ձևավորման վրա ազդող տեղական-բնակավայրային գործոններն ու հիմնախնդիրները՝ անհրաժեշտություն է առաջանում կատարել սոցիալ-աշխարհագրական դաշտային լայնածավալ հետազոտություն: Այդպիսի հետազոտություն կատարվել է մեր կողմից 18 քաղաքային և 42 գյուղական բնակավայրերում, որի մասին մանրամասն խոսել ենք սույն աշխատանքի 2.3 բաժնում: Ի տարբերություն համապետական բնույթի հիմնախնդիրների և գործոնների՝ տեղական-բնակավայրային բնույթի հիմնախնդիրներն ու գործոնները կարող են համայնքի բնակչության մոտ առաջացնել միգրացիոն տրամադրվածություններ ոչ միայն արտագաղթի, այլև ներքին կամ միջբնակավայրային միգրացիաների հանդեպ:

Բնակչության միգրացիոն տրամադրվածությունները և դրանց վրա ազդող գործոնները փոփոխվում են ինչպես ըստ առանձին մարզերի, այնպես էլ ըստ բնակավայրերի տիպերի: Կախված բնակավայրի մեծությունից, գործառույթներից և տեղադիրքից՝ փոխվում են ինչպես բնակչության միգրացիոն տրամադրվածությունները, այնպես էլ դրանց ձևավորման վրա առավել մեծ ազդեցություն ունեցող տեղական-բնակավայրային գործոններն ու հիմնախնդիրները [38]: Հարցաթերթիկում տեղ գտած տեղական-համայնքային հիմնախնդիրները կարող են դժգոհություն առաջացնել համայնքի բնակչության շրջանում և կարող են պատճառ հանդիսանալ փոխելու իրենց բնակավայրը ՀՀ սահմաններում ակնկալելով գտնել այնպիսի բնակավայրեր, որտեղ

առկա չեն լինի նշված հիմնախնդիրները և իրենց սուբյեկտիվ ընկալմամբ կլինեն կյանքի ավելի լավ պայմաններ:

Ինչպես ցույց են տալիս հարցման արդյունքները՝ տեղական-բնակավայրային բնույթի հիմնախնդիրները ԶԶ մարզերում և տարբեր տիպի բնակավայրերում տարբեր սրուօթյուն և բնակչության կողմից տարբեր ընկալում ունեն (քարտեզ 5):

Անհրաժեշտ է նշել, որ թե՛ Երևանում, և թե՛ գրեթե բոլոր մարզերում, հարցվողները ամենահաճախը նշել են տարածքի (փողոցների, բակերի, շենքերի) բարեկարգման հիմնախնդիրները: Բոլոր մարզերի բնակավայրերում հարցվողների կողմից հաճախակի նշված հիմնախնդիրներից է նաև ժամանցի վայրերի բացակայության հիմնախնդիրը: Առանձին մարզերի բնակավայրերում հարցվողները կարևորել են նաև ջրամատակարարման (Արմավիր, Տավուշ), գազամատակարարման (Վայոց Ձոր), աղբահանության (Գեղարքունիք, Շիրակ, Լոռի, Սյունիք), տրանսպորտի (Արագածոտն, Կոտայք), կանաչապատման (Շիրակ), աղտոտվածության (Սյունիք) հիմնախնդիրները: Նշված հիմնախնդիրների լուծումը պահանջում է տեղական-համայնքային, տարածաշրջանային-մարզային և հանրապետական-համապետական իշխանությունների ջանքերի համադրում և համագործակցություն:


Նկար 29-ում ներկայացնում ենք Երևանում, հարակից գոտու՝ Արարատի և ծայրամասային գոտու Տավուշի մարզերում անցկացված հարցումներին մասնակիցների կողմից նշված տեղային-բնակավայրային բնույթի հիմնախնդիրների տոկոսային հարաբերակցությունը: Ինչպես տեսնում ենք՝ միմյանց հետ համեմատած Ծայրամասային գոտու Տավուշի մարզում, հարցվողները ավելի շատ են կարևորել ջրամատակարարման, փողոցների, շենքերի և բակերի բարեկարգման և ժամանցի վայրերի բացակայության հիմնախնդիրները, Արարատի մարզում՝ գազամատակարարման և տրանսպորտի հիմնախնդիրները, իսկ մայրաքաղաք Երևանում՝ աղբահանության, աղտոտվածության և կանաչապատման հիմնախնդիրները:

Տեղական-բնակավայրային հիմնախնդիրների տոկոսային հարաբերակցությունն ըստ Երևանի և ՀՀ մարզերի




Քարտեզ 5. Տեղական-բնակավայրային հիմնախնդիրների տոկոսային հարաբերակցությունն ըստ Երևանի և ՀՀ մարզերի

Ընդհանուր առմամբ, տարբեր մեծության բնակավայրերի խմբերում միգրացիոն տրամադրվածություններ ձևավորող տեղական բնույթի հիմնախնդիրների կառուցվածքում հարցվողները առավել շատ նշել են փողոցների, բակերի և շենքերի բարեկարգման (20-31%) ու ժամանցի վայրերի բացակայության (14-15%) հիմնախնդիրները: Տեղական բնույթի մնացած հիմնախնդիրների ցուցանիշները հիմնականում չեն անցնում 10%-ից:



Նկար 29. Երևանի, Արարատի և Տավուշի մարզերում հարցվողների կողմից նշված տեղական–բնակավայրային հիմնախնդիրների տոկոսային հարաբերակցությունը

ՀՀ մարզերի և Երևանի ընդհանուր ցուցանիշներից բացի համեմատել ենք նաև քաղաքային և գյուղական բնակչության, ինրպես նաև տարբեր տիպի, մեծության և տեղադիրքի բնակավայրերի բնակչության ներքին միգրացիոն տրամադրվածությունների ձևավորման վրա ազդել գործոններն ու պայմանները: Տեղական-բնակավայրային հիմնախնդիրներին վերաբերող հարցերին տրված պատասխաններում նկատվում են տարբերություններ քաղաքային և գյուղական բնակավայրերի բնակչության կտրվածքով: Եթե գյուղական բնակավայրերի բնակչությանը համեմատաբար ավելի շատ է մտահոգում ջրամատակարարման, գազամատակարարման, ժամանցների բացակայության և այլ սպասարկման հիմնարկներին վերաբերող հիմնախնդիրները, ապա քաղաքների բնակչության համար առավել մտահոգիչ են փողոցների, շենքերի, բակերի բարեկարգման, կանաչապատման և աղտոտվածության հիմնախնդիրները (նկ. 30):



Նկար 30. Հետազոտվող քաղաքային և գյուղական բնակավայրերի բնակչության կողմից տեղական-բնակավայրային հիմնախնդիրների վերաբերյալ գնահատումները

Տարբեր մեծության քաղաքներում կատարված հարցումները ցույց են տալիս, որ քաղաքների խմբերում առկա են ներքին միգրացիոն տրամադրությունների ձևավորման գործոնների և պայմանների որոշակի տարբերություններ: Երևանում և քաղաքների մնացած խմբերում հարցվողները տեղական հիմնախնդիրների կառուցվածքում առավել հաճախակի նշում են բնակավայրի բարեկարգման և ժամանցի վայրերի բացակայության հիմնախնդիրները, Երևանում և Գյումրիում դրանց հաջորդում են կանաչապատման և աղտոտվածության, իսկ փոքր և կիսամիջին քաղաքներում՝ տրանսպորտի և աղբահանության հիմնախնդիրները:

Տարբեր մեծության քաղաքներում կատարված հարցումները ցույց են տալիս, որ քաղաքների խմբերում առկա են ներքին միգրացիոն տրամադրությունների ձևավորման գործոնների և պայմանների որոշակի տարբերություններ: Երևանում և քաղաքների մնացած խմբերում հարցվողները տեղական հիմնախնդիրների կառուցվածքում առավել հաճախակի նշում են բնակավայրի բարեկարգման և ժամանցի վայրերի բացակայության հիմնախնդիրները, Երևանում և Գյումրիում դրանց հաջորդում են կանաչապատման և

աղտոտվածության, իսկ փոքր և կիսամիջին քաղաքներում՝ տրանսպորտի և աղբահանության հիմնախնդիրները:

Տարբեր մեծության գյուղական բնակավայրերում կատարված հարցումները ցույց են տալիս, որ փոքր (մինչև 1000 բն.) գյուղական բնակավայրերում գազամատակարարման և սպասարկման հիմնարկների բացակայության հիմնախնդիրները հարցվողները ավելի հաճախակի են նշվում, քան ավելի մեծ գյուղական բնակավայրերում: Իսկ առավել խոշոր գյուղական բնակավայրերում (5000 և ավելի բն.) հարցվողները ավելի հաճախակի են նշում տարածքի բարեկարգման հիմնախնդիրը (31.5%):

Ինչպես հայտնի է, տնտեսական, սոցիալական և ժողովրդագրական տարբեր երևույթների և ցուցանիշների միջև եղած կապերը բացահայտելու համար ընդունված է օգտագործել մաթեմատիկական վերլուծության եղանակներից կոռելիացիոն կապերի վերլուծությունը, որը լայն կիրառություն է ստացել հասարակական աշխարհագրության մեջ [40]: Ունենալով 2015թ.-ի դրությամբ մեր կողմից հաշվարկված ՀՀ մարզերի և քաղաքների բնակչության ՄՍ և տարբեր տնտեսական, սոցիալական ու ժողովրդագրական ցուցանիշներ, կոռելիացիոն գործակցի հաշվարկման միջոցով փորձել ենք բացահայտել դրանց միջև եղած փոխկապվածությունը: Երևան քաղաքի և ՀՀ 10 մարզերի կտրվածքով հաշվարկման ենթարկված ցուցանիշներն ու արդյունքները ցույց են տալիս, որ կոռելիացիոն սերտ ուղիղ կապ գոյություն ունի (0,71-0,96) բնակչության ՄՍ-ի բացասական բացարձակ ցուցանիշի և նպաստ ստացող ընտանիքների թվաքանակի, ինչպես նաև՝ աղքատության ցուցանիշների և տնտեսապես ակտիվ բնակչության թվաքանակի միջև: Սա նշանակում է, որ մեխանիկական շարժերի միջոցով առավելապես նվազում է այն մարզերի բնակչությունը, որտեղ նշված ցուցանիշները ավելի մեծ թիվ են կազմում: Համեմատաբար թույլ են արտահայտված կոռելիացիոն ուղիղ կապերը (0,6-0,7) ՄՍ-ի բացասական բացարձակ ցուցանիշի և քաղաքային բնակչության, տղամարդկանց, աշխատունակ տարիքի բնակչության, կենսաթոշակառուների և գործազուրկների թվաքանակների և բնակարանային ֆոնդի ընդհանուր մակերեսի միջև, իսկ մնացած ցուցանիշների հետ կոռելիացիոն կապերը կամ շատ թույլ են արտահայտված կամ ընդհանրապես բացակայում են: Այսինքն՝ աղքատության մակարդակը, գործազուրկների, տնտեսապես ակտիվ բնակչության, քաղաքաբնակների թվաքանակները, բնակարանային ֆոնդի մակերեսը որոշակիորեն ազդում են մարզերի բնակչության միգրացիոն

տեղաշարժերի վրա: Կոռեյացիոն կապերի վերլուծությունը ցույց է տալիս, որ մարզերի տնտեսական զարգացման ուղղությունները՝ արդյունաբերություն, գյուղատնտեսություն, ծառայություններ, շինարարություն, բնակչության միգրացիոն տեղաշարժերի ինտենսիվության և մասշտաբների վրա նկատելի ազդեցություն չեն ունենում:

Կոռեյացիոն գործակիցներ ենք հաշվարկել նաև ՀՀ 49 քաղաքների կտրվածքով, Սակայն այս դեպքում օգտագործված ցուցանիշներն ավելի սակավաթիվ են՝ կապված վիճակագրական նյութի սահմանափակության հետ: Հաշվարկները ցույց են տալիս, որ թեև թույլ, բայց որոշակի կապ կա քաղաքների բնակչության ՄՄ-ի բացասական ցուցանիշի և քաղաքների բնակչության խտության (0,41) ու դրանցում բազմաբնակարանային շենքերի շուկայական գների (0,49) միջև:

Պետք է նշել, որ չնայած բնակչության մոտ միգրացիոն տրամադրվածության և դրա հետ կապված միգրացիոն հոսքերի առաջացման վրա որոշակի ազդեցություն ունեն նաև բնական գործոնները (ռելիեֆը, կլիմայական պայմանները և այլն), սակայն դրանք որոշիչ դեր չեն խաղում և այդ պատճառով էլ առանձին վերլուծության չեն ենթարկվել: Միգրացիայի ուսումնասիրության միջազգային փորձը նույնպես ապացուցում է, որ միգրանտները հակված են տեղափոխվելու ավելի վատ բնական պայմաններ ունեցող բնակավայրեր և տարածաշրջաններ, եթե այնտեղ առկա են ավելի լավ սոցիալ-տնտեսական պայմաններ և, ըստ երևույթին, բարեկեցիկ կյանք ունենալու ավելի մեծ հնարավորություններ: Այսինքն ստացվում է, որ մարդիկ միգրացիոն որոշումներ կայացնելիս առաջնահերթություն են տալիս սոցիալ-տնտեսական գործոններին, որը վերաբերում է նաև ՀՀ բնակչության միգրացիային: Դա է պատճառը, որ երկրում ստեղծված սոցիալ-տնտեսական ծանր պայմանները հանգեցրել են նրան, որ ՀՀ բնակչությունը արտագաղթում է և՛ բարձրադիր-լեռնային շրջաններից, և՛ ցածրադիր-հարթավայրային շրջաններից:

ԳԼՈՒԽ 4. ՀՀ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՄԻԳՐԱՑԻԱՅԻ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ- ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԸ, ԿԱՆԽԱՏԵՍՄԱՆ ԵՎ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՀԻՄՆԱՅԱՐՑԵՐԸ

4.1 ՀՀ բնակչության միգրացիայի և տարաբնակեցման փոխադարձ կապերի վերլուծությունը

Բնակչության բնական և մեխանիկական շարժերը, դրանց տարածաժամանակային դրսևորումները հանդիսանում են տարաբնակեցման կարևորագույն գործոններ, որոնք պայմանավորում են տարաբնակեցման փոփոխության միտումները: Ընդ որում, եթե բնական շարժն ավելի էականորեն ազդում է տարաբնակեցման քանակական տեղաշարժերի վրա, երբ փոխվում են բնակավայրերի մարդաշատության ցուցանիշներն ու դրանց հարաբերակցությունները, ապա միգրացիաները տարաբնակեցման մեջ ավելի շատ առաջացնում են որակական կառուցվածքային փոփոխություններ և զգալի տեղաշարժեր [42]:


Ներկայումս ՀՀ բոլոր բնակավայրերը մասնակցում են բնակչության միգրացիոն գործընթացներին, և ինչպես արդեն նշել ենք, ՄՍ-ն գրեթե բոլոր բնակավայրերում բացասական է: Դա նշանակում է, որ անկախության տարիներին բնակչության ներքին միգրացիայի ծավալները զգալիորեն նվազել են: Եվ եթե նախկինում գյուղական բնակավայրերից բնակչության միգրացիաները առավելապես ներհանրապետական բնույթ էին կրում և իրենց ծավալներով առանձանանում էին հատկապես գյուղից քաղաք և ապա քաղաքից քաղաք միգրացիոն ուղղությունները, ապա հիմա գրեթե բոլոր բնակավայրերը դարձել են արտաքին միգրացիայի ակտիվ մասնակիցներ [37]:

ՀՀ բնակչության միգրացիան զգալի ազդեցություն է թողնում ուրբանիզացման գործընթացների և տարաբնակեցման կառուցվածքի վրա [35]: Գիտենք, որ Երևանը միգրացիոն տեսանկյունից գրավիչ է ՀՀ այլ բնակավայրերի բնակչության համար, այդ պատճառով էլ գնալով ավելի է աճում Երևանի բնակչության մասնաբաժինը ՀՀ ընդհանուր և քաղաքային բնակչության մեջ, չնայած նրան որ անկախության տարիներին իջել է ուրբանիզացման մակարդակը: Ստացվում է, որ Երևանը, ինքը հանդիսանալով արտագաղթի խոշոր կենտրոն, շարունակում է գրավիչ մնալ ՀՀ այլ բնակավայրերի

բնակիչների համար և հանդիսանում է ներքին միգրացիաների հիմնական ուղղությունը: Բացի սրանից, որոշ աղբյուրների համաձայն՝ 2011-2012թթ.-ին ՀՀ ներգաղթած մոտ 15-20 հազ. սիրիահայերի 70-80%-ը բնակություն են հաստատել հենց մայրաքաղաքում: Երևանի դերի մեծացումը բնականաբար չի բխում ՀՀ տարաբնակեցման համակարգի շահերից, Էլ ավելի է խորացնում մայրաքաղաքի և մնացած բնակավայրերի միջև եղած տարբերությունները և սրում է Երևանի գերաճի հետ կապված հիմնախնդիրները:

Հետխորհրդային առաջին տարիներին արտագաղթում էին և՛ քաղաքային, և՛ գյուղական բնակչությունը: Մեր հաշվարկներով 1992-1994թթ.-ին բնակչության ՄՍ-ն քաղաքային բնակչության համար կազմել է միջինը -54.8%, իսկ գյուղական բնակչության համար՝ -24.5% (տես նկ. 16): Ինչպես տեսնում ենք, չնայած այդ ցուցանիշները գյուղերում բավականին բարձր էին, սակայն քաղաքներից բնակչության արտագաղթը ավելի մասշտաբային է եղել: Իսկ հաջորդող մի քանի տարիներին քաղաքային և գյուղական բնակավայրերի միջև եղած այդ տարբերությունն էլ ավելի խորացավ՝ կապված առաջին հերթին ՀՀ տնտեսության կառուցվածքային փոփոխությամբ, մասնավորապես՝ արդյունաբերության, շինարարության ծավալների կտրուկ նվազման հետ: Իսկ դա նշանակում է, որ առաջին հերթին արտագաղթողների մեջ մեծացավ քաղաքային բնակչության և փոքրացավ գյուղական բնակչության մասնաբաժինը, և երկրորդ հերթին՝ քաղաքից դեպի գյուղ ուղղությունը կարևոր նշանակություն ստացավ ներքին միգրացիոն տեղաշարժերում: Դրա մասին են վկայում մեր կողմից ստացված այն տվյալները, որ քաղաքային բնակչության ՄՍ-ի գործակիցները 1995-2002թթ.-ին մի քանի անգամ գերազանցում էին գյուղական բնակչության ՄՍ-ի գործակիցներին, ավելին՝ 1998-2000թթ.-ին գուղական բնակչության ՄՍ-ն եղավ դրական: Դրանով է պայմանավորված նաև, որ ՀՀ ուրբանիզացման մակարդակը 1990-ական թթ.-ին 69.2%-ից իջավ մինչև 64.9% (նկ.31):

Սակայն կապված գյուղատնտեսական արտադրության զարգացման որոշ դժվարությունների և հիմնախնդիրների, գյուղացիական տնտեսությունների խոշորացման առկա միտումների հետ՝ վերջին տարիներին ավելի ինտենսիվ և մասշտաբային է դարձել նաև գյուղական բնակչության արտագաղթը: Այդ է պատճառը, որ վերջին տասնամյակում ուրբանիզացման մակարդակը նվազել է աննշան չափով, իսկ վերջին մի քանի տարիներին նույնիսկ մի փոքր աճ է նկատվել:



Նկար 31. ՀՀ ուրբանիզացման մակարդակն ըստ տարիների

Եթե նախկինում բնակչության արտահոսք էր նկատվում հիմնականում լեռնային փոքր և սահմանամերձ գյուղական բնակավայրերից, ապա վերջին մեկ-երկու տասնամյակներին՝ նաև մեծ և խոշոր գյուղական բնակավայրերից, որտեղ զգալի թիվ են կազմում գործազուրկները, քանի որ գուղատնտեսությունը ի վիճակի չէ ապահովելու նրանց լրիվ զբաղվածությունը:

ՀՀ կառավարությունը 2011թ.-ին հաստատեց համայնքների խոշորացման և միջհամայնքային միավորումների ձևավորման հայեցակարգը: Ինչ խոսք, համայնքների խոշորացման և միջհամայնքային միավորումների ստեղծման գաղափարը ընդունելի է, եթե այն իրականացվում է այն տարածաշրջաններում, որտեղ առկա են որոշակի պայմաններ և նախադրյալներ (մանր գյուղեր, գյուղերի մոտիկություն, միջգյուղական ճանապարհների առկայություն և այլն): Համայնքների խոշորացումը հատկապես հրատապ է Սյունիքի և Վայոց ձորի մարզերում, որտեղ գյուղական համայնքները դեռևս փոքր են՝ համապատասխանաբար միջինը 478 և 929 մարդ: Սակայն, կառավարության կողմից հաստատված համայնքների խոշորացման՝ ավելի շուտ «գերխոշորացման» տարբերակը մեր կարծիքով հիմնավորված և արդարացված չէ, քանի որ գյուղական համայնքների գերխոշորացման դեպքում գյուղացիները զրկվում և օտարվում են համայնքների սոցիալ-տնտեսական հիմնախնդիրների լուծման հարցերում անմիջական մասնակցությունից, որի արդյունքում մեծանում են նաև միգրացիոն տրամադրվածությունները: Բացի այդ, մոտակա տասնամյակում գյուղացիական տնտեսությունների խոշորացման հետ կապված գյուղատնտեսության ոլորտում


տասնյակ հազարներով զբաղվածների թիվը նվազելու է: Դրա մասին են խոսում նաև փաստական տվյալները: Եթե 2011թ.-ին գյուղացիական տնտեսություններում զբաղվածների թիվը կազմել է 441.4 հազար մարդ, ապա այդ ցուցանիշը տարեց տարի նվազում է և 2015թ.-ին կազմել է 367.4 հազար մարդ, այսինքն՝ 74 հազար մարդով ավելի քիչ [31]: Այս միտումները շարունակական բնույթ են կրում: Գյուղական համայնքներում առաջացած աշխատուժի ավելցուկի մեծ մասը, իր զբաղվածության հարցը լուծելու համար, պետք է ներգրավվի կա՛մ ներքին միգրացիոն տեղաշարժերում, հիմնականում տեղափոխվելով դեպի Երևան, քանի որ ներկայիս պայմաններում ՀՀ տարաբնակեցման համակարգում իր սոցիալ-տնտեսական ներուժով միայն մայրաքաղաքն է ունակ ինչ-որ չափով լուծելու գործազուրկների զբաղվածության հարցը, կա՛մ ներգրավվի արտաքին միգրացիոն տեղաշարժերում՝ լրացնելով արտագաղթողների շարքերը: Ինչպես տեսնում ենք, երկու դեպքում էլ հետևանքները լինելու են բացասական, քանի որ առաջին դեպքում՝ էլ ավելի է խորանալու տարաբնակեցման համակարգի անհամաչափությունը, իսկ երկրորդ դեպքում՝ մեծանալու են բնակչության արտագաղթի ծավալները: Այս բացասական միտումները կանխելու նպատակով առաջնահերթ հրատապությամբ պետք է ձեռնարկվեն համապատասխան միջոցառումներ՝ գյուղական համայնքներում և փոքր քաղաքներում տնտեսության հիմնականում աշխատատար ճյուղերի զարգացման, այդ ոլորտներում նոր աշխատատեղերի ստեղծման, հատկապես՝ փոքր քաղաքների և տարաբնակեցման տեղական կենտրոնների սոցիալ-տնտեսական ներուժի հզորացման ուղղությամբ:

Արտաքին և ներքին միգրացիաների համատեղ ազդեցության հետևանքով դատարկվում են սահմանամերձ և բարձր լեռնային բնակավայրերը: Վտանգի տակ են հայտնվել հիմնականում ծեր բնակչութամբ բնակեցված փոքր գյուղերը: Հասկանալի է, որ այս տիպի բնակավայրերի պահպանումը Հայաստանի համար ունի ոչ միայն սոցիալ-տնտեսական և ժողովրդագրական, այլ նաև ռամավարական նշանակություն: Պետությունը պետք է միջոցներ ձեռնարկի պահպանելու այս բնակավայրերը, այդ թվում՝ օգտագործի տնտեսական մեխանիզմներն ու ռեսուրսները (վարկային, հարկային և այլն) շահագրգռելու մարդկանց բնակվելու այնտեղ, անվճար տրամադրի բնակարան, հողատարածք, ստեղծի արտոնյալ պայմաններ ներդրումներ կատարելու համար, ստեղծի աշխատատեղեր, անհրաժեշտ ենթակառուցվածքներ և այլն:


Աշխարհագրական առումով հետաքրքրությունն է ներկայացնում նաև բնակչության միգրացիայի և տարաբնակեցման փոխադարձ կապերի վերլուծությունն ըստ տարաբնակեցման կենտրոնների և բնակավայրերի տիպերի: Այդ պատճառով հարկ ենք համարում նաև առանձին ներկայացնել և վերլուծել մեր կողմից հաշվարկված բնակչության ՄՍ-ի գործակիցների տարածաժամանակային վերլուծությունն ըստ ՀՀ մարզերի, Երևան քաղաքի և մարզկենտրոնների, լեռնահանքային, արդյունաբերական և կուրորտային կենտրոնների:

ՀՀ մարզերի բնակչության միգրացիայի վերլուծությունը ցույց է տալիս, որ բոլոր մարզերում բնակչության ՄՍ-ն բացասական է, այսինքն՝ մարզերից մեկնաձևերի թիվը գերազանցում է եկածների թվին: Բացարձակ թվով ՄՍ-ի բացասական ցուցանիշները այնքան մեծ են, որ գերազանցում են բնական հավելածի բացարձակ ցուցանիշներին: Դրա արդյունքում վերջին երկու տասնամյակում բոլոր մարզերի բնակչության թվաքանակը նվազել է: Մարզերի միգրացիոն տեղաշարժերի համեմատական վերլուծության համար նպատակահարմար է օգտագործել միգրացիայի հարաբերական քանակական ցուցանիշները: Այսպես, ՄՍ-ի գործակիցների վերլուծությունը 2002-2015թթ.-ի համար ցույց է տալիս, որ թեև միգրացիայի միջոցով կրճատվում են բոլոր մարզերի բնակչության թվաքանակները, սակայն իրավիճակը առավել մտահոգիչ է Լոռու և Շիրակի մարզերում: Լոռու մարզը թե՛ ընդհանուր վերցրած, թե՛ ըստ ժամանակահատվածների ՄՍ-ի բացասական ամենաբարձր գործակիցներն ունի, որին հաջորդում է Շիրակի մարզը: Հաշվի առնելով նաև այն, որ այս երկու մարզերը նաև ՀՀ ամենաշատ բնակչություն ունեցող մարզերից են, կարելի է արձանագրել, որ Շիրակի և Լոռու մարզերը հանդիսանում են ՀՀ տարածքում բնակչության արտահոսքի հիմնական օջախները: Մտահոգիչ է նաև այն, որ քննարկվող ժամանակահատվածում Գեղարքունիքի և Արագածոտնի մարզերում նկատվում է բնակչության ՄՍ-ի բացասական գործակցի աճ (նկ. 32):

Երևան քաղաքի և մարզկենտրոնների բնակչության միգրացիայի համեմատական վերլուծությունը ցույց է տալիս, որ 2002-2015թթ.-ին ՄՍ-ի բացասական գործակիցները ամենաբարձրն են եղել Վանաձոր քաղաքում: Քննարկվող ժամանակահատվածում բնակչության ՄՍ-ի բացասական համեմատաբար ցածր գործակիցներ են ունեցել մայրաքաղաք Երևանը և Իջևանը (նկ. 33):




Նկար 32. ՀՀ մարզերի բնակչության միգրացիայի սալդոյի գործակիցները 2002-2015թթ.-ին (%)



Նկար 33. Երևան քաղաքի և մարզկենտրոնների բնակչության միգրացիայի սալդոյի գործակիցները 2002-2015թթ.-ին (%)


Ինչպես ցույց են տալիս ստացված տվյալները՝ քննարվող ամբողջ ժամանակահատվածում Երևանի և բոլոր մարզկենտրոնների ՄՍ-ի գործակիցները բացասական արժեքներ ունեն: Ընդ որում, եթե Երևանի, Արմավիրի, Վանաձորի, Գյումրիի, Հրազդանի և Կապանի բնակչության ՄՍ-ի բացասական գործակիցները նվազել են, ապա նույն ժամանակահատվածում աճել են Աշտարակի, Արտաշատի, Գավառի, Իջևանի և Եղեգնաձորի բնակչության ՄՍ-ի գործակիցները: Դա իհարկե դրական համարել չի կարելի, սկստի ունենալով այն հանգամանքը, որ վերը նշված քաղաքներից Գավառի, Իջևանի և Եղեգնաձորի սոցիալ-տնտեսական ներուժը դեռևս բավարար չէ մարզկենտրոնների գործառնությունները լիարժեք կերպով իրականացնելու համար:

ՀՀ լեռնահանքային կենտրոնների բնակչության ՄՍ-ի գործակիցների փոփոխությունները վկայում են ընդհանուր միտումների մասին: Քննակվող ժամանակահատվածում գրեթե բոլոր քաղաքների բնակչության ՄՍ-ի բացասական գործակիցները նվազել են: Դրանք համեմատաբար ցածր են Քաջարան և Ախթալա քաղաքներում և բարձր՝ Թումանյան և Շամլուղ քաղաքներում (նկ. 34): Նշված միագործառույթային քաղաքների բնակչության միգրացիոն տեղաշարժերը զգալիորեն կախված են դրանց տնտեսական հիմքը կազմող հանքագործական ձեռնարկությունների գործունեությունից: Դրանց նույնիսկ ժամանակավոր ընդհատումը միգրացիայի նոր ալիքներ է առաջացնում:




Նկար 34. ՀՀ հանքարդյունաբերության կենտրոնների բնակչության միգրացիայի սալդոյի գործակիցները 2002-2015թթ.-ին (%)

2002-2015թթ.-ին ՀՀ վերամշակող արդյունաբերության կենտրոններում, ի տարբերություն հանքարդյունաբերության կենտրոնների, զգացվում են բնակչության ՄՍ-ի գործակիցների զգալի տարբերություններ: ՄՍ-ի ամենաբարձր բացասական գործակիցը քննարկվող ժամանակահատվածում ունեցել է Մեծամորը, իսկ ամենացածրը՝ Արարատը, որը վերջին տարիների համար կազմում է ընդամենը -2,8%: Բոլոր քաղաքների համար ընդհանուր օրինաչափությունն այն է, որ քննարկվող ժամանակահատվածում նկատվել է ՄՍ-ի բացասական նվազման միտումներ (նկ. 35):



Նկար 35. *ՀՀ արդյունաբերական կենտրոնների բնակչության իզրացիայի սալդոյի գործակիցները 2002-2015թթ.-ին (%)*

Հետազոտվող ժամանակահատվածում կուրորտային երեք քաղաքներն էլ թեև ընդհանուր գծերով բնութագրվում են միգրացիոն շարժերի կայունությամբ, սակայն միմյանցից տարբերվում են միգրացիայի ինտենսիվությամբ և ուղղություններով: Այսպես, միգրացիոն տեսանկյունից համեմատաբար ավելի լավ վիճակում է գտնվում Դիլիջանը, որի բնակչության ՄՍ-ի գործակիցները ցածր են, և նույնիսկ առանձին տարիներին ունեցել է ՄՍ-ի դրական գործակից: Ինչպես արդեն նշել ենք դա պայմանավորված է նրանով, որ Դիլիջանում կուրորտային գործառույթներին զուգահեռ վերջին տարիներին զարգացել է նաև բանկային և կրթական գործառույթները (նկ. 36):



Նկար 36. *ՀՀ կուրորտային քաղաքների բնակչության միգրացիայի սալդոյի գործակիցները 2002-2015թթ.-ին (%)*

Այսպիսով, ՀՀ ՏՀ-ի բոլոր կառուցվածքային բաղադրիչները՝ տարբեր տիպի և մեծության բնակավայրերը, տարաբնակեցման կենտրոնները, այս կամ այն ձևով մասնակցում են միգրացիոն գործընթացներին: Ընդ որում, միգրացիայի ուղղությունները, ինտենսիվությունը և մասշտաբները փոփոխվում են՝ կախված բնակավայրերի

մեծությունից, գործառույթներից, աշխարհագրական դիրքից և տարաբնակեցման համակարգում բնակավայրի ունեցած տեղից: Սակայն ընդհանուր օրինաչափությունն այն է, որ գրեթե բոլոր բնակավայրերում բնակչության ՄՍ-ն բացասական է: Հատկապես մտահոգիչ է փոքր, միագործառույթային քաղաքներից բնակչության արտահոսքի անընդհատ աճող ծավալները: Առաջին հերթին դա վերաբերում է Լոռու և Շիրակի մարզերի բնակավայրերին: Թեև ծայրամասային գոտու մյուս մարզերի քաղաքների և գյուղական բնակչության ՄՍ-ի բացասական գործակիցները համեմատաբար ավելի ցածր են, սակայն հաշվի առնելով նշված մարզերի բնակչության և բնակավայրերի խտության ցածր ցուցանիշները, նույնպես խիստ հրատապ է դառնում կարգավորել բնակչության միգրացիաները, հնարավորինս նվազեցնել արտահոսքի ծավալները: Ծայրամասային գոտում լեռնային ռելիեֆի, բնակավայրերի ցանցի նոսրության, տրանսպորտային վատ ապահովվածության, տարաբնակեցման համակարգաստեղծ գործընթացների բացակայության պայմաններում բնակչության արտահոսքն ավելի ռիսկային և խոցելի են դարձնում ավելի փոքր և մեկուսացած բնակավայրերին, որոնց տնտեսական հիմքի հզորացումը և բնակչության ամրապնդումը պետք է դառնա պետության Էկոստիկական քաղաքականության առաջնահերթություններից մեկը:

4.2 ՀՀ բնակչության միգրացիայի սոցիալ-տնտեսաաշխարհագրական հետևանքները

Բնակչության միգրացիան, տնտեսության զարգացումն ու տարածքային կազմակերպումը գտնվում են սերտ փոխկապվածության մեջ: Ինչպես արդեն աշխատանքի նախորդ բաժիններում նշել ենք՝ տնտեսության զարգացման մակարդակն ու տարածքային և ճյուղային կառուցվածքային տեղաշարժերը պատճառահետևանքային կապերի մեջ են գտնվում բնակչության միգրացիոն տեղաշարժերի հետ: Տեսական և ռեզիոնալ առումներով սոցիալ-տնտեսական զարգացման և բնակչության միգրացիոն տեղաշարժերի փոխադարձ կապերի ուսումնասիրությամբ զբաղվել են մեծ թվով գիտնականներ: ՀՀ-ում նշված հիմնահարցերին հիմնականում անդրադարձել են տնտեսագետները և սոցիոլոգները, որոնք իրենց աշխատանքներում ցույց են տվել տնտեսության զարգացման և բնակչության արտագաղթի պատճառահետևանքային կապերը [9, 10]: Սակայն նրանց աշխատանքներում տեղ չեն գտել բնակչության

միգրացիայի և տնտեսության տարածքային կազմակերպման փոխադարձ կապերի վերլուծությունը: Մինչդեռ, եթե տվյալ երկրի (այդ թվում՝ ՀՀ-ի) արտաքին միգրացիայի պատճառները, մասշտաբներն ու ուղղությունները ավելի շատ պայմանավորված են երկրի սոցիալ-տնտեսական զարգացման մակարդակներով և արդի վիճակներով, ապա ներքին միգրացիայինը՝ տվյալ երկրի ներսում տնտեսության տարածքային կազմակերպման բնույթով, սոցիալ-տնտեսական զարգացման տարածքային տարբերություններով:

ՀՀ-ում մեծ չափերի են հասնում սոցիալ-տնտեսական զարգացման տարածքային անհամաչափությունները: Առանձնապես մեծ է Երևանի և մնացած մարզերի տնտեսական զարգացման տարբերությունները: Բավական է նշել, որ 2015թ.-ի տվյալներով Երևանին բաժին է ընկել ՀՀ արդյունաբերական արտադրանքի ընդհանուր ծավալի 41,2%-ը, շինարարության ծավալի 63,7%-ը. մանրածախ առևտրի շրջանառության 76,4%-ը և ծառայությունների ծավալի 81,4%-ը [97]: Դրա արդյունքում ՀՀ-ում բնակչության ներքին միգրացիոն տեղաշարժերը կրում են միակենտրոն բնույթ, որն ավելի է մեծացնում ՀՀ-ում նկատվող տնտեսության տարածքային կազմակերպման հսկայական անհամաչափությունները:

Միևնույն ժամանակ մարզերը միմյանցից տարբերվում ոչ այնքան սոցիալ-տնտեսական զարգացման մակարդակներով, որն ամենուրեք ցածր է, որքան տնտեսության ճյուղային կառուցվածքով: Այսպես, Գեղարքունիքի, Արագածոտնի, Տավուշի և Վայոց ձորի մարզերը ընդգծված գյուղատնտեսական, իսկ Սյունիքի, Կոտայքի և Լոռու մարզերը արդյունաբերական մասնագիտացում ունեցող մարզեր են: Մնացած մարզերում տնտեսության նշված ճյուղերը ավելի հավասարակշռված են ներկայացված: Այս պայմաններում ՀՀ-ում միջմարզային ներքին միգրացիաները չափազանց թույլ են արտահայտված, քանի որ բնակչության միգրացիոն տեղաշարժեր առաջացնում են մարզերի սոցիալ-տնտեսական զարգացման, այլ ոչ թե տնտեսական մասնագիտացման տարբերությունները:

ՀՀ բնակչության միգրացիայի ազդեցությունը տնտեսական ոլորտի վրա երկակի է, այնուամենայնիվ երկարաժամկետ կտրվածքով գերակշռում են բացասական հետևանքները: Սկսենք դրանց դրական նշանակությունից.

1) ՀՀ-ից արտագաղթած բնակչության մի մասը դրամական օգնություն է ցույց տալիս ՀՀ-ում մնացած իրենց ընտանիքի անդամներին և հարազատներին: Դրանց կշիռն ու

կարևորությունը ՀՀ տնտեսության մեջ բավականին մեծ է: Մասնավորապես, ՀՀ կենտրոնական բանկի տվյալներով ՀՀ բանկային համակարգի միջոցով ֆիզիկական անձանց անուսով ոչ առևտրային նպատակներով կատարված դրամական փոխանցումների ներհոսքը դեպի ՀՀ 2013թ.-ին կազմել է 1.867 մլն ԱՄՆ դոլար, որը կազմում է նույն տարվա ՀՆԱ-ի 16.8%-ը, 2014թ.-ին՝ 1.729 մլն ԱՄՆ դոլար՝ ՀՆԱ-ի 14.9%-ը, իսկ 2015թ.-ին՝ 1.028 մլն ԱՄՆ դոլար՝ ՀՆԱ-ի 11.5 %-ը [100]: Ինչպես ցույց են տալիս տվյալները՝ վերջին տարիներին դրամական փոխանցումների ծավալները զգալիորեն նվազել են, որը առաջին հերթին պայմանավարված է ՌԴ-ում (որտեղ մեկնում են աշխատանքային միգրանտների 4/5-ից ավելին) առկա տնտեսական դժվարությունների և ռուսական ռուբլու արժեզրկման հետ:

2) ՀՀ-ից բնակչության արտագաղթը մեղմացնում է գործազրկության մասշտաբները և դրա հետ կապված սոցիալական լարվածության ավելի սուր արտահայտվածության ընթացքը:

3) Արտագաղթը ինչ-որ չափով մեղմում է նաև հասարակության մեջ խիստ բևեռացման մասշտաբները, քանի որ հիմնականում աղքատ բնակչության զգալի հատված, ստանալով դրամական օգնություններ արտասահմանում գտնվող իրենց բարեկամներից, կարողանում են պահպանել իրենց գոյությունը:

4) ՀՀ բնակչության աշխատանքային միգրացիան նույնպես դրական ազդեցություն ունի ՀՀ տնտեսության վրա, քանի որ տեղի է ունենում կյուլթական ռեսուրսների ներհոսք դեպի ՀՀ, որն էլ օգտագործվում է տնտեսության մեջ:

5) ՀՀ-ից արտագաղթած և արտերկրում գործարարությամբ զբաղվող առանձին անհատներ իրենց սեփական միջոցներով հայրենիքում կառուցում են նոր ձեռնարկություններ, ստեղծում են նոր աշխատատեղեր և դրանցով իսկ նպաստում բնակավայրերի զարգացմանը:

Թեև ՀՀ բնակչության արտաքին միգրացիան որոշ դրական ազդեցության է ունենում տնտեսական ոլորտի զարգացման վրա, սակայն շատ ավելի ծանրակշիռ և մտահոգիչ են դրա բացասական հետևանքները տնտեսության զարգացման և տարածքային կազմակերպման վրա: Մեր կարծիքով դրանք հետևյալներն են.

1) ՀՀ բնակչության արտագաղթը իրենից ներկայացնում է մարդկային և կյուլթական կապիտալի արտահանում [12]: ՀՀ-ը և առանձին բնակավայրեր զրկվում են

տնտեսությունը զարգացնելու իրական ռեսուրսներից և հնարավորություններից: Արտագաղթողների մեջ հիմնականում աշխատունակ տարիքի երիտասարդներ են, որոնք հեռանալով չեն մասնակցում երկրում ՀՆԱ-ի ստեղծմանը:

2) Բնակչության արտագաղթին ակտիվորեն մասնակցում է բարձրագույն կրթություն և բարձր որակավորում ունեցող աշխատուժը: Բնական է, որ սա թողնում է իր տնտեսական բացասական հետևանքները: Այսօր տնտեսության մի շարք ճյուղերում զգացվում է որակյալ մասնագետների (ինժեներներ, մենեջերներ, ծրագրավորողներ, արհեստավորներ) կարիք: Փաստորեն ստացվում է, որ պետությունը ծախսեր է անում սեփական կադրեր նախապատրաստելու համար, սակայն նրանք իրենց ստացած գիտելիքներն օգտագործում են այլ պետությունների տնտեսությունների զարգացման գործում: Ըստ կատարվող հետազոտությունների՝ արտագաղթողների բաժնում անընդհատ ավելանում է կրթված միգրանտների մասնաբաժինը [44]: Մարդկային կապիտալի կորուստը հատկապես ծայրամասային գոտու մարզերում զգալի դժվարություններ է ստեղծում և հեռանկարում շարունակելու է ստեղծել ՀՀ համար առաջնահերթ նշանակություն ունեցող նորագույն ճյուղերի և արտադրությունների յուրացման, գիտահենք տնտեսության ստեղծման և զարգացման, դրանց համաչափ տեղաբաշխման հետ կապված:

3) Բնակչության արտագաղթի հետևանքով մեծանում են տնտեսության զարգացման տարածքային անհամաչափությունները: Վերջին տարիներին հատկապես ծայրամասային գոտու գյուղական բնակչության արտագաղթը զգալի չափերի է հասել: Դա լրացուցիչ դժվարություններ է ստեղծում բարձրլեռնային և սահմանամերձ տարածքների կայուն զարգացման համար:

4) Բնակչության անկանոն արտագաղթի արդյունքում ոչ միայն տեղի է ունենում երկրի տնտեսական ներուժի թուլացում ու սպառման շուկայի նեղացում, այլև տնտեսական զարգացման հեռանկարների վատացում:

5) Մշտական և ժամանակավոր միգրանտների մի մասը, հայտնվելով ավելի բարեկեցիկ սոցիալ-տնտեսական պայմաններում, ոչ միայն այլևս չի մտածում ետ վերադառնալու մասին, այլև նախաձեռնում է իրենց ընտանիքների արտագաղթը: Սրա հետևանքով ոչ միայն ավելի է նվազում ՀՀ բնակչության թվաքանակը, այլև՝ մեր երկիր մուտք գործող դրամական փոխանցումների ծավալները, որոնք պետք է մտնեին

շրջանառության մեջ և օգտագործվելիս մեր տնտեսությունում: Վերջին տարիներին դրամական փոխանցումների հոսքի ծավալները դեպի ՀՀ նվազում են անգամ այն դեպքում, երբ շարունակվում է մեծ քանակությամբ մարդկանց արտագաղթը ՀՀ-ից: Դեպի ՀՀ դրամական փոխանցումների հիմնական մասը բաժին է ընկնում ՌԴ-ին, իսկ երկրորդ տեղում ԱՄՆ է, որոնց 2015թ.-ին բաժին է ընկնել դեպի ՀՀ դրամական փոխանցումների համահամապատասխանաբար 76% և 10%, իսկ այլ երկրների բաժինը առանձին վերցրած բավականին աննշան է:

6) ՀՀ բնակչության ներքին միգրացիաները հիմնականում ուղղված են դեպի մայրաքաղաք Երևան, իսկ դա նշանակում է, որ տեղի է ունենում մարդկային և նյութական կապիտալի արտահոսք առանց այդ էլ տնտեսապես թույլ հզորություն ունեցող բնակավայրերից և դրանց կուտակում տնտեսապես ավելի հզոր մայրաքաղաքում: Սրանով էլ ավելի է խորանում տնտեսական բևեռացումը Երևանի և այլ բնակավայրերի միջև: ՀՀ տնտեսական հզորության հիմնական մասը կենտրոնանում է մայրաքաղաքում, որն իր հերթին նպաստում է, որ այն շարունակի մնալ բնակչության ներքին միգրացիաների միակ գրավիչ ուղղությունը: Մինչդեռ, ՀՀ տնտեսության զարգացման և տարածքային արդյունավետ կազմակերպման շահերը պահանջում են ՀՀ բարձրլեռնային և սահմանամերձ գոտիների սոցիալ-տնտեսական կայուն զարգացում: Դա նշանակում է նշված տարածաշրջաններում պետք է իրականացնել հարկային և վարկային արտոնություններ, ֆինանսական և նյութական մեծ ներդրումներ և նոր աշխատատեղեր, որոնք ոչ միայն կնվազեցնեն բնակչության արտահոսքը, այլև բարենպաստ նախադրայալներ կստեղծեն դեպի երկրի համար ռազմավարական նշանակություն ունեցող շրջաններ միգրացիայի նոր հոսքերի ձևավորման համար:

4.3 ՀՀ բնակչության միգրացիայի ժողովրդագրաաշխարհագրական հետևանքները

Բնակչության միգրացիայի ազդեցությունը մեծ է ՀՀ բնակչության ժողովրդագրական իրավիճակի և նրա տարածքային տարբերությունների ձևավորման վրա: ՀՀ բնակչության միգրացիայի և ժողովրդագրական գործընթացների փոխադարձ կապերի վերլուծությանն անդրադարձել են մի շարք ժողովրդագիրներ՝ Վ.Խոջաբեկյանը, Մ.Ֆահրադյանը, Վ. Թովմասյանը, Ռ. Եգանյանը և այլ հեղինակներ: Սակայն նրանց ուշադրության

կենտրոնում հիմնականում եղել են ՀՀ ժողովրդագրական իրավիճակի վրա բնակչության արտագաղթի թողած հետևանքների ուսումնասիրումը: Նրանք իրենց աշխատանքներում գրեթե չեն լուսաբանել բնակչության միգրացիայի (արտաքին և ներքին) և ժողովրդագրական գործընթացների տարածքային տարբերությունների (ըստ մարզերի և բնակավայրերի) փոխադարձ կապերը: Մինչդեռ ՀՀ մարզերը, դրանց մեջ մտնող քաղաքներն ու տարածաշրջանների գյուղական բնակչությունը, միմյանցից զգալիորեն տարբերվում են բնակչության վերարտադրության ցուցանիշներով, սեռային կազմով, տարիքային կառուցվածքով: Այդ տարբերությունների առաջացումը, ի թիվս այլ գործոնների, պայմանավորված է նաև բնակչության միգրացիոն տեղաշարժերով:

Բնակչության արտաքին միգրացիայի միջոցով փոփոխվում են երկրի բնակչության թվաքանակը, սեռատարիքային կառուցվածքը, բնական վերարտադրության ցուցանիշները, բնակչության սոցիալական և ազգային կազմերը և այլն: Թեև արտաքին միգրացիան նպաստում է ժողովրդագրական կառուցվածքների և գործընթացների տարածքային տարբերությունների առաջացմանը, սակայն դրանցում նշանակալից դեր խաղում են նաև բնակչության ներհանրապետական միգրացիոն տեղաշարժերը:

Միգրացիայի ազդեցությունը մեծ է ՀՀ, նրա մարզերի, քաղաքային և գյուղական բնակավայրերի բնակչության սեռային կազմի և տարիքային կառուցվածքի փոփոխությունների վրա: Չնայած ՀՀ միգրանտների կազմի վերաբերյալ չկան հավաստի տվյալներ, սակայն հայտնի փաստ է, որը ապացուցվում է նաև կատարված բոլոր հետազոտություններով, որ միգրացիոն առավել մեծ ակտիվությամբ աչքի են ընկնում աշխատունակ տարիքի տղամարդիկ [16, 98, 99]: Դրանով է պայմանավորված նաև, որ տարեցտարի ՀՀ ընդհանուր բնակչության թվում մեծանում է կանանց և փոքրանում տղամարդկանց մասնաբաժինը, իսկ տարիքային կառուցվածքում մեծանում է հետաշխատունակ բնակչության մասնաբաժինը:

Մեծ մասշտաբներով տեղի ունեցած արտագաղթի հետևանքով, որի մասնակիցների մեջ զգալիորեն գերակշռել են տղամարդիկ, միայն 1991-1994թթ.-ի չորս տարիների ընթացքում կանանց թվի գերազանցությունը տղամարդկանց թվի համեմատ ավելացավ մոտ 82.2 հազարով, իսկ տոկոսային հարաբերակցությամբ՝ կանանց բաժինը ընդհանուր բնակչության մեջ 51.5%-ից դարձավ 52.9% [96]:

Հետագա տարիներին ՀՀ բնակչության սեռային համամասնությունները առանձնապես մեծ տատանումների չեն ենթարկվել: Ղա էլ որոշ չափով պայմանավորված է այն հանգամանքով, որ չնայած բնակչության արտագաղթը շարունակեց գերազանցել ներգաղթին նաև հետագա տարիներին, սակայն այլևս չնկատվեցին 1992-1994թթ.-ին տեղի ունեցած արտագաղթի նմանատիպ ալիքներ: 2016թ. Հունվարի 1-ի դրությամբ, ՀՀ մշտական բնակչության մեջ կանանց թիվը գերազանցում է տղամարդկանց թվին մոտ 140.4 հազար մարդով, իսկ ընդհանուր բնակչության բաժնի մեջ կազմում է մոտ 52.3% [21]:

ՀՀ մարզերի բնակչության ընդհանուր թվում 2016թ.-ի հունվարի 1-ի տվյալներով կանանց ամենամեծ մասնաբաժիններն ունեն Լոռին (53,5%) և Շիրակը (52,5%) [28]: Սա ևս մեկ անգամ հաստատում է բնակչության միգրացիայի և սեռային կազմի միջև եղած կապի մասին, քանի որ, ինչպես արդեն նշել ենք աշխատանքի այլ բաժիններում, ակախության տարիներին հենց նշված մարզերում են դիտվել արտագաղթի հարաբերականորեն ամենամեծ ալիքները:


Տղամարդկանց թվաքանակի նվազումն ազդում է ամուսնությունների թվի վրա, որն էլ իր հերթին՝ ծնելիության ցուցանիշների: Բացի այդ, արտագնա աշխատանքի մեկնած երիտասարդ ամուսնացած տղամարդկանց երկարաժամկետ բացակայությունը նպաստում է ամուսնալուծությունների թվի աճին, որն իր հերթին նույնպես ազդում է ծնելիության ցուցանիշների նվազման գործընթացի վրա: Միայն 1999-2015թթ.-ի ընթացքում ամուսնալուծությունների թիվը ՀՀ-ում ավելացել է շուրջ երեք անգամ: Ամուսնալուծությունների թվի բացարձակ և հարաբերական աճ գրանցվել է Լոռու մարզում:

Միգրացիայի ազդեցությունը մեծ է նաև բնակչության տարիքային կառուցվածքի վրա: Զանի որ միգրանտների, մասնավորապես՝ արտագաղթողների մեծ մասը երիտասարդներ են, նվազում են ծնելիության ցուցանիշները և որպես դրա հետևանք տեղի է ունենում բնակչության ծերացման գործընթաց [99]: ՀՀ բնակչության ծերացման գործընթացը 1990-ական թթ.-ից սկսած, ի թիվս այլ գործոնների, պայմանավորված է նաև բնակչության արտագաղթով: Այսպես, 60 տ. և ավելի տարիք ունեցողների բաժինը բնակչության ընդհանուր թվում 1991թ.-ին կազմել է 10.3%, 1995թ.-ին՝ 11.3%, 2001թ.-ին՝ 14.3%, 2011թ.-ին՝ 14.7%, իսկ 2016թ.-ին՝ 16.2%: 2016թ.-ի հունվարի 1-ի դրությամբ ՀՀ

աշխատունակ տարիքի բնակչությունը (16-62 տարեկան) կազմել է 1.987.240 մարդ կամ ընդհանուր բնակչության 66.3%-ը [19]: Նույն թվականին աշխատունակ տարիքի բնակչության 52.7%-ը կազմել են կանայք, իսկ 47.3%-ը՝ տղամարդիկ, այսինքն՝ աշխատունակ տարիքի բնակչության կտրվածքով կանանց քանակական գերակշռությունը տղամարդկանց նկատմամբ ավելի մեծ է, քան ընդհանուր բնակչության կտրվածքով: Սա ևս մեկ անգամ հաստատում է միգրացիաներում տղամարդկանց առավել լայն ներգրավվածության փաստը:

Ինչպես ցույց են տալիս ՀՀ մարզերի բնակչության տարիքային կառուցվածքի համեմատական վերլուծությունը 2016թ.-ի հունվարի 1-ի տվյալներով՝ հետաշխատունակ տարիքի (63տ. և բարձր) բնակչության մասնաբաժինները բարձր են ծայրամասային գոտու Տավուշի, Լոռու, Սյունիքի և Վայոց Ձորի մարզերում, որտեղ այն կազմել է 13-14%, մինչդեռ Երևանին հարակից գոտու Արարատի, Արմավիրի և Արագածոտնի մարզերում այդ ցուցանիշը 10-11% է: Վերը նշված տվյալները նույնպես վկայում են բնակչության միգրացիայի և ծերացման գործընթացի միջև առկա կապերի մասին, քանի որ, ինչպես արդեն նշել ենք, բնակչության արտագաղթը առավել ինտենսիվ բնույթ է կրում ծայրամասային (լեռնային) գոտու մարզերից [36]:

Մեծ է միգրացիայի ազդեցությունը ծնելիության և մահացության ցուցանիշների վրա, քանի որ միգրացիոն գործընթացներում ներգրավված են մեծամասամբ երիտասարդները, այսինքն՝ բնակչության այն հատվածը, որը պետք է ապահովի բնակչության վերարտադրությունը: Բնական է, որ եթե արտաքին միգրացիայի հաշվեկշռում արտագաղթը գերազանցում է ներգաղթին, ապա տվյալ տարածքում ծնելիության ցուցանիշները նվազում են, իսկ մահացության ցուցանիշներն աճում, իսկ հակառակ պարագայում տեղի է ունենում հակառակ երևույթը (սկ. 37):



Նկար 37 ՀՀ ծնելիության և մահացության գործակիցները 1991-2015թթ.-ին (%)

Ինչպես տեսնում ենք, ծնելիության գործակիցը բավականին բարձր է եղել ՀՀ առաջին տարիներին՝ 1991թ.-ին 21.8%, 1992թ.-ին 19.4%, իսկ հետո աստիճանաբար նվազել է և իր նվազագույնի է հասել 2000-2001թթ.-ին՝ 10%: Վերջին տարիներին այն մի փոքր բարձրացել է և 2015թ.-ին կազմել է 13.9%: Առհասարակ եթե 1991թ.-ին բացարձակ թվով ծնվել է 77825 մարդ, ապա 2015թ.-ին՝ ընդամենը 41763 մարդ: Ինչ վերաբերում է մահացության գործակցին, ապա քննարկվող ամբողջ ժամանակահատվածում այն անընդհատ ավելացել է, որը հետևանք է բնակչության ծերացման և սոցիալ-տնտեսական պայմանների վատացման: Մահացածների բացարձակ թիվը 2015թ.-ին կազմել է 27878 մարդ, իսկ 1991թ.-ին այն կազմում էր 23425 մարդ: Ինչպես տեսնում ենք, ՀՀ առաջին տարիներին և ներկայումս գրանցված մահացության ցուցանիշների միջև եղած տարբերությունները նույնքան մեծ չեն, որքան ծնելիության ցուցանիշների դեպքում: Դա բացատրվում է այն հանգամանքով, որ ծերացման գործընթացն ավելի երկարաժամկետ, դանդաղընթաց գործընթաց է, և դրա հետևանքները, այսինքն՝ մահացության ցուցանիշների աճը, նկատվում է ավելի երկար ժամանակահատվածում: Իսկ ծնելիության պարագայում հակառակ երևույթն է, արտագաղթի բարձր տեմպերի պարագայում երիտասարդների արտահոսքի հետևանքով կտրուկ նվազում են ծնելիության ցուցանիշները:

ՀՀ մարզերի բնակչության բնական վերարտադրության ցուցանիշների համեմատական վերլուծությունը վկայում է, որ բնակչության միգրացիան, ի թիվս այլ գործոնների, ազդում է տարածքային տարբերությունների ձևավորման վրա [36]: Այսպես, 2012-2015թթ.-ին բնակչության բնական աճի ամենացածր ցուցանիշներն (1-2%) ունեին ծայրամասային գոտու Լոռու, Տավուշի, Սյունիքի, Վայոց ձորի մարզերը, այն դեպքում, երբ Երևանում և Նրա հարակից գոտու մարզերում բնական աճը եղել է 5-6%-ի

սահմաններում: Բնակչության մեծ արտահոսք ունեցող ծայրամասային և լեռնային մարզերում բնական աճի ցուցանիշների ցածր լինելը պայմանավորված է ՀՀ կտրվածքով միջին ցուցանիշների համեմատությամբ գրանցված ցածր ծնելիության և բարձր մահացության ցուցանիշներով, որոնք կազմում են համապատասխանաբար՝ 11-12‰ և 10-11‰:

Վերջին տարիներին առկա ժողովրդագրական ճգնաժամի մասին է խոսում այն հանգամանքը, որ մի շարք մեծ ու փոքր քաղաքներում և առանձին գյուղական տարածքներում նկատվում է նեղ վերարտադրության ռեժիմ, երբ մահացածների թիվը գերազանցում է ծնվածների թվին: Դա նկատվում է հատկապես Լոռու, Շիրակի, Տավուշի և Սյունիքի մարզերի քաղաքներում, մասնավորապես՝ 2015թ.-ին նեղ վերարտադրության ռեժիմ է գրանցվել Լոռու մարզի Վանաձոր, Ալավերդի, Ստեփանավան, Թումանյան և Շամլուղ քաղաքներում, Տավուշի մարզի Դիլիջան, Բերդ, Նոյեմբերյան և Այրում քաղաքներում, Սյունիքի մարզի Կապան, Ագարակ և Դաստակերտ քաղաքներում, ինչպես նաև Ծաղկաձոր ու Ճամբարակ քաղաքներում: Նեղ վերարտադրության ռեժիմ է գրանցվել նաև Նոյեմբերյանի, Տավուշի, Կապանի. Մեղրու ու Գուգարքի տարածաշրջանների գյուղական բնակչության մոտ: Ստացվում է, որ ժողովրդագրական առումով հատկապես խոցելի են Կապանի, Մեղրիի, Նոյեմբերյանի և Տավուշի ՆՎՇ-ների քաղաքային և գյուղական բնակավայրերը, ինչես նաև Լոռու մարզի քաղաքները:

Ընդ որում, ծնելիության գործակիցների նվազումը և մահացության ցուցանիշների աճը հենց այս քաղաքային և գյուղական բնակավայրերում նաև միգրացիաների արդյունք է, քանի որ բարձր են դրանց ՄՍ-ի բացասական գործակիցները: Ցավոք սրտի այս խիստ բացասական երևույթը նկատվում է հատկապես այն մարզերում ու տարածաշրջաններում, որոնք իրենց տեղադիրքով սահմանամերձ են և ՀՀ համար ունեն նաև բացառիկ ռազմաքաղաքական նշանակություն:

Այնուամենայնիվ, հարկավոր է նշել, որ ինչպես ՀՀ, այնպես էլ ցանկացած այլ տարածքի ժողովրդագրական իրավիճակը հետևանք չէ միայն տվյալ ժամանակահատվածում տեղի ունեցող գործընթացների: Տասնյակ տարիներ տեղի ունեցած իրադարձությունները կարող են մեծապես ազդել ներկայիս ժողովրդագրական ցուցանիշների վրա: Այսպես, 1990-ական թթ.-ին ավելի քիչ թվով երիտասարդներ (հայրենական պատերազմի ժամանակ ծնվածների երեխաները) մուտք գործեցին վերարտադրության տարիք, ինչի հետևանքով էլ նվազեց ամուսնությունների և ծնունդների թիվը: ՀՀ ժողովրդագրական իրավիճակն էլ ավելի սրվեց, երբ այս օբյեկտիվ

իրողությանը գումարվեց նաև այդ տարիներին տեղի ունեցող զանգվածային արտագաղթի բացասական հետևանքները:

Որպես այս շղթայի հաջորդ օղակ, կարող ենք նշել, որ մեր կանխատեսումներով՝ մի քանի տարի հետո սկսելու է կտրուկ նվազել ծնելիության ցուցանիշները և աճել մահացության ցուցանիշները, քանի որ ամուսնությունների տարիք են մտնելու 1990-ական թթ.-ին քիչ թվով ծնվածները [33]: Սրան կարող ենք ավելացնել, որ չեն նկատվում արտագաղթի ծավալների նվազեցման և ներգաղթի ծավալների աճի միտումներ, քանի որ դեռևս առկա են գրեթե բոլոր այն պատճառներն ու գործոնները, որոնք ՀՀ-ում առաջացնում են միգրացիոն (արտագաղթելու) տրամադրվածություն և ՀՀ-ն դարձնում են ոչ հրապուրիչ արտասահմանում ապրող հայերի համար: ՀՀ ժողովրդագրական իրավիճակի սպասվելիք ճգնաժամից խուսափելու համատեքստում էլ ավելի հրատապ է դառնում միգրացիայի կարգավորման հիմնախնդիրը, քանի որ միայն արտագաղթի տեմպերի թուլացման և ներգաղթի ծավալների ավելացման շնորհիվ է հնարավոր մեղմել առաջիկա տարիներին ՀՀ-ում սպասվող ժողովրդագրական բացասական հետևանքները:

Հաշվի առնելով, որ բնակչության ՄՄ-ն բացասական է բոլոր մարզերում, քաղաքային և գյուղական գրեթե բոլոր բնակավայրերում, այսինքն՝ արտագաղթը ընդգրկել է տարաբնակեցման համարյա բոլոր միավորները, ապա ՀՀ ժողովրդագրական իրավիճակի վրա միգրացիայի վերոնշյալ բացասական ազդեցությունները տարածվում են նաև այդ բնակավայրերի վրա, և բնակչության ներքին միգրացիայի մասշտաբներն ու ուղղությունները էականորեն չեն ազդում ընդհանուր օրինաչափությունների վրա: Այսինքն՝ սեռատարիքային կառուցվածքում կանանց թվի ավելացումը և բնակչության միջին տարիքի մեծացումը և ծերացումը, ծնելիության գործակիցների նվազումը և մահացության գործակիցների աճը, ամուսնությունների թվի կրճատումը և ամուսնալուծությունների թվի աճը բնորոշ են ՀՀ տարաբնակեցման համակարգի գրեթե բոլոր մեծ և փոքր բնակավայրերին:

4.4 ՀՀ բնակչության միգրացիայի քաղաքաաշխարհագրական, Էթնո-աշխարհագրական և մշակութաաշխարհագրական հետևանքները

Բնակչության միգրացիաների ուսումնասիրությունների ժամանակ հատկապես քիչ ուշադրություն են դարձվում դրանց քաղաքաաշխարհագրական, էթնոաշխարհագրական և մշակութաաշխարհագրական հետևանքներին: Մինչդեռ արդեն նշել ենք, որ բնակչության միգրացիաները անմիջականորեն առնչվում են աշխարհաքաղաքական և էթնո-մշակութային գործընթացների հետ:

Քաղաքաաշխարհագրական հետևանքներ: ՀՀ բնակչության միգրացիան ամիջականորեն կապված է քաղաքական և աշխարհաքաղաքական գործընթացների հետ, դրանց հետ գտնվում է պատճատահետևանքային կապերի մեջ: ՀՀ մարզերում և բազմաթիվ համայնքներում իրականացված դաշտային սոցիալ-աշխարհագրական ցույց են տվել բնակչության միգրացիոն տրամադրվածությունների ձևավորման գործում քաղաքական և աշխարհաքաղաքական գործոնների կարևոր դերը: Դրան մենք անդրադարձել ենք այս աշխատանքի 2.3 բաժնում:

Արտագաղթը զգալի վնաս է հասցնում քաղաքացիական հասարակությանը, քանզի երկրից հեռանում է բնակչության ոչ միայն տնտեսապես ինքնուրույն, այլև քաղաքականապես ակտիվ մասը, ինչը հանգեցնում է թույլ հասարակական սեկտորի և թույլ քաղաքական ընդհմության ձևավորմանը և որպես հետևանք՝ կառավարման մեջ ավտորիտար միտումների ուժեղացմանը [13]: Բնակչության աշխատունակ և ակտիվ մասի արտագաղթի հետևանքով հասարակության մեջ դանդաղում է միջին խավի ձևավորումն ու դրա հետ կապված ժողովրդավարական բարեփոխումները: Թե՛ տնտեսապես, և թե՛ քաղաքականապես թուլացած հասարակությունը դառնում է առավել «կառավարելի». Այն ընդունակ չէ արդյունավետ կերպով դիմակայելու կաշառակերությանը, իշխանությունների կամայականություններին, քաղաքացիների իրավունքների խախտմանը:

Վերը նշված քաղաքական բացասական հետևանքները առավել մեծ սրությամբ դրսևորվում են ՀՀ մարզերում: Մեծանում է բնակչության քաղաքական մշակույթի և քաղաքական գիտակցության տարածաշրջանային տարբերությունները: Հատկապես

մեծացել են Երևանի և մարզերի, հատկապես՝ գյուղաբնակ մարզերի միջև եղած տարբերությունները: Երևանի համեմատությամբ՝ մարզերի բնակչության մեջ անհրաժեշտ քաղաքական մշակույթի անբավարար լինելու հանգամանքը խոչընդոտում է ժողովրդավարական ընտրությունների միջոցով տեղական ինքնակառավարման համակարգի զարգացմանը, իսկ տեղային-բնակավայրային հիմնախնդիրների լուծման անընդհատ ձգձգումները մեծացնում են բազմաթիվ համայնքների բնակչության միգրացիոն տրամադրվածությունները:

ՀՀ բնակչության արտաքին միգրացիոն տեղաշարժերի համադրումը ՀՀ-ում անցկացված համապետական ընտրությունների հետ վկայում է դրանց միջև որոշակի կապի առկայության մասին: Վերլուծությունը կատարել ենք սկսած 2001թ.-ից, քանի որ 1990-ական թթ.-ի տվյալները ստացվել են 2001թ.-ի մարդահամարի հիմքով վերահաշվարկի արդյունքում, ուստի առանձին տարիների կտվածքով հնարավոր է ճիշտ չարտացոլեն իրական պատկերը: Այսպես, 2002թ.-ին, երբ անցկացվել է ՀՀ Ազգային ժողովի ընտրություններ, բնակչության միգրացիայի բացասական սալոյոյի ցուցանիշը նախորդ տարվա համեմատ աճել է մոտ 58%-ով, իսկ 2003թ.-ին, երբ անցկացվել է ՀՀ Նախագահական ընտրություններ, 2002թ.-ի համեմատությամբ բնակչության ՄՍ-ի բացասական ցուցանիշն աճել է արդեն մետ 14%-ով: Հաջորդ համապետական ընտրությունները անցկացվել են 2007 և 2008թթ.-ին՝ համապատասխանաբար ՀՀ Ազգային ժողովի և ՀՀ Նախագահական ընտրություններ: Այսպես, 2007թ.-ին ՀՀ բնակչության բացասական ՄՍ-ն նախորդ տարվա համեմատ աճել է մոտ 12%-ով, իսկ 2008թ.-ին՝ մոտ 3%-ով: 2012 և 2013թթ.-ին անցկացված ընտրությունների և ՀՀ բնակչության միգրացիոն տեղաշարժերի միջև եղած կապը դժվար է քանակապես ներկայացնել, քանի որ այդ տարիներին, ինչպես արդեն նշել ենք աշխատանքում, տեղի է ունեցել Սիրիայից մեծ թվով հայերի ներգաղթ դեպի ՀՀ, ուստի ստացված ՄՍ-ի համեմատաբար ցածր բացասական ցուցանիշները պայմանավորված են հենց այս հանգամանքով: Ընդհանուր առմամբ, տվյալները ցույց են տալիս, որ ՀՀ-ում անցկացվող համապետական ընտրություններին հաջորդում է ՄՍ-ի բացասական ցուցանիշի աճ, որը ենթադրում է նաև՝ արտագաղթի ծավալների աճ: Սրանից կարելի է եզրակացնել, որ ստացված տվյալները վերահաստատում են լայնորեն տարածված այն վարկածը, որ ՀՀ-ում անցկացվող համապետական ընտրությունների արդյունքները հասարակության մեջ

առաջացնում են հուսալքության և հուսահատության ալիքներ, որոնք էլ իրենց հերթին հանգեցնում են բնակչության արտագաղթի ծավալների մեծացմանը և դրա հետ կապված ՄՍ-ի բացասական ցուցանիշի աճին:

Բնակչության արտագաղթը չի բխում նաև երկրի պաշտպանունակության, ազգային անվտանգության և ռազմական հզորության զարգացման շահերից, հատկապես եթե հաշվի առնենք այն հանգամանքը, որ ՀՀ-ն գտնվում է աշխարհաքաղաքական առումով բարդ և անկայուն տարածաշրջանում: Դրա հետ կապված խիստ մտահոգիչ են դառնում այն միտումները, որ բնակչության միգրացիոն արտահոսքերը ավելանում և մեծ չափերի են հասնում սահմանամերձ բնակավայրերից: Արտագաղթողների մեջ ներառված են նաև զորակոչային տարիքի երիտասարդները, որի պատճառով նվազում է զինվորների թվաքանակը: Դրա բացասական հետևանքները հատկապես ակնառու են դարձել վերջին տարիներին, երբ զորակոչային տարիք են մուտք գործում 1990-ական թթ.-ի վերջերին ծնվածները, որոնք ինչպես նշել ենք, բավականին փոքր թիվ են կազմում, իսկ բանակը երկրի ազգային անվտանգության կարևորագույն պայմաններից մեկն է:

Էթնոաշխարհագրական հետևանքներ: Բնակչության միգրացիաների առաջացրած էթնոաշխարհագրական հետևանքները նույնպես ուսումնասիրման անհրաժեշտություն ունեն [55]: Ինչպես արդեն նշել ենք՝ մինչխորհրդային և խորհրդային տարիներին բնակչության միգրացիոն տեղաշարժերը թեև ներկայացված են եղել տասնյակ ժողովուրդներով, սակայն ընդհանուր առմամբ միգրացիայի արդյունքում երկրի ազգային կազմը ավելի միատարր է դարձել: Անկախության տարիներին ՀՀ բնակչության ազգային կազմի միատարրությունն էլ ավելի է մեծացել [6]: Դա առաջին հերթին բացատրվում է բնակչության արտաքին միգրացիայով, որի ընդհանուր թվաքանակում ազգային փոքրամասնությունների բաժինը հարաբերականորեն ավելի մեծ է: Դրա արդյունքում հայերի բաժինը բնակչության ընդհանուր թվում անընդհատ ավելացել է: Եթե 1989թ.-ին հայերի բաժինը ՀՀ բնակչության մեջ կազմում էր 93,3%, ապա 2001թ.-ին՝ 97,9%, իսկ 2011թ.-ին՝ 98.1%: ՀՀ ամբողջ ժամանակահատվածում հայերից հետո բնակչության մեջ մեծամասնություն են կազմել եզդիները, իսկ հաջորդ մեծ համայնքը եղել է ռուսներինը (աղ.5):

ՀՀ ազգային կազմը 1989, 2001 և 2011թթ.-ի մարդահամարների տվյալներով (մարդ / %)

Ազգությունը	1989թ.		2001թ.		2011թ.	
	Բացարձակ թվերով	Տոկոսներով (%)	Բացարձակ թվերով	Տոկոսներով (%)	Բացարձակ թվերով	Տոկոսներով (%)
Հայ	3083616	93.3	3145343	97.9	2961947	98.1
Եզդի	51976	1.6	40620	1.3	35308	1.17
Ռուս	51555	1.6	14660	0.4	11911	0.38
Ասորի	5963	0.2	3409	0.1	2769	0.1
Քուրդ	4151	0.1	1519	0.05	2162	0.07
Ուկրաինացի	8341	0.2	1633	0.06	1176	0.05
Հույն	4650	0.1	1176	0.04	900	0.03
Այլ	9664	0.3	4640	0.15	2727	0.1

1989թ.-ի դրությամբ Հայաստանում դեռևս ապրում էին ադրբեջանցիներ, որոնց թիվն ըստ մարդահամարի կազմել է 84860, սակայն աղյուսակում նրանց չենք ներառել, քանի որ չեն ընդգրկվում մեր հետազոտության հետաքրքրության շրջանակներում, քանզի նրանց արտագաղթը Հայաստանից յուրովի ազգային-քաղաքական պատճառներ ուներ:

Ազգային փոքրամասնությունների մեջ մեծամասնություն են կազմել եզդիներն ու ռուսները, որոնց կշիռը ընդհանուր բնակչության մեջ կազմել է 1.6%: 1990-ական թթ.-ին ՀՀ-ից տեղի ունեցավ բնակչության զանգվածային արտագաղթին, բացի հայ բնակչությունից, մասնակցել են նաև ՀՀ-ում բնակվող այլազգիները: Դրա մասին են վկայում 2001թ.-ի մարդահամարի ժամանակ ՀՀ ազգային փոքրամասնությունների մասին ստացված տվյալները:


Ինչպես տեսնում ենք, 1989 և 2001թթ.-ի մարդահամարների միջև ընկած ժամանակահատվածում այլազգի ներկայացուցիչները նվազել են և՛ բացարձակ թվով, և՛ ընդհանուր բնակչության մեջ տոկոսային կտրվածքով: Նրանց թիվը 1989թ.-ի մարդահամարի տվյալների համեմատ 2001թ.-ի մարդահամարի պահին նվազել էր 68643 մարդով՝ 136300-ից դառնալով ընդամենը 67657 մարդ, իսկ տոկոսային առումով՝ մոտ 2%-ով: Ընդ որում, չնայած նվազել են ՀՀ-ում ապրող բոլոր էթնիկական խմբերի ներկայացուցիչների թվաքանակները, սակայն այդ նվազումը խմբերի միջև համաչափ չի

եղել: Աղյուսակի 6-ի տվյալները վկայում են, որ 1989-2001թթ.-ին զգալի չափով նվազել են ռուսների թիվը՝ 3,5 անգամ և ուկրաինացիների թիվը՝ 5,1անգամ: Մյուս եթնիկական խմբերի հետ համեմատած՝ հատկապես քիչ է նվազել եզդիների թվաքանակը: Եթե 1989թ.-ին նրանք կազմում էին ընդհանուր բնակչության մոտ 1.6%-ը, ապա 2001թ.-ին՝ 1.3%-ը: Ազգային փոքրամասնությունների արտագաղթը ՀՀ-ից նույնպես պայմանավորված էր երկրում ստեղծված սոցիալ-տնտեսական ծանր իրավիճակով:

Չնայած 2000-ական թթ.-ի ընթացքում հիմնականում շարունակվել է այլազգի ներկայացուցիչների թվաքանակի նվազումը ՀՀ-ում, սակայն արդեն ոչ նախկին տեմպերով: Եթե 1989-2001թթ.-ի ընթացքում նրանց թիվը նվազել էր 68643 մարդով, ապա 2001-2011թթ.-ի ընթացքում՝ ընդամենը 10704 մարդով, իսկ քրդերի թիվը 2001թ.-ի համեմատությամբ 2011թ.-ին ավելացել է՝ 1519-ից դառնալով 2162: Աղյուսակ 5-ում նշված ազգային փոքրամասնությունների այլ խմբի մեջ 2011թ.-ի դրությամբ համեմատաբար մեծ թիվ են կազմել վրացիներն ու պարսիկները՝ համապատասխանաբար 617 և 476 մարդ: Աշխարհագրական առումով հետաքրքրություն է ներկայացնում ՀՀ-ում բնակվող այլազգիների տեղաբաշխումն ըստ քաղաքային և գյուղական բնակավայրերի:

գյուղական բնակավայրերի կտրվածքով, 2011թ.-ի մարդահամարի տվյալներով, (%)

Եզդիները, ասորիները և քրդերը հիմնականում տեղաբաշխված են գյուղական բնակավայրերում, մասնավորապես՝ եզդիները և քրդերը Արագածոտնի և Արմավիրի մարզի գյուղերում, իսկ ասորիները՝ հիմնականում Արարատի մարզի գյուղերում: Իսկ ահա ռուսները, ուկրաինացիները, հույները, վրացիները և պարսիկները ՀՀ-ում հիմնականում քաղաքաբնակ են և մեծամասամբ կենտրոնացած են Երևանում (նկ.38): Ընդ որում գյուղաբնակ այլազգիները որոշ փոքր գյուղերում կազմում են մեծամասնություն, իսկ որոշ գյուղերում էլ ապրում են հայերի հետ համատեղ: Այս տարանջատումը բխում է տվյալ ազգերի մենթալիտետից, ավանդույթներից, մշակույթային առանձնահատկություններից:



Նկար 38 ՀՀ ազգային փոքրամասնությունների տեղաբաշխումը ըստ քաղաքային և

Ընդ որում, ազգային փոքրամասնությունների տեղաբաշխումն ըստ քաղաքային և գյուղական տարաբնակեցման միավորների, միգրացիաների արդյունքում Եական որակական փոփոխությունների չեն ենթարկվել, քանի որ միգրացիաներին գրեթե համամասնորեն մասնակցում են և՛ քաղաքներում, և՛ գյուղերում բնակվողները: Այդ է պատճառը, որ վերևում ներկայացրած դիագրամի 2011թ.-ի տվյալները, 2001թ.-ի նույն տվյալների համեմատությամբ, Եական փոփոխությունների չեն ենթարկվել:

2000-ական թթ.-ին, երբ ՀՀ-ից բնակչության արտագաղթը կորցրեց նախկին տեմպերը, սոցիալ-տնտեսական պայմանները դարձան անհամեմատ ավելի բարենպաստ, նվազեց նաև այլազգիների արտագաղթի տեմպերը ՀՀ-ից:

Մշակութաաշխարհագրական հետևանքներ: Կրոնական առումով ՀՀ-ը նույնպես համարվում է միատարր, քանի որ կրոնական դավանանք ունեցողների մոտ 96-97%-ը Հայ առաքելական եկեղեցու հետևորդներ են, չնայած այն հանգամանքին, որ ՀՀ-ում օրենքով սահմանված է կրոնական հավատքի ազատությունը, և այդ առումով ոչ մի տեսակի ճնշումներ չկան: Ընդ որում, տվյալ ցուցանիշը առանձնապես Եական տարբերությունների չի ենթարկվում քաղաքային և գյուղական բնակչության շրջանակներում: Միայն փոքր տարբերությամբ գյուղական բնակչության մեջ տոկոսային առումով ավելի մեծ է այլ կրոնական ուղղություններ դավանողների բաժինը: Դա էլ հիմնականում պայմանավորված է այն հանգամանքով, որ եզրիները, որոնց մեծամասնությունը դավանում է սեփական Շարժադինական կրոնական ուղղությունը, տեղաբաշխված են գյուղական շրջաններում:

Հայ բնակչության միգրացիան մեծ ազդեցություն է թողնում հայկական մշակույթի տարածման և հարստացման գործում: Պատմական իրադարձություններից ելնելով հայերը սփռվեցին աշխարհով մեկ և բազմաթիվ երկրներում ստեղծեցին հայկական մեծ համայնքեր: Այնուհետ հայրենիքից հայերի արտագաղթը դարձավ հայ ժողովրդի պատմության մնայուն բնութագրերից մեկը: Սփյուռքը երկակի դեր է կատարում հայ բնակչության արտաքին միգրացիայի մասշտաբների և ուղղությունների ձևավորման վրա: Եթե խորհրդային տարիներին զանգվածային բնույթ կրեց ներգաղթը սփյուռքի խոշոր կենտրոններից, ապա անկախության տարիներին, ընդհակառակը՝ սփյուռքը նպաստեց բնակչության զանգվածային արտագաղթին դեպի ՌԴ, ԱՄՆ. Ֆրանսիա և խոշոր սփուռք ունեցող այլ երկրներ:

ՀՀ գրեթե բոլոր տարիներին ինտենսիվ կերպով շարունակվել է հայ բնակչության արտահոսքը դեպի արտասահմանյան այլ երկրներ, որոնք համարել են սփյուռքահայության շարքերը: Չնայած սփյուռքահայերի թվաքանակի վերաբերյալ չկան հստակ փաստական տվյալներ, սակայն նրանց թիվը տարբեր հաշվումների արդյունքում ընդունված է համարել նվազագույնը 9-10 մլն մարդ: Այսինքն ստացվում է, որ ՀՀ-ում և ԼՂՀ-ում միասին վերցրած ապրում է աշխարհի ամբողջ հայության առավելագույնը մոտ 25-30%-ը: Մշակութաաշխարհագրական առումով հետաքրքիր է այն փաստը, որ հայ միգրանտները, արտասահմանում ստեղծելով հայկական համայնքներ, մեծամասամբ պահպանելով իրենց մշակութային և կրոնական առանձնահատկությունները, բարեհաջող կերպով ապրում աշխարհի են տարբեր մայրցամաքներում և տարբեր քաղաքակրթական և կրոնական միջավայրներում: Վերջին տարիներին Սիրիայում ստեղծված ծանր ճգնաժամը իր ազդեցությունն ունեցավ նաև այնտեղ ապրող հայ համայնքի վրա: Բազմաթիվ հայեր լքեցին Սիրիան, որոնց մի մասն էլ ներգաղթեց ՀՀ:

Մշակութային առումով հետաքրքիր է նաև, որ հայերը՝ բնակվելով տարբեր երկրներում և տարբեր ժողովուրդների կողքին, իրենց ազգային ավանդույթների ու մշակութային առանձնահատկությունների պահպանման հետ մեկտեղ կարողանում են դրանք բարեհաջող համատեղել տվյալ երկրների ժողովուրդների ավանդույթներին, երբեմն՝ նաև յուրացնում են նրանց մշակութային առանձնահատկություններից որոշ տարրեր և դրանով հարստացնում հայկական մշակույթը: Դրա վառ օրինակն են վերջին

տարիներին ՀՀ-ում հաստատված սիրիահայերը, որոնք գալով հայրենիք՝ իրենց հետ բերեցին նաև տարբեր արաբական ավանդույթներ, ուտեստներ և այլն: Այլ երկրներում հայերի կողմից հայկական և օտար մշակույթների համատեղման շնորհիվ է նաև, որ սփյուռքահայության շրջանում եղել են և հիմա էլ կան բազմաթիվ հանրաճանաչ հայեր, որոնք ընդունվել ու սիրվել են անգամ տվյալ երկրների ժողովուրդների կողմից: Ինչպես նաև տարբեր նպատակային ծրագրերով (կրթական, աշխատանքային, վերապատրաստման և այլն) արտասահման մեկնած մարդիկ, որոշ ժամանակ բնակվելով արտերկրում և ինչ-որ չափով յուրացնելով տվյալ երկրի մշակույթային առանձնահատկությունները, վերադառնալով ՀՀ փորձում են դրանք ներառել իրենց առօրյայում: Այսինքն՝ միգրացիաների միջոցով տեղի է ունենում մշակույթների շփման և փոխներթափանցման գործընթաց:

4.5 ՀՀ բնակչության միգրացիայի կանխատեսման և կարգավորման հիմնահարցերը

Բնակչության, ադ թվում՝ միգրացիայի ճշգրիտ կանխատեսումները բարդ խնդիրներ են, քանի որ դրանք կապված են հասարակական կյանքում տեղի ունեցող քաղաքական, տնտեսական և սոցիալական բազմաթիվ տեղաշարժերի և գործընթացների հետ: Միգրացիայի կանխատեսումը պահանջում է բոլոր այն գործոնների և առկա միտումների ամբողջական վերլուծություն և հաշվառում, որոնք ազդում են միգրացիոն հոսքերի ձևավորման, դրանց մասշտաբների և ուղղությունների վրա: Կանխատեսման համար անհրաժեշտ է հաշվի առնել պետության կողմից իրականացվող, տնտեսական, սոցիալական և ժողովրդագրական ներկայիս և ապագայում ենթադրվող քաղաքականությունը:

Եթե բնական վերարտադրության ցուցանիշները տարածաշրջանի սահմաններում 1-2 տասնամյակի ընթացքում սովորաբար էական փոփոխությունների չեն ենթարկվում, ապա բնակչության միգրացիոն շարժերը ոչ մեծ տարածքի՝ տարածաշրջանի մակարդակով, որպես կանոն, տարբեր տարիների խիստ փոփոխական են և անորոշ [40]:

Այսինքն, ՀՀ և նրա մարզերի բնակչության միգրացիաների միանշանակ կանխատեսումը դառնում է անհնար, քանի որ նախ հայտնի չեն բոլոր այն գործոնները, որոնք պայմանավորում են բնակչության միգրացիոն տեղաշարժերը (ներդրումների ծավալները, նոր աշխատատեղերի ստեղծումը, աշխատավարձի չափը, քաղաքական կայունությունը և այլն) և երկրորդ, եթե նույնիսկ, դրանք հայտնի լինեն, ապա հնարավոր չէ միանշանակ հետևություններ անել սպասվելիք միգրացիայի մասշտաբների մասին: Բնակչության միգրացիոն շարժերը սովորաբար տարերային են և ունեն հավանական բնույթ, ուստի հաճախ անկախատեսելի են և անորոշ: Հետևաբար նպատակահարմար է կանխատեսումն անել մի քանի տարբերակներով: Միգրացիայի կանխատեսման պարզագույն և տարածված ուղին միգրացիայի բացարձակ և հարաբերական ցուցանիշների կիրառումն է հեռանկարի համար: Առավել աշխատատար և միաժամանակ ճշգրիտ ուղին միգրանտների տարիքային կազմի որոշումն է: Այստեղ կարելի է որոշել տարիքային կառուցվածքի տեղաշարժերի մեթոդը:

Մեր կարծիքով քիչ է հավանական ՀՀ սոցիալ-տնտեսական և ժողովրդագրական իրավիճակների զգալի և արմատական տեղաշարժեր ու փոփոխություններ մոտակա տասնամյակում, ուստի նպատակահարմար է ՀՀ բնակչության միգրացիայի մասշտաբների կանխատեսման համար օգտագործել էքստրապոլյացիայի (արտարկման) մեթոդը, քանի որ այս դեպքում միգրացիայի ներկայիս ցուցանիշները տարածվում են կանխատեսվող ամբողջ ժամանակաշրջանի վրա: Դա պայմանավորված է այն ենթադրությամբ, որ միգրացիայի ներկայիս տեմպերն ու միտումները պահպանվելու են նաև հետագայում:

Ունենալով մեր կողմից հաշվարկված ՀՀ բնակչության ՄՍ-ի ցուցանիշները բոլոր տարիների կտրվածքով՝ փորձել ենք կատարել ՀՀ բնակչության հեռանկնարային թվի և ՄՍ-ի ծավալների էքստրապոլյացիոն միջնաժամկետ (10 տարի) և երկրաժամկետ (20 տարի) կանխաստեսում: Էքստրապոլյացիոն կանխատեսման ժամանակ ենթադրվում է, որ վերջին տարիներին նկատված միտումները պետք է շարունակվեն նաև ապագայում: Դրա համար վերցրել ենք 1996-2015թթ.-ին բնակչության թվի փոփոխման և բնակչության ՄՍ-ի ցուցանիշի փոփոխման միտումները միջին տարեկան կտրվածքով և դրանք համադրել գալիք տարիների վրա: Արդյունքում ստացվել է, որ մինչև 2025թ.-ը ՀՀ

բնակչության թիվը միգրացիայի արդյունքում կնվազի մոտ 243 հազարով, իսկ 2035թ.-ին՝ մոտ 467 հազարով: Հաշվարկվել է նաև, թե որքանով կնվազի արդեն բնակչության թվաքանակը 10 և 20 տարի հետո, եթե նույնը մնա նաև նախորդ 20 տարիներին բնակչության բնական շարժի փոփոխման միտումները: Արդյունքում ստացվել է, որ ՀՀ բնակչության թիվը 2025թ.-ի դրությամբ կկազմի մոտ 2,892 հազար մարդ, իսկ 2035թ.-ին՝ 2,779 հազար մարդ: Փորձել ենք բնակչության հեռանկարային թվի կանխատեսում անել նաև Երևան քաղաքի և ՀՀ մարզերի կտրվածքով: Բնակչության միգրացիայի և բնական շարժի ներկայիս միտումների պահպանման դեպքում բնակչության թվաքանակը հատկապես կտրուկ կնվազի ծայրամասային գոտու՝ Լոռու, Վայոց Ձորի և Շիրակի մարզերում: Հատկապես առավել մտահոգիչ է Լոռու մարզի բնակչության հնարավոր փոփոխությունների հեռանկարը, քանի որ հավանական է, որ 20 տարի հետո Լոռու մարզի բնակչությունը կնվազի մոտ 1/4-ով: Ըստ այս հաշվումների՝ ամենաքիչը կնվազի Երևանի, Նրան հարակից գոտու Արմավիրի և Արարատի մարզերի, ինչպես նաև ծայրամասային գոտու՝ Գեղարքունիքի մարզի բնակչության թվաքանակը (աղ. 6):

Սակայն պարզ է, որ հաջորդ տարիներին ՀՀ բնակչության արտագաղթի և ներգաղթի ներկայիս հարաբերակցության պահպանման կամ ոչ էական փոփոխման դեպքում ՀՀ բնակչության և առանձին մարզերի բնակչության թիվը ավելի փոքր կլինի 2025 և 2035թթ.-ին, քանի որ ինչպես ցույց է տալիս ՀՀ և մարզերի բնակչության սեռատարիքային կազմի վերլուծությունը, մոտակա տարիներին սպասվում է ծնելիության ցուցանիշների կտրուկ նվազում և մահացության ցուցանիշների աճ:

Ներկայումս ակտիվ վերարտադրության տարիքում են գտնվում 1980-ական թթ.-ին ծնվածները, որոնք բացարձակ թվով ավելի մեծ թիվ են կազմել, քան հաջորդ տասնամյակներում ծնվածները: Մասնավորապես՝ եթե 1980-ական թթ.-ին տարեկան միջին հաշվով ծնվում էին մոտ 76 հազ. մարդ, ապա անկախացումից հետո այդ նույն ցուցանիշը կազմել է արդեն միջինը մոտ 42 հազ. մարդ, այսինքն՝ 1.8 անգամ ավելի քիչ: Զանի որ մոտակա 20 տարիների ընթացքում ակտիվ վերարտադրության տարիք են մուտք գործելու արդեն անկախության տարիներին համեմատաբար քիչ թվով ծնվածները, ապա ՀՀ համար կանխատեսումներ ենք կատարել նաև հաշվի առնելով այն հանգամանքը, որ գալիք տարիներին մոտ 2 անգամ ավելի քիչ թվով մարդիկ են մտնելու

ակտիվ վերարտադրության տարիք: Արդյունքում ստացվում է, որ եթե գալիք տարիների ընթացքում բնակչության բնական շարժի ցուցանիշների փոփոխման միտումները համընկնեն մեր վերոնշյալ դիտարկման հետ և վերջին 20 տարիներին գրանցված բնակչության միգրացիայի միտումները էական փոփոխությունների չենթարկվեն, ապա արդյունքում կստացվի, որ 2025թ.-ին ՀՀ բնակչությունը կկազմի մոտ 2,780 հազ. մարդ, իսկ 2035թ.-ին՝ կնվազի արդեն մոտ 530 հազարով կամ 17-18%-ով և կկազմի մոտ 2,482 հազ. մարդ:

Աղյուսակ 6

Երևան քաղաքի և ՀՀ մարզերի բնակչության թվաքանակի հնարավոր փոփոխությունները

Մարզեր	2015թ.	2025թ.	Բնակչության թվի կրճատումը 10 տարվա ընթացքում	2035թ.	Բնակչության թվի կրճատումը 20 տարվա ընթացքում
Երևան	1071511	1057398	-1,3%	1043471	-2,6%
Արագածոտն	131332	126680	-3,5%	122193	-7%
Արարատ	260102	255074	-1,9%	250143	-3,8%
Արմավիր	267002	262945	-1,5%	258949	-3%
Գեղարքունիք	232988	229126	-1,7%	225328	-3,3%
Լոռի	227999	196875	-13,7%	170000	-25,4%
Կոտայք	254990	242316	-5%	230273	-9,7%
Շիրակ	246409	226887	-7,9%	208912	-15,2%
Սյունիք	140182	135203	-3,6%	130401	-7%
Վայոց Ձոր	51406	47091	-8,4%	43137	-16,1%
Տավուշ	126677	120829	-4,6%	115252	-9%

Ինչպես տեսնում ենք, ՀՀ բնակչության միգրացիայի և բնական շարժի ներկայիս միտումների պահպանման դեպքում, մոտակա տարիներին մեր երկիրը կանգնելու է ժողովրդագրական խորը ճգնաժամի առջև: Եվ եթե բնական շարժի ցուցանիշները գալիք տարիներին դժվար թե դրական զգալի փոփոխությունների ենթարկվեն, ապա բնակչության միգրացիոն տեղաշարժերի ներկայիս ընթացքը կարող է դրական փոփոխությունների ենթարկվել, եթե ՀՀ քաղաքական, տնտեսական և սոցիալական

ուրորտներում, ինչպես նաև հասարակության տարածքային կազմակերպման մեջ տեղի ունենան էական և համակարգային բարեփոխումներ:

ՀՀ բնակչության միգրացիոն իրավիճակի վերլուծությունից երևում է, որ ՀՀ բնակչության միգրացիայի հիմնախնդիրները ենթակա չեն ինքնակարգավորման: Ավելին, պետության կողմից արդյունավետ և համակարգված միջամտության բացակայությունը ոչ միայն չի լուծում նշված խնդիրները, այլև ավելի հավանական է դարձնում դրանց հետագա սրումը: Վերը թվարկված խնդիրները լուծելու համար հարկավոր է պետական իշխանության բոլոր օղակները՝ օրենսդիր և գործադիր, կենտրոնական և տեղական և այլն, ներկայացնող բազմաթիվ կառույցների ջանքերի համարժեք ներդրում: Այսինքն, անհրաժեշտ է ստեղծել այնպիսի իրավական, տնտեսական, սոցիալական, ժողովրդագրական մեխանիզմներ ու պայմաններ, որոնք կնպաստեն միգրացիայի՝ պետության համար ընդունելի և նույնիսկ ցանկալի մասշտաբների և ուղղությունների հաստատմանը:

Բնակչության միգրացիան դժվար կարգավորվող և կառավարվող երևույթ է: Սա բացատրվում է այն հանգամանքով, որ տեղաշարժվելը յուրաքանչյուր մարդու ազատ կամքի դրսևորումն է: Այսինքն՝ միգրացիոն տեղաշարժերի վրա ազդում են ոչ միայն օբյեկտիվ, այլ նաև սուբյեկտիվ գործոններ: Զանի որ միգրացիաներն ունենում են հիմնականում տարերային բնույթ, ինչպես ՀՀ դեպքում, ապա միշտ չէ, որ դրանք բխում են տվյալ բնակավայրի, տարածաշրջանի կամ երկրի սոցիալ-տնտեսական և ժողովրդագրական շահերից: Հետևաբար, զգացվում է դրանց պետական կարգավորման և կառավարման անհրաժեշտություն: Ըստ 2010թ.-ին ՀՀ կառավարության կողմից ընդունված ՀՀ միգրացիայի պետական կարգավորման քաղաքականության հայեցակարգի՝ միգրացիայի պետական կարգավորման քաղաքականության նպատակն է՝ ազգային անվտանգության ու կայուն մարդկային զարգացման պահանջներին համապատասխանող միգրացիոն իրավիճակի ձևավորումը և միգրացիոն հոսքերում ներառված անձանց իրավունքների ու շահերի պաշտպանության ապահովումը [25]:

ՀՀ առաջին տարիներից սկսած զգալի փոփոխությունների են ենթարկվել բնակչության միգրացիոն գործընթացները, դրանց մասշտաբները, ուղղությունները, դրանց վրա ազդող գործոններն ու դրանց առաջացրած հետևանքները: Դրանց հետ

գուգահեռ փոխվել են նաև պետական կարգավորման միջոցով ՀՀ բնակչության միգրացիայի հիմնախնդիրների լուծման մասին պատկերացումները: Նշված փոփոխությունները բնականաբար անձդրադարձել են նաև միգրացիոն հիմնախնդիրների լուծմանն ուղղված ՀՀ պետական կառավարման համակարգի վարվող քաղաքականության վրա, պայմանավորել դրանց զարգացման ընթացքը: Մասնավորապես՝ մինչև 2000թ.-ը, միգրացիայի ոլորտում ՀՀ վարած պետական կարգավորման քաղաքականությունը հիմնականում ուղղված էր Ադրբեջանից, Լեռնային Ղարաբաղից և Նախկին ԽՍՀՄ այլ տարածքներից եկած փախստականների հիմնախնդիրների կազավորմանը, մինչդեռ նույն ժամանակահատվածում տեղի էր ունենում ՀՀ-ից մարդկանց զանգվածային արտագաղթ: Պետության կողմից բնակչության միգրացիոն գործընթացների կարգավորմանն ուղղված նման սահմանափակ և միավեկտոր մոտեցումն է պատճառը, որ 1990-ական թթ.-ին տեղի ունեցած բնակչության միգրացիոն տեղաշարժերը այնպիսի բացասական ազդեցություններ ու հետևանքներ ունեցան, որ զգացվում են անգամ ներկայիս փուլում:

2000թ.-ից սկսած փոխվեցին միգրացիայի պետական կարգավորման մասին մոտեցումները՝ դուրս գալով միայն փախստականների հիմնախնդրի լուծման շրջանակից: Այդ առնչությամբ ընդունվեցին մի շարք օրենքներ, տարբեր երկրների հետ կնքվեցին միգրացիայի փոխհարաբերությունների կարգավորման երկկողմ միջպետական համաձայնագրեր, ՀՀ-ը անդամակցեց մի շարք միջազգային կազմակերպությունների և ներգրավվեց տարբեր կոնվենցիաներում: 2000 և 2004թթ.-ին ՀՀ կառավարությունն ընդունեց ՀՀ բնակչության միգրացիայի կարգավորման երկու հայեցակարգ: 2009թ.-ին ՀՀ տարածքային կառավարության կազմում ստեղծվեց Միգրացիոն պետական ծառայությունը, որին վերապահվեց ոլորտում քաղաքականության մշակման գործառույթների համակարգումը:

ՀՀ կառավարության կողմից միգրացիայի կարգավորման վերջին հայեցակարգը ընդունվել է 2010թ.-ին, որտեղ բացի նոր առաջադրված խնդիրներից, տեղ են գտել նաև նախորդ երկու հայեցակարգերում սահմանված, սակայն դեռ լուծում չստացած մի շարք խնդիրներ: Սույն հայեցակարգում առանձնացվել են ՀՀ բնակչության միգրացիայի արդյունքում առաջացած հիմնախնդիրներ խումբ, որոնք ենթակա են լուծման պետական

կառավարման տարբեր ոլորտներում վարվող արդյունավետ քաղաքականությունների միջոցով [25]: Դրանք են՝

1) Միգրացիոն գործընթացների հետևանքով առաջացած ժողովրդագրական անբարենպաստ իրավիճակի բարելավումը, որը ենթադրում է ՀՀ բնակչության աճի խթանմանը, բնակչության սեռատարիքային արդյունավետ համամասնությունների ձևավորմանը նպաստող քաղաքականության վարում: ՀՀ բնակչության սեռատարիքային անհամամասնությունները վերացնելու ուղղությամբ կարևորվում է երկրից հեռացած վերարտադրողական տարիքի տղամարդկանց կայուն ներհոսքի կազմակերպումը, միգրացիոն արտահոսքի կանխարգելմանը նպաստող սոցիալ-տնտեսական քաղաքականության վարումը: Սակայն չի մատնանշվում այն կոնկրետ միջոցառումներն ու գործողությունները, որոնք պետք է կանխեն ՀՀ բնակչության միգրացիայի հետևանքով առաջացած ժողովրդագրական բացասական միտումները:

2) Միգրացիոն գործընթացների հետևանքով հանրապետության բնակչության արդյունավետ տարաբնակեցման խաթարված իրավիճակի բարելավումը, որը ենթադրում է ՀՀ բնակչության Երևանում և մայրաքաղաքամերձ մարզերում վտանգավոր գերկենտրոնացումը կանխող քաղաքականության վարում: Երկրում տարածքային զարգացման անհամաչափությունների վերացմանը և հետ մնացող տարածքների տնտեսական զարգացման արագացմանն ուղղված ակտիվ տարածքային քաղաքականության մշակման և իրականացման միջոցով դրանց մեղմումը հռչակվել է որպես ՀՀ կառավարության հիմնական ռամավարական գերակայություններից մեկը: ՀՀ ազգային անվտանգության ռազմավարությունը շարունակվող ուրբանիզացիան, կամ այլ կերպ ասած քաղաքակենտրոնացումը, դիտում է որպես ազգային անվտանգության սպառնալիք, որի հիմնական պատճառն է համարվում քաղաքային և գյուղական շրջանների զարգացման անհամաչափությունը: Սակայն այստեղ հարկ է նշել, որ նախ և առաջ, ըստ պաշտոնական վիճակագրության՝ ՀՀ ուրբանիզացման մակարդակը, մինչև այս հայեցակարգի ընդունումը (2010թ.), տարեցտարի գնալով նվազել է, այսինքն՝ այստեղ անհասկանալի է վերոնշյալ անընդհատ շարունակվող քաղաքակենտրոնացում կամ ուրբանիզացիա երևույթի բնութագրումը: Եվ երկրորդ հերթին, ինչպես արդեն նշել ենք աշխատանքում, վերջին տարիներին ՀՀ բնակչության ներքին միգրացիաները ուղղված են

ոչ թե ընդհանուր վերցրած դեպի ՀՀ քաղաքային բնակավայրեր, այլ կոնկրետ դեպի Երևան և մայրաքաղաքամերձ քաղաքները: Իսկ այլ քաղաքների և գյուղական շրջանների միջև եղած զարգացման անհամաչափությունները այնքան չեն, որ առաջացնեն բնակչության ներքին միգրացիոն ինտենսիվ տեղաշարժեր գյուղական բնակավայրերից դեպի այդ քաղաքներ: Մեր կարծիքով իրականում ուրբանիզացման մակարդակի բարձրացումը գալիք տարիներին անգամ կարելի է համարել նպաստավոր տարբերակ, քանի որ գյուղական տնտեսությունների խոշորացման և գյուղատնտեսության արդյունավետության բարձրացման առկա միտումներին զուգահեռ գյուղական շրջաններում անխուսափելիորեն առաջանալու է աշխատուժի ավելցուկ: Այդ պատճառով ՀՀ տարաբնակեցման համակարգի առաջնահերթ խնդիրը պետք է լինի Երևանից բացի այլ քաղաքների հրատապ զարգացումը, դրանցում նոր աշխատատեղերի ստեղծումը, տնտեսության հատկապես աշխատատար ճյուղերի և արտադրությունների տեղաբաշխում ՀՀ քաղաքներում: Իհարկե, գյուղական շրջաններում սպասվող աշխատուժի ավելցուկը կարելի է սպառել նաև հենց այդ համայնքներում վերամշակող արդյունաբերության ճյուղերի զարգացման միջոցով:

3) Սահմանամերձ գյուղական շրջանների սոցիալ-տնտեսական զարգացման հետ մնալու պատճառով զգալի չափերի հասնող անցանկալի Էմիգրացիոն հոսքերի, Ժողովրդագրական իրավիճակի վատթարացման կանխումը, որը ենթադրում է այդ շրջանների գյուղական բնակավայրերի սոցիալական պաշտպանության ոլորտի ենթակառուցվածքների վերականգնում, որակյալ մասնագետների հեռացման կանխարգելում, բնակչության մարդկային զարգացման հնարավորությունների մեծացում, ինչպես նաև ՀՀ ազգային անվտանգության և երկրի կայուն զարգացման շահերին համապատասխանող ներքին միգրացիոն հոսքերն ուղղորդող քաղաքականությունների վարում:

4) Հանրապետության մտավոր և գիտական ներուժի, ինչպես նաև որակյալ աշխատուժի զգալի ծավալների հասնող արտահոսքի նվազեցումը, որը ենթադրում է հանրապետության գիտակրթական ենթակառուցվածքների, ինչպես նաև տնտեսության գիտատար ճյուղերի համալիր զարգացման ուղղված քաղաքականության վարում: Պետությունը պետք է զարգացնի կապը գիտության և տնտեսության միջև, որպեսզի

բուհը ավարտող արդեն պատրաստի մասնագետը իր զբաղվածությունը գտնի ՀՀ աշխատաշուկայում, ոչ թե ուղիներ փնտրի արտերկիր տեղափոխվելու: Տնտեսության մեջ հարկավոր է առաջնահերթություն տալ գիտատար ճյուղերին:

5) Տնտեսական, այդ թվում հարկային, դրամավարկային ու մաքսային այնպիսի քաղաքականության վարումը, որը թույլ կտա նվազեցնել տնտեսական դրդապատճառներով էմիգրացիոն հոսքերը, ինչպես նաև խթանել ՀՀ քաղաքացի աշխատանքային միգրանտների վաստակած ֆինանսական միջոցների արդյունավետ ներդրումը ՀՀ-ում: Տարբեր փաստաթղթերի վրա ամրագրված է, որ ՀՀ-ն կարևորում է մրցակցային միջավայրի բարելավումը, տնտեսության ճյուղերի մենաշնորհացման կանխումը, տնտեսության ստվերային մասի կրճատումը՝ որպես տնտեսական առաջընթացի ապահովման և ազատական տնտեսության կայացման երաշխիք: Սրանք ՀՀ տնտեսության մեջ առկա այն խնդիրներն են, որոնք հանդիսանում են բնակչության արտագաղթի հիմնական տնտեսական պատճառները: Սակայն այս խնդիրների ձևակերպումը պաշտոնական փաստաթղթերում դեռևս չի նշանակում կամք և ցանկություն լուծելու դրանք, առավել ևս, որ չեն նշվում դրանց իրագործման համար անհրաժեշտ կոնկրետ միջոցառումներ և գործողություններ: Դրա ապացույցն է այն հանգամանքը, որ ինչպես տարիներ առաջ, այնպես էլ հիմա, սոցիոլոգիական տարբեր հետազոտությունների ժամանակ ՀՀ-ից արտագաղթողները իրենց միգրացիոն որոշման կայացման մեջ որպես պատճառ հաճախակի նշել են հենց վերոնշյալ խնդիրների առկայությունը: Իսկ դա նշանակում է, որ չնայած ձևակերպումներին, կա՛մ չեն կատարվում անհրաժեշտ միջոցառումներ այդ խնդիրների լուծման ուղղությամբ, կա՛մ կատարվող քայլերն ամենևին արդյունավետ չեն:

Ներկա փուլում, երբ մեծ մասշտաբների են հասել աշխատանքային միգրացիաները հրատապ են դարձել պետության կողմից դրանց կարգավորման խնդիրները: Աշխատանքային միգրանտների մի մասը արտերկրում գտնվում են առանց օրինական փաստաթղթերի և աշխատանքային իրավունքի, ինչը ավելի է մեծացնում իրավիճակի ռիսկայնությունը: Նշված բացասական երևույթներն ավելի են կարևորում աշխատանքային միգրացիայի գործընթացներում պետության միջամտության անհրաժեշտությունը, այդ երևույթի իրավաօրենսդրական կարգավորվածությունը,

ինչպես նաև արտերկրում ՀՀ քաղաքացիների իրավունքների և շահերի պաշտպանության պետական համակարգի արդյունավետության բարձրացումը: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ ՀՀ աշխատանքային միգրանտների գերակշիռ մասը մեկնում է ՌԴ, ապա ԵՏՄ-ին ՀՀ անդամակցումը բավականին հեշտացրեց հայ միգրանտների բնակվելու և աշխատելու իրավունքի հետ կապված խնդիրները ԵՏՄ անդամ երկրներում և հատկապես՝ Ռուսաստանի Դաշնությունում:

Սակայն ՀՀ անդամակցումը ԵՏՄ-ին աշխատանքային միգրացիայի տեսանկյունից հնարավոր է ունենա բացասական հետևանքներ, քանի որ ինչպես ցույց են տալիս տարբեր հետազոտություններ, ներկայումս առկա է այն միտումը, որ աշխատանքային միգրանտները, որոնք անընդհատ դրամական օգնություն են ուղարկում ՀՀ-ում ապրող ընտանիքի անդամներին, ինչպես նաև երկար ժամանակ զրկվում են իրենց ընտանիքի կողքը լինելու հնարավորությունից, որոշում են կայացնում իրենց մոտ տանել նաև ընտանիքի անդամներին, դրանով՝ բավականին կրճատելով ֆինանսական ծախսերը և լուծելով ընտանիքից երկար ժամանակով բացակայելու խնդիրը: Այսինքն տեղի է ունենում աշխատանքային միգրանտների վերափոխում մշտական միգրանտների, որը բնականաբար չի բխում մեր երկրի շահերից: Հատկապես բավականին անհանգստացնող է այն հագամանքը, որ վերջերս ՌԴ-ում շրջանառության մեջ է մտել մի օրենքի քննարկում, ըստ որի ԽՍՀՄ-ում ծնվածներն արագացված կարգով կարող են դառնալ ՌԴ քաղաքացի: Այս օրենքի ընդունումը կարող է ավելի մեծացնել ՀՀ բնակչության արտագաղթի ծավալները դեպի ՌԴ, ինչպես նաև ավելի հավանական դարձնել ՀՀ-ից դեպի ՌԴ մեկնող աշխատանքային միգրացիաների վերափոխումը մշտական միգրանտի: Արդյունքում ստացվում է, որ մոտակա տարիներին արտաքին միգրացիոն հոսքերը զգալի չափով կանխորոշվելու են արտերկրում հատկապես ՌԴ-ում կուտակված աշխատանքային միգրանտների միգրացիոն վարքագծով, քանի որ ներկայումս ՀՀ-ում բնակվում են ժամանակավոր-աշխատանքային միգրանտների ընտանիքի անդամները՝ մի քանի հարյուր հազար մարդիկ, որոնք պոտենցիալ միգրանտներ են և ցանկացած պահի և որոշակի հանգամանքներում կարող են համալրել արտագաղթողների շարքերը: Այս երևույթն ու նշված առկա միտումները հղի են մեր պետության և պետականության

համար խիստ վտանգավոր հետևանքներով, որոնք ներառում են հասարակական կյանքի բոլոր ոլորտները:

Հայաստանի սոցիալ-տնտեսական իրավիճակն այնպիսին է, որ արտագաղթն անխուսափելի է և ունի օբյեկտիվ պատճառներ: Սակայն խնդիրը դրանց մասշտաբների ու անկազմակերպ լինելու մեջ է: Հատկապես մեծ է պետական կարգավորման անհրաժեշտությունը աշխատանքային միգրացիայի պարագայում: Մինչև 21-րդ դարի սկիզբը հայկական կառավարությունները չեն էլ փորձել վերահսկողության տակ վերցնել աշխատանքային միգրացիան: Այնինչ, շատ պետություններ, օրինակ Թուրքիան, Ֆիլիպիններ, Հարավային Կորեա և այլն, հսկայական դրամական եկամուտներ են ստանում ի հաշիվ աշխատուժի կազմակերպված արտահանման [13]: Բացի դրանից, այդ երկրի այն քաղաքացիները, որոնք մեկնել են այլ պետություններ գումար վաստակելու, օգտվում են իրենց պետությունների իրավական պաշտպանությունից և աշխատում են պայմանագրերով՝ օրինական հիմունքներով: Վերջին 20 տարիներին հայկական աշխատանքային միգրացիան գրեթե ամբողջովին իրականացվել է աշխատողների անհատական նախաձեռնությամբ, առանց հատուկ պայմանագրերի, և որպես կանոն, լիովին անօրինական հիմունքներով: Սա նշանակում է, որ հայ աշխատանքային միգրանտները չունեին ոչ մի իրավական պաշտպանություն այդ երկրներում և այդ պատճառով ներկայացվում էին որպես ռիսկային խմբեր, դրա հետևանքով էլ դժվարանում էին աշխատանք գտնել և սովորականից ցածր էին վարձատրվում: Ինչպես արդեն նշվեց միայն 2000թ.-ին ՀՀ կառավարությունը մշակեց քաղաքականություն՝ աշխատանքային միգրացիայի ոլորտի համար և ընդունեց համապատասխան օրենք: Սակայն այդ ժամանակ արտագաղթողների բացարձակ մեծամասնությունն արդեն վաղուց հեռացել էր երկրից և ինքնուրույն կերպով տեղավորվել արտերկրում: Չնայած նշված օրենքի և այլ օրենքների և հայեցակարգերի ընդունմանը, ՀՀ միգրացիոն խնդիրների լուծման գործում դեռևս նշանակալից առաջընթացներ հնարավոր չէ նկատել: Կան իհարկե որոշ առաջխաղացումներ, սակայն դրանք այնքան աննշան են գոյություն ունեցող մարտահրավերների համեմատ, որ Էական ազդեցություն չեն գործում միգրացիոն գործընթացների վրա:

ՀՀ ներկայիս իրավիճակում բնակչության միգրացիայի կարգավորման գործում, բացի պետության կողմից կատարվող և ծրագրված միջոցառումների և գործողությունների, կարծում ենք հարկավոր է առաջին հերթին դրսևորել քաղաքական կամք: Սա հատկապես հարկավոր է ՀՀ-ից բնակչության շարունակվող արտագաղթի սուբյեկտիվ պատճառները վերացնելու համար: Երկրում տիրող կոռուպցիոն համակարգը, տնտեսության տարբեր ճյուղերում առկա մենաշնորհային իրավիճակը, քաղաքական իշխանությունների կոմից կառավարման ավտորիտար միտումները և այլ հիմնախնդիրներ հանդիսանում են այն սուբյեկտիվ գործոնները, որոնք կապված չեն ՀՀ աշխարհաքաղաքական դիրքի, տնտեսական ներուժի կամ այլ օբյեկտիվ իրողությունների հետ, սակայն մեծապես ազդում են մարդկանց միգրացիոն այնպիսի որոշումներ կայացնելու գործում, որոնք հակասում են ՀՀ պետական շահին և ազգային անվտանգությանը:

ԵՉՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1) Մեր կողմից ներկայացրած ՀՀ բնակչության միգրացիայի աշխարհագրական ուսումնասիրության ուղղություններն ու մոտեցումները հնարավորություն են տալիս համակարգված ձևով բացահայտել բնակչության միգրացիայի պատճառահետևանքային կապերն ու տարածաժամանակային օրինաչափությունները:

2) Անկախության տարիներին ՀՀ-ից բնակչության արտագաղթը ժամանակի և տարածության մեջ կրել է համընդհանուր և համատարած բնույթ, այսինքն՝ քննարկվող ամբողջ ժամանակահատվածում ՀՀ բոլոր մարզերի, քաղաքների և ՆՎՇ-երի գյուղական բնակչության ՄՍ-ն եղել է բացասական: Միգրացիայի միտումներն ու դրանք պայմանավորող գործոնները տարբեր կերպ են դրսևորվում Երևանում, նրա հարակից և ծայրամասային-լեռնային գոտիներում:

3) ՀՀ բնակչության արտաքին ՄՍ-ի բացասական ցուցանիշները 25 տարվա ընթացքում ունեցել են ինչպես բարձրացման փուլեր (1992-1994թթ., 2008-2010թթ.), որոնք ժամանակային առումով համընկնում են տնտեսական ճգնաժամի տարիների հետ, այնպես էլ՝ նվազման փուլեր (1999-2002թթ., 2012-2013թթ.), որոնք համընկնում են տնտեսական ակտիվացման տարիների հետ:

4) ՀՀ տարաբնակեցման համակարգում անկախության տարիներին արտագաղթի առավել մեծ ծավալներ են ունեցել վերամշակող արդյունաբերական խոշոր կենտրոնները (Գյումրի, Վանաձոր, Չարենցավան, Սպիտակ և այլն), ինչպես նաև՝ միագործառույթային քաղաքները: ՀՀ մարզերից արտագաղթի առավել մեծ ծավալներ ունեցել են արդյունաբերական և քաղաքաբնակ Լոռու և Շիրակի մարզերը:

5) Համադրելով ՀՀ բոլոր քաղաքների և ՆՎՇ-երի գյուղական բնակչության ՄՍ-ի ցուցանիշները՝ առանձնացրել ենք ընդհանուր գծերով բնութագրվող քաղաքների և գյուղական շրջանների 4 տիպեր:

6) Բնակչության միգրացիոն տրամադրվածությունները բարձր են բոլոր մարզերում, տարբեր տիպի և մեծության բնակավայրերում, այսինքն՝ համատարած բնույթ են կրում: Ըստ հարցման արդյունքների բնակչության 40-50%-ը ցանկություն է հայտնել հարմար առիթի և հնարավորության դեպքում բնակվելու մեկնել այլ երկիր: Կրթական համեմատաբար բարձր ցենզ ունեցող քաղաքային բնակչությունը նախընտրում է մեկնել

եվրոպական զարգացած երկրներ և ԱՄՆ, իսկ գյուղական և ոչ այդքան բարձր կրթական ցենզ ունեցողները՝ ՌԴ:

7) Բնակչության արտագաղթի տրամադրվածությունների ձևավորման գործում համեմատաբար մեծ են սոցիալ-տնտեսական (աշխատատեղերի բացակայություն, ցածր աշխատավարձ) և սոցիալ-քաղաքական (անարդարություն, օրենքների չկիրառում և այլն) գործոնների ու հիմնախնդիրների դերն ու ազդեցությունը, իսկ համեմատաբար թույլ՝ աշխարհաքաղաքական և Էկոլոգիական բնույթի գործոնների և հիմնախնդիրների դերն ու ազդեցությունը: Արտագաղթի նկատմամբ բնակչության միգրացիոն տրամադրվածությունների առաջացման գործոններն ու հիմնախնդիրները հիմնականում համապետական բնույթ են կրում, իսկ ներքին միգրացիոն տեղաշարժերինը՝ տեղական-բնակավայրային:

8) Խորհրդային տարիների համեմատությամբ ներքին միգրացիայի ծավալները նվազել են, իսկ ուղղութունները՝ փոխվել: Միգրացիան գրեթե ամբողջությամբ կորցրել է ուրբանիզացման գործընթացներում նախկինում ունեցած կարևոր դերը: Հետխորհրդային առաջին տասնամյակում որոշակի դեր են խաղացել քաղաքից գյուղ ուղղությամբ միգրացիաները: Ներկայումս ՀՀ բնակչության ներքին միգրացիոն տեղաշարժերը հիմնականում ունեն միակենտրոն բնույթ, որն ավելի է մեծացնում տարաբնակեցման համակարգում առկա տարածական և կառուցվածքային անհամաչափությունները Երևանի ու մնացած տարածաշրջանների և ավելի ցածր կարգի կենտրոնների միջև:

9) Անկախության առաջին տասնամյակում մեծամասամբ արտագաղթում էր քաղաքային բնակչությունը, իսկ վերջին տարիներին մեծացել է նաև գյուղական բնակչության արտագաղթի ծավալները: Մոտակա մեկ-երկու տասնամյակում նշված միտումները կարող են մեծանալ՝ գյուղատնտեսության համակենտրոնացման և ինտենսիվացման հետևանքով գյուղական վայրերում ազատ աշխատուժի զգալի քանակի գոյացման հետ կապված: ՀՀ-ի տարբեր քաղաքներում և համեմատաբար խոշոր գյուղական համանքներում նոր աշխատատեղերի չստեղծման պարագայում դրանց մեծ մասը կարտագաղթի:

10) Բնակչության միգրացիոն հոսքերի բացասական ազդեցությունը հսկայական է ՀՀ բոլոր մարզերի՝ հատկապես Լոռու և Շիրակի մարզերի ժողովրդագրական իրավիճակների վրա (ցածր բնական աճ, սեռատարիքային անհամասնություններ,

բնակչության ծերացում և այլն): Ժողովրդագրական առումով առավել խոցելի են ծայրամասային և սահմանամերձ Կապանի, Մեղրու, Նոյեմբերյանի և Տավուշի ՆԿՇ-երի քաղաքային և գյուղական բնակավայրերը, Լոռու մարզի քաղաքային բնակավայրերը, որոնցում բնակչության թիվը նվազում է ոչ միայն մեխանիկական, այլ նաև՝ բնական շարժի միջոցով:

11) Տնտեսական և քաղաքական առումներով առավել ակտիվ և կրթական բարձր ցենզ ունեցող երիտասարդ մասնագետների արտագաղթը նվազեցնում է ՀՀ և հատկապես նրա լեռնային և սահմանամերձ համեմատաբար նոսր բնակեցված մարզերի ժողովրդագրական և սոցիալ-տնտեսական ներուժը և դրանով պայմանավորված՝ երկրի աշխարհաքաղաքական և աշխարհատնտեսական դերը տարածաշրջանում:

12) Մոտակա տարիներին բնակչության միգրացիայի առկա միտումները պահպանվելու են, քանի դեռ չեն վերացել միգրացիոն հոսքերը ձևավորող սոցիալ-տնտեսական և քաղաքական գործոններն ու պայմանները: Միգրացիոն հոսքերի կառուցվածքում կմեծանա առավել գյուղաբնակ լեռնային և սահմանամերձ գոտու բնակչության միգրացիոն ակտիվությունը: Դա նշանակում է, որ արտագաղթի կրճատմանն ուղղված սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրերի (ներդրումներ, նոր աշխատատեղեր ու ենթակառուցվածքներ, հարկային զեղչեր և այլն) և միգրացիայի կարգավորման հայեցակարգերի մշակման դեպքում անհրաժեշտ է հաշվի առնել ՀՀ տարածաշրջանային առանձնահատկությունները:

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1) ՀՀ բնակչության միգրացիայի լիարժեք ուսումնասիրության համար անհրաժեշտ է բարելավել միգրանտների հաշվառման և գրանցման գործընթացը: Աշխարհագրական ուսումնասիրության համար հատկապես կարևոր է բոլոր բնակավայրերում և համանքներում կազմակերպել միգրացիաների սոցիալ-ժողովրդագրական տվյալների (սեռ, տարիք, կրթություն և այլն) և հնարավոր ուղղությունների հաշվառումը: Հարկավոր է մարզերի մակարդակով հաշվառման ենթարկել ոչ միայն արտաքին, այլ նաև՝ ներմարզային միգրացիաները:

2) ՀՀ բնակչության միգրացիայի կարգավորման հայեցակարգերի և ռազմավարության մշակման և իրականացման ժամանակ անհրաժեշտ է հաշվի առնել տարածաշրջանային առանձնահատկությունները՝ առաջնահերթ ուշադրություն դարձնելով միգրացիոն առումով առավել լարված և խոցելի քաղաքներին և գյուղական շրջաններին:

3) ՀՀ սոցիալ-տնտեսական զարգացման համապետական, մարզային և համանքային ծրագրերում առաջնահերթ համարել բնակչության արտագաղթն առաջացնող կամ դրան նպաստող համապետական, մարզային և համայնքային բնույթի հիմնախնդիրների լուծմանն ուղղված միջոցառումների մշակումն ու իրականացումը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. **Աբեյան Պ.**, Հայաստանի բնակչությունը նախախորհրդային և խորհրդային շրջաններում, Պետհրատ., Երևան, 1930, 155 էջ
2. **Աղաջանյան Յ. Ի.** և ուրիշներ, Տնտեսական աճի որակը, Երևան, «Տնտեսագետ» հրատարակչություն, 2014, 86 էջ
3. **Ավագյան Գ.**, Հայկական ՍՍՀ բնակչությունը, Երևանի Համալսարանի հրատարակչություն, Երևան, 1975, 302 էջ
4. **Ավետիսյան Խ.**, Սովետական Հայաստանի բնակչության և բնակավայրերի աշխարհագրություն, Հայկական ՍՍՀ ԳԱ հրատարակչություն, Երևան, 1987, 198 էջ
5. **Գաբրիելյան Ն.**, Շիրակի մարզի բնակչության միգրացիոն շարժերի աշխարհագրական վերլուծությունը, Հեղինակային հրատարակչություն, Երևան, 2006, 104 էջ
6. **Գալստյան Մ.**, ՀՀ ազգային փոքրամասնությունների միգրացիան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն», Երևան, 2015, 207 էջ
7. **Եգանյան Գ., Եգանյան Ռ.**, Հայաստանի միգրացիոն զարգացումները. միտումներ ու հիմնախնդիրներ, ՎԷՄ համահայկական հանդես, № 2 , 2010, 11-25 էջեր
8. **Եգանյան Ռ., Կուլումբյան Կ.**, Ետխորհրդային Հայաստանի սոցիալ-ժողովրդագրական մարտահրավերները, «Գինդ», Երևան, 2004, 64 էջ
9. **Երիզավրյան Մ., Մկրտչյան Հ., Մարտիրոսյան Ա.**, ՀՀ աշխատանքի շուկայի վերլուծություն (գիտահետազոտական աշխատանք), «Ասողիկ» հրատարակչություն, 2010, 200 էջ
10. **Թադևոսյան Չ. և ուրիշներ**, Արտագնա աշխատանքային միգրացիա. գնահատականներ և մտորումներ, Երևան, «Ամբերդ» մատենաշար, 2014, 80 էջ
11. **Թովմասյան Վ.**, Ժողովրդագրական մարտահրավերները և բնաչության հեռանկարները (ՀՀ-ի, ՌԴ-ի և ԱՄՆ-ի օրինակով), «Գասպրինտ» հրատարակչություն, Երևան, 2013, 216 էջ

12. **Խառատյան Ա.**, Բնակչության տեղաշարժը և տնտեսության զարգացման գործընթացը անցման ժամանակաշրջանում, ատենախոսություն, Երևան, 2013, 121 էջ
13. **Խոջաբեկյան Վ.**, Հայաստանի բնակչության վերարտադրությունը և տեղաշարժերը XIX-XX դարերում, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչություն, Երևան, 2001, 480 էջ
14. **Խոջաբեկյան Վ.**, Գյուղական բնակչության տեղաշարժերը երկրի սոցիալ-տնտեսական զարգացման տարբեր փուլերում, Հայաստանի ժող. Տնտ., № 3, Երևան, 1989, 15-24 էջեր
15. **Խոջաբեկյան Վ.**, Հայկական ՍՍՀ բնակչությունը և աշխատանքային ռեսուրսների վերարտադրության արդի պրոբլեմները, Երևան, 1976, 347 էջ
16. **Կարապետյան Ա., Եգանյան Ռ., Շահնազարյան Ն.**, Հայաստանի բնակչության միգրացիան ետխորհրդային ժամանակահատվածում, UNFPA, Երևան, 1996, 31 էջ
17. **Համբարձումյան Ա., Ղարիբյան Գ. և ուրիշներ**, ՀՀ աշխատաշուկայի վերլուծություն, Երևան, 2010, 199 էջ
18. Հայաստանի ազգային հաշիվները, 1990-1997թթ., Վիճակագրական նյութերի ժողովածու, ՀՀ ԱՎԾ, Երևան, 1998, 62-206 էջեր
19. Հայաստանը թվերով, ՀՀ ԱՎԾ, Երևան, 2002-2016
20. Հայաստանի ժողովրդագրական ժողովածու, ՀՀ ԱՎԾ, Երևան, 2005-2016
21. Հայաստանի կանայք և տղամարդիկ, ՀՀ ԱՎԾ, Երևան, 2004-2016
22. ՀՀ 1991-1998թթ.-ի արտաքին միգրացիայի գործընթացի ուսումնասիրություն, ՀՀ ԱՎԾ, TACIS, Եվրոստատ, «Լուսաբաց-04», Երևան, 1999, 55 էջ
23. ՀՀ արտաքին և ներքին միգրացիայի ընտրանքային հետազոտություն, ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, ՀՀ ԱՎԾ, Երևան, 2008, 99 էջ
24. ՀՀ մարզերը և Երևան քաղաքը թվերով, ՀՀ ԱՎԾ, Երևան, 1999-2016
25. ՀՀ միգրացիայի պետական կարգավորման քաղաքականության հայեցակարգ, ՀՀ կառավարության դեկտեմբերի 30-ի թիվ 51 արձանագրային որոշում, Երևան, 2010թ.
26. ՀՀ սոցիալական պատկերը և աղքատությունը, ՀՀ ԱՎԾ, Երևան, 1999-2016

27. ԶՅ սոցիալական վիճակը, ԶՅ ԱՎԾ, Երևան, 2001-2016
28. ԶՅ վիճակագրական տարեգիրք, ԶՅ ԱՎԾ, Երևան, 2001-2016
29. ԶՅ մարդահամար 2001թ., ԶՅ ԱՎԾ, Երևան, 2003
30. ԶՅ մարդահամար 2011թ., ԶՅ ԱՎԾ, Երևան, 2013
31. ԶՅ 2014թ. գյուղատնտեսական համատարած հաշվառում, ԶՅ ԱՎԾ, Երևան, 2016
32. **Ղարիբյան Գ., Իսահակյան Ռ.**, Միգրացիան արտագաղթի տեսակ և դրա զարգացումները Հայաստանի Հանրապետությունում, ԵՊՀ տարեգիրք 2013, Տնտեսագիտության ֆակուլտետ, ԵՊՀ հրատ., 2014, 55-70 էջեր
33. **Մանասյան Հ.**, ԶՅ բնակչության միգրացիայի ժողովրդագրական հետևանքները, ԵՊՀ ՈԻԳԸ գիտական հոդվածների ժողովածու, ԵՊՀ, Երևան, 2016, 65-68 էջեր
34. **Մանասյան Հ.**, ԶՅ բնակչության միգրացիայի աշխարհագրական ուսումնասիրության հիմնահարցերը, «Ֆինանսեր և Էկանոմիկա» թիվ 3-4, Երևան, 2017, 96-99 էջեր
35. **Մանասյան Հ.**, ԶՅ բնակչության միգրացիայի և տարաբնակեցման փոխադարձ կապերը, ԶՅ տնտեսության զարգացման և տեղաբաշխման ժամանակակից հիմնախնդիրները, Հանրապետական գիտաժողովի նյութեր, ԵՊՀ հրատարակչություն, Երևան, 2015, 116-120 էջեր
36. **Մանասյան Հ., Ավագյան Ա., Մանասյան Մ.**, ԶՅ բնակչության միգրացիան և ժողովրդագրական իրավիճակի տարածաշրջանային առանձնահատկությունները, «Ֆինանսեր և Էկանոմիկա», Երևան, 2017, 118-121 էջեր
37. **Մանասյան Հ., Մանասյան Մ.**, ԶՅ բնակչության միգրացիայի աշխարհագրական առանձնահատկությունները, ՀՊՄՀ հանրապետական գիտաժողովի նյութեր, 2015, 185-194 էջեր
38. **Մանասյան Հ., Մանասյան Մ.**, ԶՅ բնակչության միգրացիայի սոցիալ-աշխարհագրական վերլուծության հիմնական ուղղությունները, Գիտությունը և կրթությունը Արցախում, 2016, ԵՊՀ Երևան, 123-131 էջեր
39. **Մանասյան Հ., Մանասյան Մ.**, ԶՅ լեռնային տարածաշրջանների կայուն զարգացման հիմնահարցերը (Սյունիքի մարզի օրինակով), ԵՊՀ Տարեգիրք 2013, Տնտեսագիտության ֆակուլտետ, ԵՊՀ հրատարակչություն, Երևան, 2014, 671-680 էջեր

- 40 **Մանասյան Մ.**, Հասարակական-աշխարհագրական հետազոտությունների մեթոդները, ԵՊՀ հրատարակչություն, Երևան, 2008, 260 էջ
- 41 **Մանասյան Մ.**, Բնակչության աշխարհագրություն, ԵՊՀ հրատարակչություն, Երևան, 2011թ., 296 էջ
- 42 **Մանասյան Մ.**, ՀՀ Տարաբնակեցման համակարգը, ԵՊՀ հրատարակչություն, Երևան, 2005թ, 400 էջ:
- 43 **Մելքունյան Ա.**, Ընդհանուր տնտեսական աշխարհագրություն, «Տնտեսագետ», Երևան, 2005, 268 էջ
- 44 Միգրացիան և զարգացումը. Հայաստանում առկա իրավիճակի ուսումնասիրություն, Աշխատանքի միջազգային կազմակերպություն (ԱՄԿ), Երևան, 2009, 153 էջ
- 45 Միգրացիա և հմտություններ. Հայաստանի ազգային զեկույց, Եվրոպական կրթական հիմնադրամ, Թուրին, 2012, 111 էջ
- 46 **Մինասյան Ա.**, Արտագաղթի նվազեցման և ներգաղթի խրախուսման հրամայականը, ԵՊՀ Տարեգիրք 2013, Երևան, ԵՊՀ հրատ., 2014, 5-10 էջեր
- 47 **Պողոսյան Գ.**, Հայ հասարակությունը XXI դարեսկզբին, «Լուսաբաց» հրատարակչություն, Երևան, 2006, 376 էջ
- 48 **Պոտոսյան Ա.**, ՀՀ գյուղական բնակչությունը և բնակավայրերը, «Աստղիկ» գրատուն, Երևան, 2013, 216 էջ
- 49 **Պոտոսյան Ա.**, ՀՀ բնակչության միգրացիայի առանձնահատկությունները, Աշխարհագրական գիտությունը Հայաստանում, ներկան և ապագան, Երևան, 2006թ., 241-245 էջեր
- 50 **Սարգսյան Յ., Անտոնյան Զ., Խաչատրյան Կ.**, Միգրացիա. Միտումներ, հետևանքներ, Հեղինակային հրատարակչություն, Երևան, 2013, 72 էջ
- 51 **Սարգսյան Յ., Մարկոսյան Ա.**, Հայաստանի տնտեսության վերափոխումները և վերելքի հեռանկարները, Երևան, «Չանգակ» հրատարակչություն, 2014, 552 էջ
- 52 **Վարտիկյան Ա.**, ՀՀ միգրացիոն շարժերի պատմական արմատները, «Բանբեր», ԵՊՀ, Երևան, 2006, 186-194 էջեր

- 53 **Ֆաիրադյան Մ.**, Բնակչության կառուցվածքի և վերարտադրության տարածաշրջանային հիմնախնդիրները ՀՀ-ում, հեղինակային հրատարակություն, Երևան, 2010, 496 էջ
- 54 **Արությունյան Լ.**, Новые перипетии армянской миграции: аккумулятивная причинность и возможные последствия: ԵՊՀ «Տարեգիրք» 2011, Երևան, 2011, 54-59 էջեր
- 55 **Богданова Л., Иваськова О., Шукина А.**, Социально-географическая оценка результатов этнической миграции (на примере Твери), Вестник Москв. университет, № 1, 2004, сс. 59-63
- 56 **Богданова Л., Шукина А.**, Географическое изучение миграции населения на региональном и муниципальном уровне, Сборник научных статей, Смоленск, 2016, сс. 542-549
- 57 **Եգանյան Բ., Դավթյան Լ.**, Оценка внешней миграционной ситуации в Республике Армения, Сборник материалов международного семинара “Демография Армении на стыке тысячелетий”, Дилижанские чтения 2000, Ереван, 2001, с.32
- 58 **Կարապետյան Ս. Ա., Օվսեպյան Բ.Լ.**, Региональные особенности социально-демографического развития Армянский ССР, Ереван, Издательство “Айастан”, 1986, с. 216
- 59 **Կարապետյան Բ.Ս.**, Формирование населения городов Армении, Ереван, Издательство “Гитутюн”, 2015, с. 412
- 60 **Макарова Л., Морозова Г., Тарасова Н.**, Региональные особенности миграционных процессов в СССР, “Наука”, Москва, 1986, с. 121
- 61 **Մանասյան Ա., Մանասյան Մ.**, Устойчивое развитие горных регионов и география, Modern problems of geography and anthropology, Proceedings of International Conference, Tbilisi, 2015, pp. 321-323
- 62 Методология и методы изучения миграционных процессов, Международное учебное пособие, Москва, 2017, с. 369
- 63 **Перевендеев В.И.**, Методы изучения миграции населения. М., Изд-во “Наука”, 1975, с. 231

- 64 **Погосян А.**, Армянские мигранты в России: Разоблаченные чужие, Независимый информационно-аналитический журнал № 6 (9), 2011, с. 42
- 65 **Покшишевский В.В.**, Население и география. М., Изд-во «Мысль», 1978, с. 315
- 66 **Потосян А., Манасян М., Хоецян А.**, Особенности миграции населения республики Армения, Проблемы миграции и опыт ее регулирования в полиэтничном Кавказском регионе, Ставрополь, 2003, сс. 217-221
- 67 **Рыбаковский Л.**, Миграция населения (вопросы теории), Москва, ИСПИ РАН, 2003, с.238
- 68 **Савоскул М.**, Территориальные системы международных миграций населения, Вестник Московского университета, Серия 5, География, 2015, сс.11-18
- 69 **Саркисян Г.**, Население Восточной Армении в XIX-начале XX в., Ереван, Издательство «Гитутюн» НАН РА, 2002, с.212
- 70 **Фаградян М., Галстян К.**, Современные проблемы развития демографической ситуации в Республике Армении, сборник материалов международного семинара «Демография Армении на стыке тысячелетий», Дилижанские чтения 2000, Ереван, 2001, с. 71
- 71 **Ходжабекян В., Асатрян Б.**, Демографические аспекты урбанизации в Армянской ССР, Ереван, 1990, с. 188
- 72 **Хорев Б.С., Чапек .Н.**, Проблемы изучения миграции населения. М., Изд-во «Мысль», 1978, с. 251
- 73 **Ягельский А.**, География населения. Сокр.пер. с польского. М.,«Прогресс», 1980, с. 383
- 74 **Bauer T., Zimmerman K.F.**, Causes of International Migration, A Survey Crossing Borders, Regional and Urban Perspectives on International Migration, Aldershot, 1998, pp. 95-127
- 75 **Castles S, Miller MJ.**, The Age of Migration. Houndmills, Basingstoke, Hampshire and London, MacMillan Pres ltd, 2003, pp. 369
- 76 **Hamilton L, Mitchell L., Mangan A.**, Contemporary Issues in Management, Edward Elgar Publishing, Northampton, 2014, pp. 232

- 77 **Hein de Haas**, Migration and Development: A Theoretical Perspective, International Migration Institute, Oxford, 2008, pp. 61
- 78 **Jennissen R.**, Causality Chains in the International Migration Systems Approach, Popul Res Policy Rev., 2007, pp. 411-436
- 79 **Lee E.S.**, A Theory of Migration, Demography, Population Association of America, 1966, pp. 47-57
- 80 **Marzpanyan H., Astvatsaturov S., Markosyan R.**, The Interrelation Between Migration and Human Capital Reproduction in Armenia, YSU Press, Yerevan, 2015, pp. 112
- 81 **Massey D. S., Arango J., Hugo G., Kouaouci A., Pellegrino A., Taylor J.E.**, Theories of International Migration, A Review and Appraisal, Population and Development Review, 1993, pp. 431-466
- 82 **Massey D.S., Arango J., Hugo G., Kouaouci A., Pellegrino A., Taylor J.E.**, Worlds in Motion: Understanding International Migration at the End of the Millennium, Oxford, Clarendon Press, 1998, pp. 362
- 83 **Passaris C.**, Immigration and the Evolution of Economic Theory, International Organization of Migration, Wiley, 1998, pp. 525-542
- 84 **Piore. M. J.**, Birds of Passage: Migrant Labor and Industrial Societies, Cambridge, Cambridge University Press, 1979, pp. 229
- 85 **Poghosyan G.**, Armenian Migration: Articles and Researches Findings of Recent Years on Migration Issues in Armenian, NAS of the RA, Institute of Philosophy, Sociology and Law, Europrint, Yerevan, 2014, pp. 328
- 86 **Ravenstein G.E.**, The Laws of Migration (First Paper), Journal of the Royal Statistical Society. London, 1885, pp. 167-235
- 87 **Ravenstein G.E.**, The Laws of Migration (Second Paper), Journal of the Royal Statistical Society, London, 1889, pp. 241-305
- 88 **Rodrigue Jean-Paul et.al.**, The Geography of Transport Systems, Third Edition, New York, by Routledge, 2013, pp. 416

- 89 **Schoorl J.**, Determinants of International Migration, Theoretical Approaches and Implications for Survey Research, Causes of International Migration, Luxemburg, 1995, pp. 3-14
- 90 **Schoorl J.**, The Analysis Generating International Migration. A Multi-Country Approach To Study the Determinants of Migration, Technical Symposium on International Migration and Development, Hague, 1998, pp. 32
- 91 **Skeldon R.**, Migration and Development: A Global Perspective, Routledge, London, 1998, pp. 264
- 92 **Skeldon R.**, *Migration Transitions Revisited: Their Continued Relevance for the Development of Migration Theory*. Population Space and Place, 2012, pp. 154-166.
- 93 **Vartikyan A.**, Modern Migrations: New Territories, New Borders, 21st Century: Information and Analytical Journal, 1(19), 2016, pp. 73-85
- 94 **Weber L.**, Demographic Change and Economic Growth, Berlin, 2010, pp. 334
- 95 **Zelinsky W.**, The Hypothesis of the Mobility Transition, Geographical Review, 1971, pp. 219-249
- 96 <http://armstat.am>
- 97 <http://armstatbank.am/>
- 98 <http://crrc.am/>
- 99 <http://unfpa.am/>
- 100 <http://smsmta.am/>